ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

(ՀՀ երրորդ նախագահ Ս. Ա. Սարգսյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը

Պատմության մեջ անհատի դերը՝ իբրև պատմաիմաստասիրական հիմնախնդիր, վաղուց զբաղեցրել է ուսումնասիրողների միտքը[1]: Հայաստանի անկախության տարիներին անհատի դերի ընկալումը, գնահատումը և վերաիմաստավորումը բազմաթիվ փոխակերպումների են ենթարկվել, ցավոք, հաճախ՝ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Քաղաքական մրցակիցներին և իրավանախորդ իշխանություններին քննադատելու միջոցով ինքնահաստատվելու ավանդույթը դարձել է հասարակական առաջընթացի ու հանրային համերաշխության հասնելու խոչընդոտներից մեկը: Նման պայմաններում Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ անհատի դերի վերաիմաստավորման փորձերը[2] միանշանակ չեն ընկալվել հանրության շրջանում, ոչ միայն սուբյեկտիվիզմի ու միակողմանիության մեծ չափաբաժնի, այլև քաղաքական ու աշխարհայացքային դիրքորոշումների և

---

[1] **Ալթունեան Գ.,** Անհատի և մասսայի դերը պատմութեան մէջ, «Արարատ» (պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի), Փետրուար, համար Բ, 1912, էջ 139-155: **Խտրյան Հ.**, Ժողովրդական մասսաների և անհատի դերը պատմության մեջ, Ե., ԵՊՀ հրատ., 1960, 52 էջ: ***Гринин Л.,*** Личность в истории: Эволюция взглядов // История и современность, 2010, № 2, с. 3-44, Он же, Лекция: Роль личности в истории: история и теория вопроса// Философия и общество, 2011, № 4, с. 175-193 (https://publications.hse.ru/pubs/share/folder/bqzoqkgvox/135162546.pdf). ***Он же***, Личность в истории: Современные подходы // История и современность, 2011, № 1, с. 3-40. ***Гущин А.,*** Роль личности в истории // Модели, системы, сети в экономике, технике, природе и обществе, 2013, № 3 (7), с. 233-237. ***Нехамкин В.***, Модели роли личности в истории: достижения и пределы // Социум и власть =Socium a. Power, Կ., 2018., № 2 (70), с. 24-33.

[2] **Այվազյան Հ.,** Հաղթանակած բանակի գեներալը, Ե., «Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», 2001 (առաջին հրատ.), Հաղթանակի և վերհուշի ճամփաներով, Ե., «Հայաստան» հանրագիտարանի գլխավոր խմբագրություն» 2006 (երկրորդ հրատ.), Հաղթելու արվեստը, (վավերագրական արձակ), Ե., Հեղինակ. հրատ., 2011 (երրորդ հրատ.): ***Гукасов И.***, Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андреасян, Ростов-на-Дону, 2001: **Ղուկասով Ի.,** Հայաստանի անվանի զորահրամանատար գեներալ-լեյտենանտ Հրաչ Համայակի Անդրեսյան, Ե., Ա. հ., 2017, 73 էջ: **Դևրիկյան Տ.,** Երկու պատերազմների լեգենդը. Քրիստափոր Իվանյան, Ե., 2003: **Հասրաթյան Ս.,** Գեներալ Իվանյան, Ս., 2004: **Սարգսյան Դ., Նազարյան Ռ.,** Մասիսն այն կողմից (կենսապատում), Ե., «Ոսկան Երևանցի», 2004: Զորավարը. Հրատ. ՀՀ ՊՆ տեղակալ, ՀՀ ԵԿՄ վարչ. նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մ. Գրիգորյանի ծննդյան 50-ամյակի առթիվ, խմբ.՝ Հ. Հակոբյան, Ե., «Հ. Խալաթյան և որդի» տպագրատուն, 2006: Զորավարը (գիրք երկրորդ. Լեգենդար զորավար Մ. Գրիգորյանի կյանքն ու գործունեությունը: Խմբ.՝ Հ. Հակոբյան, Ե., «Էդիթ Պրինտ», 2013, **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս.,** Հաղթանակներն ինչպես եղել են. ազդականչը 44, Ե., ՀՀՀ, 2008: , **Արզումանյան Ա.,** Մեր հերոսը, Ե., Ա.հ., 2006:

լարված տարակարծությունների պատճառով: Ուստի ռիսկային է պատմական գնահատականներ տալ ժամանակակիցներին նրանց կենսագործունեության և ընդհանրապես պատմական գործընթացների անավարտության պայմաններում: Մյուս կողմից, իրադարձությունների բազմաթիվ մասնակիցների ու ականատեսների աչալուրջ ու քննախույզ հայացքի ներքո պատմական դեպքերի ու դեմքերի վերաբերյալ հասարակական օբյեկտիվ կարծիք ձևավորելն ավելի արդյունավետ կարող է լինել, ինչը հիմք կծառայեր պատմագիտական ծանրակշիռ ու մնայուն գնահատականների համար: Եթե հայրենիքի համար զոհված հրամանատարների[3] ու ազատամարտիկների[4] կենսագրական բնույթի աշխատանքների նկատմամբ, ընդհանուր առմամբ, հանդուրժողական ու լոյալ վերաբերմունք կա, ապա քաղաքական ու ռազմական և այլ գործիչների մասին գրավոր խոսքի հանդեպ հանրությունը նրբանկատ ու զգայուն է:

Ս. Սարգսյանի ռազմական ու պետական գործունեության վերաիմաստավորումը պահանջված է վերջին տարիներին ՀՀ-ում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների ազդեցությամբ հիմնական դեպքերի ու առանցքային դեմքերի բնութագրումների առանձնահատկությունների սահմանման, սոցիալական առանձին խմբերի ու իշխանության թևերի հաջողություններն ու ձախողումներն առանձին գործիչների վերագրելու (անձնավորելու) կամ անհարկի ընդհանրացնելու բացասական հետևանքները երևակելու, ոչ հեռու անցյալի ու ժամանակակից գործիչների վերաբերյալ հասարակական օբյեկտիվ կարծիք ձևավորելու և այն համահայկական (հնարավորինս նաև՝ միջազգային) գիտական համակարգում ինտեգրելու անհրաժեշտությամբ:

Սույն ուսումնասիրության նպատակը յուրաքանչյուր պետության անվտանգության կարևոր բաղադրիչ համարվող և երկարամյա հակամարտության ու դրա կողմերից մեկի ագրեսիվ, ռազմատենչ

---

[3] **Բաղրյան Վ.,** Ավո (հուշապատում), Ս., «Մաշտոց», 1993 (առաջին հրատ.), Ս., «Դիզակ պլյուս», 2007 (երկրորդ հրատ.): **Քամալյան Ս.,** Ավոն մեր աչքերով, Ե., 1994: **Հասրաթյան Ս.**, Գաղափարի զինվորը, Ե., «Ամարաս», 2006: **Ծառուկյան Ա.**, Բարև, ինչպե՞ս եք, լա՞վ եք… (հուշեր Մոնթեի մասին), Ե., «Հեղին. հրատ.», 2007: **Մելքոնյան Մ., Գպրանյան-Մելքոնյան Ս.,** Ավո. Մոնթե Մելքոնյանի կյանքը և մահը: Անգլ. թարգմ.՝ Ա. Թոփչյան, Ե., «Հեղին. հրատ.», 2007: **Դանիելյան Ա.,** Բեկորը՝ ինչպիսին որ կար (հուշապատում), Ս.., «Ազատ Արցախ» հրատ., 2000: **Սարենց Մ**., Բեկոր, Ե., «Արցախականչ», 1993: **Մարտիկյան Գ.**, Սա Հայաստան է և՝ վերջ: Լեոնիդ Ազգալդյան, Ե., «Նոյյան Տապան», 2012: **Մարգարյան Ս.**, Ոգու լեգենդը(փաստագրություն)[Վլադիմիր Բալայանի մասին], Ս., «Դիզակ պլյուս», 2012 և այլն:

[4] Լույս են տեսել հարյուրավոր գրքեր ինչպես առանձին (անհատական), այնպես էլ համահավաք (տե՛ս **Հարությունյան Մ**., Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006 թթ., Ե., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2024, էջ 397-402):

քաղաքականության պայմաններում ՀՀ պետական համակարգում առավել ծանրակշիռ դարձած ռազմական շինարարության բնագավառում Ս. Սարգսյանի ունեցած ավանդի հիմնավորված ու փաստարկված վերաիմաստավորումն է:

Ուսումնասիրողն առաջադրել է հետևյալ հետազոտական խնդիրները.

- ներկայացնել Ս. Սարգսյանի գործունեությունը Արցախի պաշտպանական-անվտանգային հրատապ խնդիրների լուծման բնագավառում, որտեղ և դրսևորվեցին երբեմնի կուսակցական գործչի ընդունակությունները ինքնապաշտպանության կազմակերպման, նորաստեղծ զորային կառույցների ու պաշտպանության գործում ներգրավված ստորաբաժանումների համակողմանի մատակարարման, համալրման ու զորակոչի անցկացման և այլ հրատապ ձեռնարկումներում: Նա իր զինակիցների հետ առաջանցիկ է համարել ռազմական շինարարությունը, որպես՝ պետականակերտման գործընթացի գլխավոր ուղղություն՝ դրա առաջընթացը զուգորդելով Ադրբեջանի զինված ագրեսիային դիմագրավելու հրատապ գործողությունների ու միջոցառումների հետ: Մյուս կողմից, համապարփակ շրջափակման ենթարկված Արցախում բանակաշինության հաջողություններն ուղիղ համեմատական էին ռազմական գործողությունների արդյունքներին: Հակառակորդի նախահարձակմանը դիմագրավելու պայմաններում, բնականաբար, զինված ուժերի շինարարության հիմքում ընկած էր պատերազմող բանակ ստեղծելու հրամայականը: Ս. Սարգսյանի շուրջ ձևավորված թիմը նրա ղեկավարությամբ բանակաշինությունը տարել է նորաստեղծ պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովման հունով, որն անհրաժեշտ էր Արցախի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով ցանկացած ագրեսիա հետ մղելու համար:

- վերաիմաստավորել Ս. Սարգսյանի՝ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման առաջին շրջանը (1993-1995) և փաստարկված ներկայացնել նրա ավանդը բանակաշինության այդ դժվարին փուլում:

- վերաիմաստավորել Ս. Սարգսյանի՝ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման երկրորդ շրջանը (2000-2007) և հիմնավորապես ներկայացնել նրա անձնական ավանդը ՀՀ ԶՈՒ-ի զարգացման ու բարեփոխումների գործում:

- ներկայացնել ՀՀ 3-րդ նախագահի, ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարի գործունեությունը և ավանդը բանակաշինության հետագա

առաջընթացի, ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործման, ռազմատեխնիկական միջազգային համագործակցության և դաշնակցային հարաբերությունների զարգացման ու այլ ոլորտներում:

Ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները

Ուսումնասիրությունն ընդգրկում է հիմնականում 1991-2018 թվականները, սակայն առանձին դեպքերում անդրադարձներ կան 1988-1990 և 2018-ին հաջորդած տարիներին: Պատճառահետևանքային կապի մեջ քննության են առնված Արցախում, ՀՀ-ում, երբեմն նաև մերձավոր ու հեռավոր արտասահմանում, հայկական սփյուռքի բնակավայրերում ծավալված իրադարձությունները:

Ուսումնասիրվածության աստիճանը (գրականության և սկզբնաղբյուրների տեսություն)

Ի տարբերություն Ս. Սարգսյանի՝ նրա ենթակայությամբ կամ ստորադասությամբ գործած բազմաթիվ զինվորականներ ու քաղաքագետներ արդեն հրատարակել են ինքնակենսագրական, վարքագրական կամ հուշագրական բնույթի երկեր, որոնցում անդրադարձներ կան իրենց ձեռքբերումներին ու հաջողություններին ըստ ամենայնի նպաստած Գերագույն գլխավոր հրամանատարի վաստակին[5]:

Պետական[6], պաշտոնական[7], գերատեսչական[8], կուսակցական[9] և մի շարք այլ[10] կայքէջերում զետեղված պաշտոնական կենսագրականներում

---

[5] **Հարությունյան Կ.,** Գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան, Ե., Զանգակ, 2007, 295 էջ: **Քեռի (Սենիկ Պողոսյան),** Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը աշխարհի խաղաղության դրոշակակիր զինվոր է: Բաց նամակ Հայաստան-Սփյուռք բոլորին, Գ. 1, Ե., ՀԳՄ հրատ., 2010, 92 էջ: **Բախչինյան Ֆ.**, Հայ զորական ուժի ժառանգորդը. Սեյրան Մուշեղի Օհանյան, խմբ. Հ. Խաչատրյան, Ե., Գասպրինտ, 2014 (1-ին հրատ.), 120 էջ, Տիգրան Մեծ, 2015 (2-րդ հրատ.), 118 էջ: **Նույնի** Զորավարը [ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Մուշեղի Օհանյանի մասին], խմբ.՝ Հ. Խաչատրյան,Ե., Գասպրինտ, 2016, 136 էջ:

[6] https://www.president.am/hy/serzhsargsyan/ , https://www.gov.am/am/prime-ministers/info/77/

[7] https://www.president.am/hy/serzhsargsyan/

[8] ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության ծառայության և ներքին գործերի նախարարությունների պաշտոնական կայքերում նախկին ղեկավարների (այդ թվում՝ Ս. Սարգսյանի) կենսագրությունները հեռացվել են:

[9] http://www.hhk.am/hy/executive-body/bio/40/, https://www.serzhsargsyan.com/

[10] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%A5%D6%80%D5%AA_%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6,

տեղեկություններ կան նաև Ս. Սարգսյանի՝ որպես ռազմական գործչի ու կազմակերպչի սրընթաց կարիերայի մասին[11]:

ՀՀ 3-րդ նախագահի գործունեության առանձին դրվագների վերաբերյալ տեղեկություններ են տալիս ընթացիկ կամ իրադարձային հրատարակությունները[12]:

Ս. Սարգսյանի պետական գործունեության գաղափարական, աշխարհայացքային ակունքների մասին պատկերացում կազմելու հնարավորություն են ընձեռում առանձին ելույթների[13], հարցազրույցների, հրապարակումների ժողովածուների նյութերը[14]:

Նախընտրական մրցապայքարի ու հետընտրական գործընթացների ազդեցությամբ զանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ) հեղեղվել են Ս. Սարգսյանի քաղաքականությունը քննադատող ու պաշտպանող բազմապիսի հրապարակումներով, որոնց քննախույզ համադրումը հնարավորություն է տալիս տարբերել օբյեկտիվ, հավասարակշռված, փաստարկված գնահատականները սուբյեկտիվ կարծիքներից ու անվանարկող, ծայրահեղական ու անհիմն որակումներից: Հիմնականում հենց ԶԼՄ-ների իրարամերժ հրապարակումների

---

http://am.hayazg.info/%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%A5%D6%80%D5%AA_%D4%B1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%AB

11

12 Երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրից / Ս.Ա. Սարգսյան: Ե., Ա. հ., 2008, 6 էջ, Նախընտրական ծրագիր: ՀՀ նախագահի ընտրություններ – 2008 թ. / Ս.Ա. Սարգսյան: Ե., Ա. հ., 2008, 16 էջ, Սերժ Սարգսյան. դեպի ապահով Հայաստան... [Բուկլետ]: Նախընտրական ծրագիր / Հայաստանի հանրապետական կուսակցություն, Ե., «Սամարկ» ՍՊԸ, 2013, 30 էջ:

13 Բանակցային առաջնագծում: Սերժ Սարգսյանը՝ Արցախյան հակամարտության կարգավորման մասին (2008-2022) / [Նախագծի հեղինակ՝ Մ. Հարությունյան; Կազմողներ՝ Ք. Առաքելյան, Մ. Եսոյան; Լուսանկարիչ՝ Մ. Ծահիբազյան, Դ. Հակոբյան; Դիզայներ՝ Է. Պողոսյան, Սրբագրիչ՝ Ն. Հովակիմյան]., Ե., [Անտեսոր], 2023. 457 էջ, На передовой линии переговоров: Серж Саргсян об урегулировании Арцахского конфликта: [Сборник выступлений, посланий, интервью третьего президента Армении Сержа Саргсяна / Пер. с нем. и ред. Е. Курдиян, А. Оганян]. Ереван, [Newmag], 2023, 450 с.

14 Երևանի պետական համալսարան [Գիրք-ալբոմ] / առաջաբ.՝ Ս. Սարգսյան, Ա. Սիմոնյան, խմբ. խորհ.՝ Ա. Գրիգորյան, Հ. Ղուկասյան և ուրիշն: Երևանի պետական համալսարան, Ե., ԵՊՀ հրատ, 2009, 191 էջ, «Իմ Հայաստան» համահայկական փառատոն: 2016 հուլիս-սեպտեմբեր / Առաջաբան՝ Ս. Սարգսյան; ՀՀ Սփյուռքի նախարարություն, Ե., Ա. հ., 2016, 20 էջ: Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի ամենամյա ուղերձը ՌԴ Դաշնային ժողովին (1 դեկտեմբերի, 2016 թ.): Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության վեցերորդ գումարման Ազգային ժողովին (18 մայիսի, 2017թ.) = Ежегодное послание президента Российской Федерации Владимира Путина Федеральному Собранию Российской Федерации(1 декабря, 2016 г.). Послание президента республики Армения Сержа Саргсяна Национальному собранию республики Армения VI созыва / Կազմող՝ Ա. Ջաքարյան [Թարգմանիչ՝ Խ. Քարաուղլանյան], Ե., Տիգրան Մեծ, 2017, 148 էջ, ՍՈՒՐԲ Հայաստան=Armenia sacra /Կատալոգ / Առաջաբան՝ Ս. Սարգսյան, Գարեգին Բ, Հայաստանի պատմության թանգարան (12.09.2007-30.11.2007), Ե., 2007, 65 էջ և այլն:

հիման վրա լույս են տեսել մի շարք գրքեր[15], որոնց աղբյուրագիտական նշանակությունը տակավին դժվար է որոշարկել:

Հայաստանի զինված ուժերի շինարարության, այդ թվում՝ բարեփոխումների ու ռազմավարական զարգացման գործում ՀՀ ռազմական գերատեսչության ղեկավարի երկու ժամկետով պաշտոնավարման և որպես ՀՀ երրորդ նախագահ և ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար՝ գործունեության բերումով ունեցած ավանդի մասին են ինչպես նրա պաշտոնական ու հրապարակային ելույթները[16], զեկուցումները[17], ուղերձները[18], ԶԼՄ-ների հրապարակումները[19], այնպես էլ պաշտպանական-անվտանգային բնույթի ռազմավարականփաստաթղթերի, հայեցակարգերի[20], ծրագրերի ղեկավարման արդյունքում առաջացած վավերագրերը, հրամանները[21], կարգադրությունները և ԶՈՒ-ի ամենօրյա ղեկավարման ծառայողական գրագրությունները:

Այդ ամենի մասին լիակատար պատկերացում կազմելու համար կարևոր է բացահայտել բանակաշինության գործընթացի ակունքները, որոնք սկիզբ են առնում Արցախում ծավալված ազգային-ազատագրական պայքարի ալիքի վրա տեղում կազմավորված ռազմական կառույցից, որի ստեղծման ու կայացման գործում Ս. Սարգսյանի ավանդը նշանակալի է: Որպես Արցախում ռազմական

---

[15] **Ղազարյան Ա.,** Ներքաղաքական դաշտի հոգեբանական առանձնահատկությունները 2008թ. նախագահական ընտրությունների հենքին, Ե., ՌԱՀՀԿ, 2008, էջ 10-13, 18-20, 28: **Տեր-Պետրոսյան Լ.**, Վերադարձ. ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ. Կազմող՝ Ա. Ռ. Բանուչյան, առաջաբան՝ Ա. Բ. Սարգսյան, խմբագիր՝ Ա. Է. Ավագյան, Ե.: Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի արխիվ, 2009, էջ. 13,21,24,31,36,41-43,55,64,66,78,81,84,87,92-94,102,107,109,114,119,120,122-127,131, 134,137,145,152,193-196,205,209,210,219-221,223,224,236,239,242,255-259,264,265,267,273,275-277 ,287-290, 292-298,300,301,305,307,308,311-313,316-319,321,322,338,353,359,360,363,364 և այլն, **Մելքոնյան Մ.,** Սխալ գնացքը. գրառումներ հետհեղափոխական Հայաստանի մասին (1990-ականներից մինչև այսօր), «Զանգակ» հրատ., 2021, էջ 135-138, 141, 212 և այլն:

[16] Պարբերաբար հրապարակվում էին ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» (1993թ. – առ այսօր) և Արցախի Հանրապետության ՊՆ «Մարտիկ» (1993-2020 թթ.) պաշտոնաթերթերում:

[17] **Սարգսյան Ս.,** Բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավականն է, Ե., «Ամարաս», 2002, 96 էջ:

[18] Պատեհաժամորեն հրապարակվում ու հանրահռչակվում էին տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ներում:

[19] **Սարգսյան Ս.**, Ելույթներ, հարցազրույցներ (ծննդյան 50-ամյակի առթիվ), կազմ.՝ Ս. Ծահսուվարյան, խմբ.՝ Մ. Դավոյան, Ե., ՀՀ ՊՆ, 2004, 293 էջ:

[20] Դրանք ժամանակին հրապարակվել են ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (2016թ. հունվարի 28-ից՝ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի) «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, դրա «Աշխատանքային տետրեր» գիտակիրառական հավելվածի ռազմավարական անվտանգային-քաղաքագիտական առանձին հետազոտություններում (կոլեկտիվ մենագրություններում), միջազգային ռազմավարական ֆորումների նյութերում, մենագրական հետազոտություններում և այլն:

[21] ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների նորմատիվ բնույթի հրամաններ (1992-2001թթ.), կազմ.՝ ՀՀ ՊՆ վարչական ապարատի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Փ. Մանուկյան, Ե., «Հենակետ» ՓԲԸ, 2002, 683 էջ:

շինարարության գործընթացի մասնակից և ուսումնասիրող՝ հնարավորինս ներկայացրել ենք ինչպես դրա հիմնական փուլերն ու առանձնահատկությունները, այնպես էլ առանձին գործիչների, այդ թվում՝ Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Ս. Սարգսյանի ունեցած ներդրումը[22]:

Ժամանակին Արցախի Հանրապետության կառավարության, ԱԺ ընթացիկ, պետական, ՊԲ (ՊՆ) արխիվների ֆոնդերից համապատասխան տեղեկություններ ենք բանաքաղել և օգտագործել մեր աշխատություններում, որոնց հավելվածներում հրապարակել ենք նաև ամբողջական վավերագրեր, որոնք, փաստորեն, սկզբնաղբյուրային նշանակություն են ձեռք բերել 2023թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետության ժողովրդի բռնի տեղահանության հետևանքով տեղի արխիվային հարուստ ժառանգության ոչնչացումից հետո:

Ընդհանրացնելով թեմայի պատմագրության սույն համառոտ տեսությունը՝ նպատակահարմար է արձանագրել, որ հրապարակի վրա եղած բազմաբնույթ նյութը և տակավին փակի տակ պահվող արխիվային վավերագրերը համակարգելու, վերլուծելու և ընդհանրացնելու միջոցով ՀՀ զինված ուժերի կայացման ու զարգացման գործում առանձին գործիչների, այդ թվում՝ Ս. Սարգսյանի ավանդը գիտականորեն վերաիմաստավորելու անհրաժեշտություն կա, ինչը պայմանավորված է ոչ հեռու անցյալը համակողմանի ու անաչառ ներկայացնելու, պետական, քաղաքական ու ռազմական գործիչների վաստակն ըստ արժանվույն գնահատելու և պետականակերտման գործընթացները համապարփակ դիտարկելու, հասկանալու հրամայականով:

Աղբյուրագիտական հիմքը

Ուսումնասիրության աղբյուրագիտական ատաղձը կազմել են պաշտոնական հրատարակությունները, ՁԼՄ-ների, համացանցի թվայնացված պաշարները, թեմային առնչվող գրականությունը, ինչպես նաև «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվի փրկված վավերագրերը: Առանձին հարցերի

---

[22] **Հարությունյան Մ.**, Արցախի ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», N 1, Ս., 2000, էջ 78-88: **Նույնի** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5 (59-70), 2011, Ծ., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, 294 էջ, **Նույնի** Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006թթ., Ծ., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2017, 416 էջ (1-ին հրատ.), Ե., 2024, 416 էջ (վերահրատ.): **Նույնի** Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Ծ.-Ե., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2021, 352 էջ և այլն:

պատասխաններ փորձել ենք գտնել ժամանակակից գործիչների հետ հարցազրույցների կամ խորհրդատվությունների միջոցով:

ՌԱԶՄԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Սերժ Սարգսյանը ԼՂԻՄ այն կուսակցականներից է, որը Արցախյան շարժման 1988 թ. քաղաքական վերազարթոնքի փուլում առանց երկմտելու կանգնեց պայքարի դրոշը բարձրացրած ժողովրդական զանգվածների առաջին շարքերում և փորձեց իր հնարավորությունները, փորձն ու գիտելիքներն ի նպաստ բերել ինքնավար մարզի սահմաններում՝ իր բնօրրանում ապրող հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիակատար իրացմանը:

Այդ մասին են վկայում Ս. Սարգսյանի նախաձեռնողական ներգրավումը և արդյունավետ գործունեությունը ժողովրդավարական և ազգային-ազատագրական պայքարի նորաստեղծ գրեթե բոլոր ղեկավար մարմիններում: Մասնավորապես, Ս. Սարգսյանը 1988թ. մարտի 2-ին ժողովրդի բազմահազարանոց հավաքում ընտրվել է «Կռունկ» կոմիտեի անդամ, որտեղ ընդգրկվել է Քաղաքական հարցերի բաժնի կազմում և Ռ. Քոչարյանի, Մ. Միրզոյանի, Վ. Աթաջանյանի, Գ. Պետրոսյանի և Ծ. Հարությունյանի հետ ջանքեր

գործադրել ստեղծված բարդ իրավիճակում ճիշտ քայլերի մշակման ուղղությամբ: Իրավաբանորեն լինելով հասարակական-քաղաքական կազմակերպություն՝ «Կռունկ» կոմիտեն Հայկական ԽՍՀ-ում գործող «Ղարաբաղ» կոմիտեի հետ համընթաց կազմակերպել է ԼՂԻՄ հայության ազատագրական պայքարը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմից ինքնավար մարզը դուրս բերելու և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու նպատակով: 1988 թվականի մարտի 24-ին «Կռունկ» կոմիտեն օրենքից դուրս հայտարարելուց, իսկ նրա անդամների հետապնդումների մեկնարկից հետո այն անցել է ընդհատակ, ապա 1988 թվականի հուլիսի սկզբներին վերջնականապես տրոհվել է գործունեությունը վերսկսած տնօրենների խորհրդի և նորաստեղծ «Միացում» շարժմանը[23]:

Հերթական հասարակական կազմակերպության քաղաքային հիմնադիր համաժողովը Ղարմետաքսկոմբինատի դահլիճում 1988թ. հուլիսի 8-ին բացեց Ս. Սարգսյանը, որտեղ 11 հոգի ընտրվեցին խորհրդի կազմում, այդ թվում նախագահ՝ Ռ. Քոչարյանը, քարտուղար՝ Հ. Գրիգորյանը[24], իսկ նախագահի տեղակալ՝ Ս. Սարգսյանը[25]: 1988-1989 թվականներին՝ ԼՂ մարզգործկոմի նախագահ, 1989-1990 թվականներին՝ Կառավարման հատուկ կոմիտեի անդամ Սեմյոն Բաբայանի գնահատմամբ՝ թեև «Միացում» շարժումը հետագայում ստեղծված իր շրջանային կազմակերպությունների հետ «մեծ ավանդ է ունեցել Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորմանը հասնելու գործում, բայց չկարողացավ գլխավորել շարժումը, և գործադուլը շարունակվեց, թեև հանրահավաքների ժամանակ բազմիցս կոչեր են հնչել այն դադարեցնելու մասին»[26]:

Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարների խրախուսմամբ ծայրահեղական ուժերը ԼՂԻՄ հայ ժողովրդի նկատմամբ հաշվեհարդար տեսնելու սպառնալիքների ու անօրինական գործողությունների, Հայկական ԽՍՀ-ի և ինքնավար մարզի խստացված շրջափակման հետևանքով լարված իրավիճակում նոր թափ էր ստանում հանրահավաքային ու գործադուլային պայքարը: 1988թ. սեպտեմբերի 8-ին Ստեփանակերտում հրավիրված բազմահազարանոց հանրահավաքում շրջափակումը վերացնելու պահանջով ելույթ ունեցան Սերժ Սարգսյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Համլետ Գրիգորյանը, Էռնեստ

---

[23] **Քոչարյան Ռ.,** Կյանք և ազատություն. Հայաստանի և Ղարաբաղի էքս-նախագահի ինքնակենսագրությունը, Ե.,, Հեղ. հրատ., 2019, էջ 85-86:

[24] ***Бабаян С.,*** Народное движение в Нагорном Карабахе за воссоединение с Арменией (Страницы истории 1987–1991 гг.). М.: Волшебный фонарь, 2019, с. 71.

[25] **Քոչարյան Ռ.,** Նշվ. գիրքը, էջ 86:

[26] ***Бабаян С.,*** Ук. книга, с. 72.

Հայրապետյանը, Ավետիս Գրիգորյանը և ուրիշներ: Այդ նույն հարցը Մոսկվայում ԽՄԿԿ կենտկոմի իրավական և վարչական հարցերով քարտուղար Անատոլի Լուկյանովի մոտ ընդունելության ժամանակ զարգացրել են ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ԳԽ պատգամավորներ Բորիս Դադամյանը, Հենրիխ Պողոսյանը և Սեմյոն Բաբայանը[27]:

1990թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին անցկացվեցին Հայաստանի Գերագույն խորհրդի ժողովրդավարական, այլընտրանքային ընտրություններ, որոնց մասնակցեց նաև Արցախի հայ բնակչությունը: Ընտրական պայքարը ծավալվել էր հիմնականում ՀՀԾ-ի և ՀԿԿ-ի միջև: Արցախյան շարժման ալիքի վրա ՀՀԾ-ի առաջադրած և պաշտպանած թեկնածուների մեծամասնությունը, այդ թվում նաև Արցախյան շարժման Հայաստանի կոմիտեի գրեթե բոլոր անդամները ընտրվեցին հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր[28]: ԼՂԻՄ 11 ընտրատարածքներից Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորների մանդատներ են ստացել Իշխան Ավետիսյանը, Սլավիկ Առուշանյանը, Վահրամ Աթանեսյանը, Գրիշա Բաղյանը, Մանֆրեդ Բախշյանը, Համլետ Գրիգորյանը, Ռազմիկ Դանիելյանը, Էդուարդ Ղուկասյանը, Վիգեն Ծիրինյանը, Գեորգի Պետրոսյանը, Սերժ Սարգսյանը[29]:

Արցախյան շարժման ընդհատակյա ղեկավարությունը, փորձելով կապ ստեղծել ԼՂԻՄ-ում արտակարգ դրության խստակարգ իրականացնող ԽՍՀՄ ուժային կառույցների հետ, հանձնարարել է դեռևս կուսակցական աշխատանքի բերումով քաղաքական դաշտում երևացող գործիչներին փոխըմռնման եզրեր գտնել նրանց լոյալ ներկայացուցիչների հետ՝ ի շահ շարժման հետագա ծավալման:

Արցախում ինքնապաշտպանության կազմակերպման գործում նախանձախնդիր գործիչների, այդ թվում՝ Ս. Սարգսյանի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել 1990-1991թթ. ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ-հետաքննչական խմբի շտաբի պետ Վիկտոր Կրիվոպուսկովը իր օրագրային գրառումների հիման վրա կազմած հուշագրությունում:

Ներկայացնելով գաղտնի հանդիպման մասնակիցներին՝ Վ. Կրիվոպուսկովը գրել է. «Եթե հավատալու լինենք այն օպերատիվ նյութերին ու բնութագրին, որ տվել են նրանց Վ. Պ. Պոլյանիչկոն ու գեներալ Վ. Ն. Սաֆոնովը, երեքն էլ (Ռ. Քոչարյան, Ս. Սարգսյան և Ա. Ղուկասյան) առնչվում էին Ղարաբաղյան շարժման

[27] ***Бабаян С.,*** Ук. книга, с. 77.
[28] Հայոց պատմություն, հ. 4, գիրք II: նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., խմբագրակազմ՝ Հ. Հարությունյան և ուրիշ., էջ 205:
[29] ***Бабаян С.,*** Ук. книга, с. 100-101.

ամենաագրեսիվ ու անհաշտ մասին… Նրանք համարվում էին ազգամիջյան իրարանցման գրեթե գլխավոր դեմքերը»[30]:

ՆԳՆ ռուս սպան, հիշելով, թե ինչպես է հատկապես Սերժ Սարգսյանը այդ երեկո խորհուրդ տվել այցելելու ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների կազմալուծված Մարզկոմիտեի գործկոմ, տեսնելու, թե ինչպիսի միջոցներով, ինչ պայմաններում է այդ գործադիր կոմիտեն հարկադրված աշխատում լուծել Լեռնային Ղարաբաղի բնակչության առօրյա հարցերը, նրան բնութագրել է հետևյալ կերպ. «Սերժ Սարգսյանն առանձնանում էր զարմանալի բարյացակամությամբ և հազվադեպ հաջողությամբ լրացնում էր Ռոբերտին: Նա պատմում էր ղարաբաղյան իրադրության պատմական զարգացման մասին, ըստ որում, ինչպես ինձ թվաց, միանգամայն օբյեկտիվ դիրքերից: Հիշում եմ, ես այն ժամանակ մտածեցի, որ դա հաստատ հետևանք է երկար ժամանակ Արկադի Իվանովիչ Վոլսկու մոտ խորհրդական աշխատելուն»[31]:

ԼՂԻՄ իշխանության տեղական մարմինների գործունեության դադարեցումը զգալիորեն բարդացնում էր կազմակերպական հրատապ խնդիրների լուծումը, այդ թվում՝ ինքնապաշտպանության նվազագույն պահանջների բավարարումը: Ընդհատակում գործող Ծարժման ղեկավարներն ընդամենը լուծում էին ինքնապաշտպանության հետ կապված կոնկրետ հարցեր, որոնք ծագում էին իրադրության հաճախակի փոփոխման ընթացքում: Նման պայմաններում, տեղական իշխանության ներկայացուցիչները, բնականաբար, հանդես էին բերում ստեղծված կացությունից ելքի ուղիներ գտնելու նախաձեռնություն: 1991թ. հունիսի առաջին օրերին ԼՂԻՄ գործկոմի շենքում հավաքված ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի մի խումբ անդամներ ու մարզի ղեկավար աշխատողներ, երկար քննարկումներից հետո, պայմանավորվել են համախմբել բոլոր ուժերն ու միջոցները մարզի խաղաղ բնակչության անվտանգության խնդիրը լուծելու համար[32]:

Սակայն դա բավական չէր, ուստի հարկ էր լրացուցիչ միջոցներ ձեռնարկել: Դրանցից հատկանշելի է մարզի ղեկավար աշխատողների հերթական նախաձեռնությունը: Մարզգործկոմում հավաքված ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ Ստեփանակերտում ու շրջաններում հայտնի

---

[30] **Կրիվոպուսկով Վ.,** Խռովահույզ Ղարաբաղ: Ռուս սպայի օրագրից, Երրորդ հրատարակություն. Ե., Ամարաս, 2013, էջ 47:
[31] Նույն տեղում:
[32] ***Арутюнян В.,*** События в Нагорном Карабахе. Хроника, часть IV. Январь 1991 г. - январь 1993 г., Е., Из-во «Гитутюн» НАН РА, 1994, с. 25-26.

աշխատողներն ու ղեկավարները քննարկել են մարզում ստեղծված աղետալի իրավիճակը: Քննարկումների արդյունքում ակտիվը հանգել է այն եզրակացությանը, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ է ձեռնարկել կազմակերպական շտապ միջոցներ և ամրապնդել մարզի ղեկավարության դիրքերը: Դա բխում էր ինքնապաշտպանության ուղղությամբ անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու հրամայականից: Այդ առումով, ինչպես ընդունված էր, անմիջապես տեսանելի ձեռնարկումը կադրային փոփոխությունն էր: 1991թ. հունիսի 11-ին ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործկոմի ընդլայնված նիստը նախագահի պարտականությունները դրել է նրա առաջին տեղակալ Լեոնարդ Պետրոսյանի վրա[33], որը գործկոմի անդամների հետ ձեռնամուխ է եղել ռազմական ու տնտեսական ծանր քաոսից մարզը դուրս բերելու միջոցառումների մշակմանն ու կազմակերպմանը:

Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների նախահարձակ գործողությունների հետևանքով ստեղծված ծանր կացությունից ինքնավար մարզը դուրս բերելու ուղիների որոնման շրջանակներում, նույն թվականի հունիսի 19-ին Լեռնային Ղարաբաղի ժողպատգամավորների ընդլայնված նիստում մշակվել է Արցախի հայ ազգաբնակչության գոյատևման ծրագիր: Դա անհրաժեշտություն էր և շատ կարևոր նախաձեռնություն, քանզի ապրիլ-մայիսյան իրադարձությունները ցույց էին տվել, որ մարզային և տեղական իշխանությունների կազմալուծման պատճառով, ժողովուրդը միանգամայն պատրաստ չէր զինված դիմադրություն ցույց տալու ԽՍՀՄ ՁՈՒ և ՆԳՆ զորքերի աջակցությամբ ԱդրԽՍՀ իշխանությունների իրականացվող լայնածավալ ագրեսիային: Ծրագրում նախատեսվել է կարգավորել մարզի քաղաքական ու տնտեսական վիճակը և ձեռնարկել տխրահռչակ «Օղակ» ռազմագործողության հետագա ծավալումը կասեցնելու միջոցներ: Դրա համար, նախ և առաջ, անհրաժեշտ է համարվել ԽՍՀՄ ղեկավարության միջոցով հասնել մարզգործկոմի և ժողպատգամավորների մարզխորհրդի վերականգնմանը, անցկացնել Մարզխորհրդի ժողպատգամավորների ընտրություն, ժողովրդի ցանկությունների հաշվառմամբ, մարզի նորընտիր ղեկավարության ուժերով մշակել Արցախի գոյատևման իրատեսական ծրագիր, հավուր պատշաճի նախապատրաստվել զինված ինքնապաշտպանության:

---

[33] Արցախի Հանրապետության պետական արխիվ (այսուհետև՝ ԱՀՊԱ), ֆ. 1, ց. 2, պ. մ. 317, գ. 28, թ. 8:

1991թ. հուլիսի վերջին ԼՂԻՄ Ազգային խորհրդի «Պ» (այսինքն՝ պաշտպանություն) ժամանակավոր խմբի հիման վրա ստեղծվել է ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե, ինչը թելադրված էր ադրբեջանական բանակի ճնշմանն ու հարձակումներին դիմագրավելու համար մարզի պաշտպանությունը նոր մակարդակով կազմակերպելու անհրաժեշտությամբ: Այդ իսկ նպատակով ստեղծվել է ինքնապաշտպանության ուժերի շտաբ, որի կազմում ընդգրկվել են Վ. Բալայանը, Գ. Պետրոսյանը, Մ. Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Ռ. Քոչարյանը և այլ անձինք[34]: Նորաստեղծ շտաբը սկզբում կազմավորել ու զինել է արագ հակազդման ջոկատներ: Մարզի բոլոր շրջաններում և Ստեփանակերտում դրանց թվաքանակը օրըստօրե աճել է, քանի որ ցանկացողները շատ էին: Մարզի գրեթե բոլոր հասուն տղամարդիկ ինքնակամ, յուրահատուկ խանդավառությամբ ցանկություն էին հայտնում կանգնելու հայրենիքի, իրենց ընտանիքների, երեխաների պաշտպանության դիրքերում: Սակայն ինքնապաշտպանության համար անհրաժեշտ զենքն ու սպառազինությունն անբավարար էին: Գնալով ավելի ու ավելի շատ մարդիկ էին հանգում այն եզրակացությանը, որ Արցախի ինքնապաշտպանության հարաճուն պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է կազմավորել կանոնավոր բանակ: Դրա համար նպաստավոր հիմքեր են ստեղծել Ծահումյանի շրջանում և Արցախի այլ վայրերում ընթացող պաշտպանական համառ մարտերը, որոնց բովում ապագա հրամանատարները թրծվում էին, ձեռք բերում համապատասխան մարտավարական փորձ: Զուգահեռաբար սկսել է ձևավորվել ռազմաքաղաքական իրադրությանը համապատասխանող ռազմավարություն, ինչն էլ, իր հերթին, թելադրել է համապատասխան քաղաքականություն: Ուստի Ս. Սարգսյանը և ժողովրդի անվտանգության ապահովման պատասխանատվություն ստանձնած նրա գործընկերները պատրաստակամորեն հաղթահարել են ինքնապաշտպանական ջոկատները կանոնավոր բանակի վերակազմավորվելու երկար ու ծանր փորձություններով առլեցուն ճանապարհը: Հատկանշելի է, որ խորհրդային ու կուսակցական տեղական մարմինների ձևական առկայության պայմաններում հաջորդաբար մեծ պատասխանատվություն ու ղեկավարելու ծանր բեռ են ստանձնել ընդհատակյա կազմակերպությունները՝ «Կռունկ», «Միացում», «Ղարաբաղ» հայաստանյան կոմիտեի Արցախի բաժանմունք, ՀՅԴ «Անտառ» կոմիտե (1994-ից՝ Արցախի մեկուսի կենտրոնական կոմիտե), ժողովրդական

[34] ***Арутюнян В.,*** События в Нагорном Карабахе. Хроника, часть IV., с. 40-41.

ճակատ, «Կոորդինացիոն գաղտնի խորհուրդ», «Ազգային խորհուրդ» և այլն, որոնք պատեհաժամորեն փորձել են դժվարին պահերին ստանձնել ժողովրդի ղեկավարման գործը, անհրաժեշտության դեպքում զբաղեցնել ԼՂԻՄ օրինական իշխանությունների թափուր տեղը: Անմիջապես նրանց և ինքնապաշտպանության հարցերով զբաղվող մարմինների կամ պատասխանատու անձանց նախաձեռնությամբ և ղեկավարությամբ, Արցախում զինված ինքնապաշտպանության կազմակերպման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ճանապարհին, մի շարք կարևոր քայլեր են ձեռնարկվել: Նախ՝ ԽՍՀՄ-ում առաջացած քաղաքական ճգնաժամի պայմաններում, երբեք էլ Ադրբեջանի կազմկոմիտեն չընդունած Արցախի հայ ազգաբնակչությունը վերականգնել է օրինական իշխանությունը՝ հանձին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի[35]:

Իշխանության վակուումի պայմաններում Արցախում այն լրացնելու քաղաքական հայտ էին ներկայացրել ՀՅԴ, «Ժողովրդական ճակատ», «Միացում» և «Հայ երիտասարդության ճակատ» (այնուհետև՝ Հայ ազգայնականության ճակատ) և այլ կազմակերպություններ: 1991 թվականին ՀՀԾ-ի հովանավորությունը վայելող «Ժողովրդական ճակատ», «Միացում» կազմակերպությունները ագրեսիվ հակառակորդի զսպման նպատակով կազմակերպեցին տեղային նշանակության ռազմական օպերացիաներ Հադրութի և Մարտունու, իսկ ՀՅԴ ընդհատակյա մարտական շտաբը՝ Ասկերանի, Մարտակերտի և Շահումյանի շրջաններում: Այդ գործողությունները հետագայում համաձայնեցնելու և ընդհանուր հրամանատարության տակ դնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ պաշտպանության պետական կոմիտեից Ա. Տեր-Թադևոսյանի Արցախ գործուղումը, որին հաջողվեց մի շարք հաջող օպերացիաների մշակման ու իրականացման շնորհիվ ձեռք բերել վստահություն մարտական ջոկատների և նրանց հրամանատարների շրջանում և 1992թ. մարտի 4-ին պաշտոնապես նշանակվեց ԻՊՈՒ հրամանատար: Հայրենիքի պաշտպանության գաղափարի

[35] Տե՛ս ԱՀՊԱ, ֆ. 1, ց 2, պ.մ. 293, կ. 27, թ. 6 («Ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեության վերսկսման մասին» ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 10-րդ նստաշրջանի դեռևս 1990թ. մարտի 27-ին ընդունած որոշումը): ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի լիազորությունների դադարեցումը հակասահմանադրական էր (տե՛ս Постановление Комитета Конституционного надзора СССР: См.: ***Манасян А.,*** Карабахский конфликт. Ракурсы правового подхода, Е., «Амарас», 1998, док. N 264, с. 107-111, ***Аветисян Г., Даниелян Э., Мелконян А.,*** История Армении, Е.,1999, с. 264), հետևաբար նրա կողմից սեպտեմբերի 2-ին ընդունված որոշումը այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենքների համաձայն, միանգամայն օրինական էր (տե՛ս **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ», գիրք 5, էջ 39-46):

գերակայությունը գիտակցող, բայց տարբեր քաղաքական հայացքների տեր ազատամարտիկների համախմբման գործում կարևոր դեր խաղաց նաև մի քանի շաբաթ անց ստեղծված Ինքնապաշտպանության կոմիտեի նպատակասլաց գործունեությունը:

Արցախյան շարժման ակտիվիստներից Մուրադ Պետրոսյանը[36], որը 1990-1991թթ. Արցախի ինքնապաշտպանական ուժերի շտաբի պետն էր, իր հուշերի գրքում Սերժ Սարգսյանի ռազմական կարիերայի սկիզբը այսպես է ներկայացրել. «Բաբայանի ձերբակալությունից[37] հետո կապավորները հաղորդեցին, որ Ռ. Քոչարյանն ու Ս. Սարգսյանը ցանկանում են հանդիպել ինձ: Այն ժամանակ նրանք արդեն լիովին կողմնորոշվել էին դեպի ՀՀԾ-ն, որը մինչ այդ իշխանության գլուխ էր անցել Հայկական ԽՍՀ-ում: Դաշուշեն գյուղի մոտ հանդիպմանը նրանք ինձ հայտնեցին ստեղծված իրավիճակում հետագա արդյունավետ կիրառման նպատակով զինված խմբերի վերաբերյալ բոլոր տվյալները իրենց փոխանցելու նպատակահարմարության մասին»: Գտնելով, որ իրականում հետապնդումներից թաքնվելով գյուղում, ի վիճակի չէր ինքնապաշտպանության գործերը օպերատիվորեն համակարգել, այդ գործառույթը Մ. Պետրոսյանը սիրահոժար փոխանցել է Ս. Սարգսյանին: Ավելին, երբ ազատամարտիկները մոտենում էին հանձնարարություններ ստանալու, Մ. Պետրոսյանը նրանց ասում էր. «Դիմեք Սերժ Սարգսյանին»: Իսկ զարմանք արտահայտողներին նա բացատրում էր, որ տարբերություն չկա՝ ինձ եք դիմում, թե Սերժ Սարգսյանին: Ըստ Մ. Պետրոսյանի՝ Սերժ Սարգսյանի կազմակերպական ջիղի զարգացման վրա դրականորեն են ազդել կոմերիտմիության և կոմկուսի բարձր մարմիններում, ընդհուպ մինչև Հ. Պողոսյանի Մոսկվա մեկնելը, աշխատելու փորձը[38]:

1991թ. օգոստոսի սկզբներին ԽՍՀՄ ՆԳՆ և Ադրբեջանի ՄՀՆՁ զորամասերը շրջապատեցին Մարտակերտի շրջանի Հաթերք և Վերին Հոռաթաղ գյուղերը, ապա պատանդ վերցրին ինքնապաշտպանության ջոկատի 15 անդամների:

---

[36] 1988թ. օգոստոսին Վազգեն Մանուկյանը Մուրադ Պետրոսյանին առաջարկեց լինել «Ղարաբաղ» կոմիտեի Արցախի բաժանմունքի ղեկավարը: 1988թ. սեպտեմբերի 20-ից հետո վերջինս համաձայնեց և պաշտոնապես նշանակվեց/ընտրվեց այդ պաշտոնում («Ազատ Արցախ», 21 դեկտեմբեր 2007թ., № 141, էջ 7):

[37] Սամվել Բաբայանը ձեռբակալվել է 1991թ. հունիսի 1-ին և վեց ամիս կալանավորվել Ծուշիի ու Բաքվի բանտերում (**Խաչատրյան Հ., Ղազարյան Գ, Մարգարյան Ս.,** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդակաչ 44, էջ 22):

[38] Петросян М., Нет пророка в своем отечестве [Психологические очерки о нашем времени], С., «Полиграф», 2010, с. 77-78. **Պետրոսյան Մ.**, Գնա մեռի՛ր, արի սիրեմ. Մեր ժամանակի մասին հոգեբանական ակնարկներ, «Մարդիկ, իրադարձություններ, խոհեր» մատենաշարից, գիրք Ա (1988-1997), թարգմ.՝ Հ. Վանյան, Ս., «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2012, էջ 91-92:

Պատասխան գործողությամբ, նույն ջոկատի՝ ազատության մեջ մնացած մարտիկները, օգոստոսի 13-ին շրջապատեցին ու պատանդ վերցրին ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի պարեկախմբի 33 սպայի և զինվորի, առգրավեցին մեկ զրահափոխադրիչ, մեկ նռնականետ և 29 ավտոմատ[39]՝ պահանջ դնելով ազատ արձակել հայ պատանդներին: Վերին Հոռաթաղի կանայք և ջոկատի մարտիկներն իրենց հերթին զինաթափեցին 13 զինվորականի, որոնք ազատ արձակվեցին օգոստոսի 23-ին՝ առանց մարտական զենքերի: Թե՛ Հաթերքում և թե՛ Վերին Հոռաթաղում հիմնականում երևում էին պատանդառվածների կանայք ու մայրերը, իսկ ինքնապաշտպանության ջոկատների մարտիկները և օգնության հասած կամավորականները անտառներում քողարկված, կազմ ու պատրաստ սպասում էին դեպքերի հետագա զարգացմանը: Հաթերքում օգոստոսի 20-ին կատարվեց պատանդների փոխանակություն, վերացվեց Հաթերքի պաշարումը: Խորհրդային Միությունում 1991թ. օգոստոսի 19-21-ի հեղաշրջման համապատկերում մեծ աղմուկ հանած այս ինքնաբուխ ձեռնարկումը սեփական ուժերի նկատմամբ հավատի վերականգնման, կազմակերպվող ինքնապաշտպանական ուժերի առնականացման մի վկայություն էր:

Այս դեպքերին անդրադարձած պատմաբան Աշոտ Սարգսյանը գրել է. «Միջադեպը կարգավորելու համար Հաթերք էին եկել ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավորներ, Հայաստանի ԳԽ-ի պատգամավորներ Վազգեն Սարգսյանը և Սերժիկ Սարգսյանը, սակայն որևէ հաջողության չէին հասել: Այժմ դա կարող էր չափազանց վտանգավոր առիթ հանդիսանալ, բայց հարթվեց հենց օգոստոսի 19-ին՝ այդ նպատակով այստեղ ժամանած ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանի ջանքերով»[40]:

Ժամանակին հրապարակել ենք Հաթերքի բնակիչ, ականատես Գուրգեն Նարիմանյանի օրագիրը, որտեղ մի քանի էջ հատկացված է վերոհիշյալ դեպքերին: Նպատակահարմար ենք գտնում մեջբերել մի քանի հատվածներ այդ օրագրից: «Իրիկնադեմին գյուղում հայտնվում է Մարտակերտի կուսշրջկոմի առաջին քարտուղար, միաժամանակ շրջանային խորհրդի նախագահ Վահան Գաբրիելյանը: Գյուղ են ժամանում նաև մարզգործկոմի նախագահի պաշտոնակատար Լեոնարդ Պետրոսյանը, Մարտակերտի զինվորական պարետ

[39] «Արցախ» (հանդես), № 1, 1992, էջ 17:
[40] **Սարգսյան Ա.,** Հայաստանի անկախության վերականգնումը. 1990-1991, Ե., Անտարես, 2020, էջ 401:

Վասիլի Ժուկովը, մարզային կուսկազմակերպության պատասխանատու աշխատող Սերժ Սարգսյանը»[41]:

Այնուհետև նկարագրելով հուզված կանանց բացասական ընդունելությունը և հյուրերին ճամփելու մանրամասները՝ ականատեսը վկայել է. «Սերժ Սարգսյանը մնում է գյուղում, զրույցի բռնվում մարդկանց հետ: …Ուշ երեկոյան վարորդ Լ. Գրիգորյանը գաղտնի, կես ճանապարհը ոտքով, մյուս կեսը մեքենայով, Սարգսյանին հասցնում է անտառի բնակիչների (փոխանակման նպատակով պատանդ վերցված զինծառայողների.-Մ.Հ.) մոտ: Նա անձամբ է տեսնում ու զրուցում զինվորների հետ, համոզվում, որ զինվորների ապրուստի մասին մտահոգվելու կարիք չկա: Գյուղացիները նպատակադրված չեն հեռանալու հրապարակից (Հաթերք գյուղի.-Մ.Հ.), Սարգսյանը պարտավորվում է ստեղծված իրավիճակի մասին առնվազը ժամը մեկ անգամ իրազեկ դարձնել բնակչությանը»[42]:

Ժամ առ ժամ պայթյունավտանգ դարձող իրավիճակի մասին վկայելով, ականատեսը նկարագրել է լարվածությունը թուլացնելու, կրքերը հանդարտեցնելու Ս. Սարգսյանի ջանքերը. «Լույս 15-ի գիշերը գյուղը շարունակում է մնալ անհանգիստ: Չէր դադարում թաղամասերում շրջող զրահամեքենաների դղրդոցը: Այսքանն արվում էր բնակչությանը սարսափի մեջ պահելու, իբր գերված զինվորականներին վերադարձնելու, մարդկանց խեղճացնելու նպատակով: Ավելանում էին զինվորական ստորաբաժանումների կուտակումները գյուղի շրջապատում ու Թարթառի հովտում: Սերժ Սարգսյանը չէր հեռանում գրասենյակից, կապի բաժանմունքից, կապվում էր Ստեփանակերտի հետ, դեպքերի զարգացման մասին իրազեկ պահում ղեկավարությանը, (ահազանգում, որ.-Մ.Հ.) «Դրությունը ծանր է ու լուրջ, սպասվում է պայթյունավտանգ, անկառավարելի դրություն, անհապաղ միջոցներ պետք է ձեռնարկել ստեղծված իրավիճակից շուտ դուրս գալու համար, զորքը շարունակում է շրջապատել գյուղի տարածքը»[43]:

Օրագրողի նկարագրությունից ակնհայտ է դառնում, որ Ս. Սարգսյանը տեղում ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զինծառայողների և խաղաղ բնակչության միջև բախումներ, կամա թե ակամա սադրանքներ թույլ չտալու համար. «Պայմանավորվածության համաձայն՝

[41] **Նարիմանյան Գ.,** Օրագրություններ, հուշեր, վկայություններ, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 3(35-46), 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 88:
[42] Նույն տեղում, էջ 89:
[43] Նույն տեղում, էջ 89-90:

Սարգսյանը ժամը մեկ անգամ հրապարակի ամբիոնից նորություններ է հայտնում հավաքված բազմությանը: Վարորդ Գրիգորյանը վերադառնում է անտառից ու հայտնում Սարգսյանին, որ պատանդների դրությունն ու տրամադրությունը լավ են, ապահովված են առաջին անհրաժեշտության սննդամթերքով: …Ս. Սարգսյանը նորից եղավ անտառում, անձամբ տեսավ զինվորներին, իմացավ նրանց որպիսությունը»[44]:

Ս. Սարգսյանը նաև ակտիվորեն մասնակցում էր պատանդների փոխանակման շուրջ բանակցություններին, որի մասին օրագրողը վկայել է. «Ս. Սարգսյանը, Մոսխորհրդի պատգամավոր Լև Բալաշովը, թղթակիցների, գյուղի ներկայացուցիչների հետ գնացին անկոչ հյուրին (ԽՍՀՄ ՆԶ գլխավոր շտաբի պետի 1-ին տեղակալ, ՆԶ գեներալ-մայոր Վ. Պ. Ստարիկովին, «Թող չլինի մի Հաթերք, սա առաջինը չէ և ոչ էլ երկրորդը» խոսքերի հեղինակին.-Մ.Հ.) դիմավորելու, նրա հետ բանակցելու»[45]:

Բանակցությունների վարումը, Մոսկվայից ու Երևանից ժողովրդական պատգամավորների ու թղթակիցների հանդիպումների կազմակերպումը, ԽՍՀՄ ՆԶ գեներալների սպառնալից վերջնագրերից վրդովված հաթերքցիների հանգստացման ամենօրյա աշխատանքը Ս. Սարգսյանի Հաթերքում կատարած առաքելության միայն երևացող մասն էին: Օգոստոսի 18-ի գրառումը փաստում էր. «Որքանով Սմիռնովը, Շաբադը, Բալաշովը, Վ. Սարգսյանը, Լունինան, Ս. Սարգսյանը աշխատում էին հանգստացնել հաթերքցիներին, միևնույնն է, նրանք չէին հեռանում հրապարակից, շատ անհանգիստ էին»[46]:

Օգոստոսի 19-ի գրառումը պատանդառված զինվորականներին հերթական այցելության և ՆԶ կարգախմբերի գործողությունների խստացման մասին է. «Կապը անտառի հետ անխափան է: Գիշերը Սմիռնովը, Շաբադը, Վ. Սարգսյանը, Ս. Սարգսյանը տեսակցության գնացին «անտառի բնակիչներին»: …Առավոտվանից զինվորներն արգելեցին գյուղացիների անասունները արոտ քշել»[47]:

Օգոստոսի 19-ին Վ. Սարգսյանը, Ս. Սարգսյանը, Սմիռնովը, Շաբադը, Հաթերքից Բ. Գրիգորյանը, Գ. Նարիմանյանը և ուրիշներ գնում են ուղղաթիռի վայրէջքի վայրը՝ դիմավորելու Երևանից ժամանած Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանին և նրան ուղեկցող անձանց: Վերջիններս բանակցեցին ՆԶ

[44] Նույն տեղում, էջ 90:
[45] Նույն տեղում, էջ 91:
[46] Նույն տեղում, էջ 98:
[47] Նույն տեղում, էջ 96-97:

գեներալ-մայոր Վ. Ստարիկովի և այլ պաշտոնյաների հետ, որի արդյունքների մասին տեղեկացրին հավաքված բազմությանը: Հաջորդ օրերին երեք փուլերով տեղի է ունենում պատանդների փոխանակությունը: ԱԴՊՎ-ի ձախողումից հետո իրավիճակը նորմալանում է նաև Հաթերքում ու Թարթառի հովտի մյուս բնակավայրերում[48]:

Ականատեսի օրագրային գրառումներից վերոհիշյալ ընդարձակ մեջբերումները համադրելով հանրահայտ այլ փաստերի[49] հետ՝ գտնում ենք, որ օբյեկտիվ չէ Հաթերքի ճգնաժամի լուծումը վերագրել մեկ անձի՝ անտեսելով բազմաթիվ մարդկանց ջանքերը, որոնց համախմբված ու նպատակասլաց գործադրումը հանգեցրել է ցանկալի արդյունքի:

Ականատեսի օգոստոսի 23-ի գրառումը, թեև չի վերաբերում նախորդ տագնապալից դեպքերին, բայց նպատակահարմար ենք գտնում մեջբերել, որովհետև այդ անկեղծ տողերում արտացոլվել են Ս. Սարգսյանի անմիջականությունն ու մարդկային որակները. «Առավոտյան կոլտնտեսության տնօրենի ծառայողական մեքենայով Սերժ Սարգսյանը եղավ դաշտում աշխատող հացագործների, ֆերմաներում աշխատող անասնապահների, մեխանիզատորների մոտ, մեկ անգամ ևս զրուցելու աշխատավոր մարդկանց հետ, լսելու նրանց պահանջները, որպեսզի մարզային համապատասխան մարմիններին տեղյակ պահի իրերի դրության մասին, և, անհրաժեշտության դեպքում, օգնություն ցուցաբերվի հողագործներին՝ տնտեսական տարին հաջողությամբ եզրափակելու համար: Սարգսյանը համոզվեց, որ մինչև 3-5 օրը կավարտվի հունձը, կսկսվի եգիպտացորենի բերքահավաքը, արդեն իսկ խրամատավորված են 3000 տոննա սիլոս և սենաժ, կվերսկսվեն անասնապահական շենքերի ընթացիկ նորոգումները:

Երեկոյան Սարգսյանը գյուղի կենտրոնում է:

- Գնում եմ,- ասում է նա:

- Մնա, վաղը կգնաս, չե՞ս ցանկանում գոնե մի գիշեր մեզ մոտ հանգիստ անցկացնել,- ասում է տնօրեն Գ. Դավթյանը:

- Ոչ, որ մնամ, վաղվա աշխատանքային օրն էլ կկորչի, տանն էլ անհամբեր սպասում են…

---

[48] Նույն տեղում, էջ 101:

[49] Օրինակ, վերոհիշյալ Վ. Կրիվոպուսկովը վկայում է, թե ԱդրԽՍՀ իշխանությունների ինչպիսի ճնշումների է ենթարկվել գեներալ-մայոր Վ. Ստարիկովը ուժային գործողությունների դիմելու հարցում, սակայն հնարավորինս ձգձգել է այն մինչև ԽՍՀՄ-ում ընդհանուր քաղաքական վիճակի համընկումը Հաթերքի ճգնաժամի շուրջ բանակցությունները փոխզիջումային եղանակով ավարտելուն (տե՛ս **Կրիվոպուսկով Վ.,** Խռովահույզ Ղարաբաղ. Ռուս սպայի օրագրից, էջ 297-299):

Սարգսյանն օգոստոսի 14-ից մեզ մոտ էր, միակ ղեկավարը, որը չհեռացավ գյուղից: Նրա անձնվեր վերաբերմունքը երկար կմնա հաթերքցիների հիշողության մեջ:

«Նիվա» մակնիշի ավտոմեքենան սպասում է տիրոջը: Պատշգամբում կանգնած Սարգսյանի և նրան շրջապատած գրասենյակի աշխատողների միջև մտքերի աշխույժ փոխանակում է կատարվում:

Լսվում է գյուղից հեռացող զրահամեքենաների թուլացող դռռոցը:

- Գնում են անկոչ հյուրերը,- ծիծաղելով ասում են զրուցակիցները:

- Ես էլ եմ գնում,-ժպտալով ասում է Սարգսյանը,- իմ հետևից էլ կասե՞ք «անկոչ հյուր»:

- Ի՞նչ ես ասում,- ժպտում, ծիծաղում են բոլորը:

- Կատակում եմ, ընկերներ, մնում է մի բան էլ ասեմ ու… երբ այս պատշգամբում ոտք դնելու տեղ չկար, մտածում էի, Աստված չանի, հանկարծ փլվի պատշգամբը, օդից (պարեկող ուղղաթիռների դեսանտայինները.-Մ.Հ.) կծիծաղեն մեզ վրա: Դիմացան կաղնե սյուները, բայց հարկավոր է պատշգամբը մի լավ նորոգել, ուրախ առիթների ժամանակ հարկավոր կլինի: Հաթերքի պատմությունում կհիշվեն նաև այս պատշգամբը, հրապարակը, ինչպես նաև ծառերի կատարներին շփվող ռազմական ուղղաթիռները: Դե գնացի,- գրկախառնվում է շրջապատի մարդկանց հետ,- մինչ նոր հանդիպում: Ցտեսություն, հաթերքցինե՛ր:

- Որ ձեզ համարենք մեր պատվավոր գյուղացի, դեմ չե՞ք լինի, չէ՞,- հարցնում է Սերգեյ Բալլույանը:

- Դա ձեր գործն (ընտրությունն) է,- պատասխանում է Սարգսյանը ու բացում ավտոմեքենայի խցիկի դռնակը, նստում և ավելացնում,- գնացի՛նք»[50]:

Երբ արդեն ակնհայտ էր Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելության և Ժելեզնովոդսկում ստորագրված համաձայնագրի անարդյունավետությունը տարածաշրջանում իրադրության նորմալացման համար[51], քանի որ ադրբեջանական կողմը գերադասում էր հակամարտությունը

---

[50] Նույն տեղում, էջ 107-108:

[51] Տե՛ս Արցախյան հարց. լուծման տարբերակների որոնում, «Հայաստանի Հանրապետություն» (ՀՀ Գերագույն խորհրդի օրաթերթ), 23 սեպտեմբերի 1991թ., № 202-203, էջ 1-2, Երկխոսության սկիզբը դրված է (նաև՝ Համատեղ կոմյունիկե), «Հայաստանի Հանրապետություն», 25 սեպտեմբերի 1991թ., № 205, էջ 1-2: Совместное коммюнике: Об итогах посреднической миссии президента Российской Федерации Б. Н. Ельцина и президента Казахстана Н. А. Назарбаева, «Республика Армения» (Газета Верховного Совета Республики Армения), 26 сентября 1991 г., № 181, с. 1, ***Бабанов И., Воеводский К.,*** Карабахский кризис, СПб, 1992, с. 55.

լուծելու ռազմական ուղին, ավելի քան հրատապ է դարձել ինքնապաշտպանության ուժերի կազմավորման տեմպերի արագացման ու պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հարցը: 1991թ. հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում կայացած արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհրդի նիստում հարց է բարձրացվել Արցախի Հանրապետության պաշտպանության խորհուրդ և զինված ուժեր ստեղծելու վերաբերյալ, ինչը թելադրված էր նաև Ադրբեջանի կողմից բանակ ստեղծելու և այն Արցախի հայկական պետության դեմ ուղղելու վերահաս վտանգին դիմագրավելու անհրաժեշտությամբ[52]:

Բնութագրելով Ս. Սարգսյանի այս ժամանակահատվածի գործունեությունը՝ լրագրող Արկադի Ղուկասյանը (հետագայում՝ ԱՀ արտգործնախարար, ԱՀ նախագահ) գրել է. «Սերժ Սարգսյանը մեկն է նրանցից, ովքեր չնահանջեցին խորհրդաադրբեջանական վայրագության սարսափի դեմ հանդիման և ամեն օր, կյանքը վտանգելով, անում էին իրենց դժվարին գործը: Նրան վաղուց էին հետապնդում Պոլյանիչկոյի մարդիկ, մինչդեռ, նա շարունակում էր համաձայնեցնել այն ժամանակ դեռ սակավաթիվ ինքնապաշտպանական ջոկատների գործողությունները»[53]:

Ինքնապաշտպանության ուժերի ընդհատակյա հրամանատարության ավելի ու ավելի շատ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ս. Սարգսյանը, իրատեսորեն գնահատելով օպերատիվ իրադրությունը, համոզվել են, որ ադրբեջանական հրոսակախմբերի օրավուր աճող լկտիությունը զսպելու և հայկական խաղաղ բնակավայրերի գնդակոծություններն ու հրթիռահարումները դադարեցնելու համար անհրաժեշտ էր դիմել համարժեք գործողությունների: Դեռևս նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը, չունենալով բավարար միջոցներ, թեև առանձին տեղամասերում պատասխան գործողությունների էին դիմել, սակայն թշնամուն ցնցող ու զգաստացնող հակահարված էր պետք: Անհրաժեշտ էր, ինչքան հնարավոր է, օպերատիվորեն և արդյունավետորեն այն իրականացնել նաև ազատամարտիկների հնարավորությունները դրսևորելու համար: Ուժերի փորձության վայր ընտրվեց Հադրութի շրջանի Տող գյուղը, որի ազատագրումը, թերևս, առաջին հաղթանակներից էր, որով կոտրվեց հակառակորդի անպատժելիության զգացումը, բացվեց Հադրութի ներշրջանային երթևեկության

[52] Տե՛ս ***Арутюнян В.,*** События в Нагорном Карабахе. Хроника, часть IV., с. 88.
[53] Սերժ Սարգսյան. «Նրանք մեզ լավ չէին ճանաչում», «Հայաստանի Հանրապետություն», 1 հունիս 1992թ., № 106, էջ 1:

ճանապարհը, իսկ հայ ազատամարտիկները ոգեպնդվեցին ու ձեռք բերեցին համապատասխան մարտական փորձ:

ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմի 1991թ. նոյեմբերի 28-ի նիստում որոշում է ընդունվել 1991թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իսկական զինվորական ծառայության զորակոչել 1973-1974թթ. ծնված և ավելի բարձր տարիքի քաղաքացիներին[54]:

Մարտական գործողությունների օրեցօր սաստկացման պայմաններում, փորձելով ազատվել սին պատրանքներից և ապավինել իր ներուժին, Արցախի տոհմիկ հայ բնակչությունը վճռական քայլեր է ձեռնարկել Արցախում հայկական պետականությունը կերտելու ուղղությամբ: Մարզգործկոմի նոյեմբերի 27-ի որոշման համաձայն, դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացվել է հանրաքվե: Բնակչության ճնշող մեծամասնությունը քվեարկել է Արցախի Հանրապետության անկախության օգտին[55]:

Ինչպես և սպասվում էր, Անկախության հանրաքվեից հետո Արցախում նոր թափ են առել բանակաշինության, մասնավորապես՝ Ազգային գվարդիա կազմավորելու աշխատանքները: Այդ մասին է վկայում ՀՀ Պաշտպանության կոմիտեի նախագահի 1991թ. դեկտեմբերի 17-ի № 53 հրամանը[56], որի համաձայն՝ Արցախի Հանրապետության ազգային գվարդիայում պրակտիկա անցնելու համար Ստեփանակերտ են գործուղվել Հրաչյա Սերգեյի Հովհաննիսյանը և Գաբրիել Վոլոդյայի Վարդանյանը:

Դեկտեմբերի 25-ին և 26-ին Արցախից դուրս է բերվել ԽՍՀՄ ներքին զորքերի «ԴՈՆ[57*]» դիվիզիան (հրամանատար՝ գեներալ-մայոր Լոբունեց), այդ թվում՝ Ստեփանակերտից՝ փոխգնդապետ Տյուլովիչի, Մարտունուց՝ Բատակովի, Մարտակերտից՝ Կալիբերդենկոյի գնդերը[58]: Դրա հետևանքով, ավելի է բարդացել Արցախի Հանրապետության բազմաթիվ բնակավայրերի և ժողովրդատնտեսական կարևոր օբյեկտների անպաշտպանությունը, իսկ սահմանագծի ամբողջ երկայնքով վերսկսվել են ադրբեջանական զինված

---

[54] ԱՀՊԱ, ֆ. 1, g. 2, պ. մ. 330, կ. 28, թ. 7-8:

[55] **Օհանջանյան Մ.,** Անկախության քայլերը: Արցախի Հանրապետությունում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998), Ս., «Սոնա», 1998, էջ 9, «Ведомости СНД и ВС РСФСР», 19.12.1991, N 51, с. 1798, **Հարությունյան Մ.,** Մարտնչող ժողովրդի անանցանելի ընտրությունը, «Մարտիկ», 2-9 դեկտեմբեր, 2011 թ., № 49, էջ 4: **Նույնի** Անկախությունից ժողովրդավարություն, «Մարտիկ», 7-14 դեկտեմբեր, 2012 թ., № 49, էջ 1:

[56] ՀՀ ՊՆԿԱ, գույք № 598, գործ № 1:

[57*] Դիվիզիա օսոբոգո նազնաչենիյա - հատուկ նախանշանակման դիվիզիա:

[58] Արցախի Հանրապետության ՊՆ արխիվ (ԱՀՊՆԱ), Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г.- окончено 5 марта 1992г., л. 4а:

խմբավորումների հարձակումները: Դրանց ակտիվացումը, թերևս, պայմանավորված էր նրանով, որ Բաքվից և Աղդամից Արցախ էին տեղափոխվել 300-ական գրոհային ընդգրկող 18 գումարտակներ, ինչպես նաև ռազմական տեխնիկա և նույնիսկ՝ ՄԻ-24 ուղղաթիռ[59]: Ստեղծված իրադրությունում Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր են ունեցել ուժեղացնելու ժողովրդատնտեսական օբյեկտների պաշտպանությունը՝ ներգրավելով նաև խաղաղ բնակչությանը, ինչպես նաև՝ ստեղծելու առանձին ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տագնապալից իրավիճակի թելադրանքով, ՀՀ պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Ա. Տեր-Թադևոսյանին հնձնարարվել է անհապաղ ավարտել զինված խմբավորումների կազմավորումը. Հադրութի և Մարտունու շրջաններում, ներգրավելով 400-ական, իսկ Ասկերանում, Մարտակերտում և Ստեփանակերտում՝ 500-ական մարտիկ: Միաժամանակ, ՀՀ պաշտպանության կոմիտեի շտաբի պետ Գ. Դալիբալթայանի խորհրդով տեղի ղեկավարներին առաջարկվել է անցկացնելու մասնակի զորահավաք[60]: Այս ձեռնարկումները նպատակաուղղված են եղել ստեղծված իրադրությունում նպաստելու Արցախի պաշտպանունակության բարձրացմանը:

Դեկտեմբերի 28-ին, չդադարող հրետակոծությունների, զինված ավազակախմբերի պարբերական հարձակումների պայմաններում տեղի են ունեցել Արցախի Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները[61]: Ստեփանակերտի № 20 ընտրատարածքից 1-ին գումարման ԳԽ պատգամավոր է ընտրվել նաև Ս. Սարգսյանը[62]: Օրենսդիր մարմնի ձևավորումը կարևոր էր նաև ինքնապաշտպանության ու անվտանգության օրախնդիր հիմնահարցերի լուծման օրենսդրական հիմքերի ստեղծման համար: Արցախում պաշտպանության ոլորտի կարգավորման և բանակաշինության իրավական հիմքերի ստեղծման անդրանիկ ձեռնարկումներից հատկանշելի է 1992թ. փետրվարի 24-ին Արցախի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության հատուկ որոշումը

---

[59] Նույն տեղում, թ. 7б: Տե՛ս **Հարությունյան Մ.,** Թեքելով հաջողության նժարը (դեկտեմբեր. 1991).- «Մարտիկ», 14-19 դեկտեմբերի 1998 թ., № 49, էջ 6-7:

[60] Նույն տեղում, թ. 7a: Տե՛ս նաև **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, էջ 50-51:

[61] Տե՛ս Լեռնային Ղարաբաղի ընտրությունները կայացել են, «Հայաստանի Հանրապետություն», 31.12.1991թ., № 281-282, Արցախում ընտրությունները կայացել են, «Երկիր», 1 հունվարի 1992թ. № 1, էջ 3:

[62] **Օհանջանյան Մ.,** Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998), էջ 13:

Արցախի Հանրապետության ԻՊՈՒ-ի մասին: Այդ որոշման մեջ մասնավորապես արձանագրված էր. «Ելնելով նրանից, որ հայ բնակչության նկատմամբ իրականացվող ցեղասպանության, կողոպուտի, բռնությունների և հայկական գյուղերի բնակիչների բռնի տեղահանության հետևանքով ստեղծվել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատներ, աչքի առաջ ունենալով Ադրբեջանի անթաքույց զավթողական գործողությունները Արցախի Հանրապետության դեմ, զորահավաքի միջոցների հաշվառման և հանրապետության պաշտպանության ապահովման նպատակով, կազմավորված զինված ջոկատները դիտել որպես Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժեր և դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Հանձնարարել շրջգործկոմներին և զինկոմիսարիատներին՝ ամսվա ընթացքում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում և զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: ԻՊՈՒ-ում ընդգրկված զինապարտներին համարել զինվորական ծառայության զորակոչվածներ: Հանձնարարել Արցախի Հանրապետության զինկոմիսարիատներին՝ ԻՊՈՒ շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ անցկացնել Արցախի Հանրապետության շահերի համար պայքարում զոհված, անհայտ կորած և հաշմված անձանց վերահաշվառում»[63]:

Այս կարևոր որոշումը ոչ միայն պետական կարգավիճակ է շնորհել տարերայնորեն կազմավորված ինքնապաշտպանության ուժերին, այլև օրենսդրական հիմքերի վրա է դրել այդ ուժերը միասնական հրամանատարության ենթարկելու, զորահավաքային պատրաստության, զինծառայողների սոցիալական հարցերի լուծումը:

Արցախի Հանրապետության ԳԽ նախագահության 1992թ. մարտի 4-ի որոշմամբ գնդապետ Ա. Ի. Տեր-Թադևոսյանը նշանակվել է Արցախի ԻՊՈՒ հրամանատար[64]: Նույն օրը հաստատվել է նաև Արցախի Հանրապետության պաշտպանության խորհրդի կազմը, որը ներկայացրել էր Արցախի Հանրապետության ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը: Պաշտպանության խորհրդում ընդգրկվել են Ա. Մկրտչյանը (նախագահ), Օ. Եսայանը, Վ. Բալայանը, Ս. Սարգսյանը, Ա. Տեր-Թադևոսյանը, Ռ. Քոչարյանը և Ա. Կարապետյանը[65]:

---

[63] ԱՀՊԱ, ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 24:
[64] Նույն տեղում, թ. 26:
[65] Նույն տեղում, թ. 29:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով Արցախի Հանրապետության նախարարների խորհրդի մասին Արցախի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, Հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչև Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին Արցախի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր ստեղծվել է Պաշտպանության կոմիտե: Պաշտպանության կոմիտեի նախագահ է նշանակվել Ս. Սարգսյանը, որին հանձնարարվել է 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել Պաշտպանության կոմիտեի կառուցվածքի, կանոնադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ամբողջ գործունեությունը պետք է կազմակերպեր Արցախի Հանրապետության ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Արցախի Հանրապետության Պաշտպանության կոմիտեի, հետագայում՝ Արցախի Հանրապետության Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ կարևոր ու անհետաձգելի միջոցառումներ են իրագործվել ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նյութատեխնիկական հիմքի, սպառազինության ու տեխնիկայի հայթայթման ու մատակարարման, ԻՊՈՒ վարչության ձևավորման ուղղությամբ[66]:

[66] Արցախի Հանրապետության կառավարության արձանագրային բաժնի արխիվ, Արցախի Հանրապետության ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, № 3, թ. 2:

21. ԼՂՀ նախարարների խորհրդի կարգադրության հաստատման մասին

/Թովմասյան Վ.Հ., Եսայան Օ.Ե./

ԼՂՀ նախարարների խորհուրդը որոշում է.

Հաստատել ԼՂՀ նախարարների խորհրդի 1992թ. մարտի 2-ի հ.11ա կարգադրությունը, որը կցվում է:

22. ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի ստեղծման մասին

/Եսայան Օ.Ե., Առուշանյան Բ.Ս., Ծատուրյան Ա.Մ., Ներսիսյան Յու.Բ., Շահրամանյան Է.Շ., Խվթյան Յու.Գ., Ղազարյան Վ.Ս., Սարգսյան Ս.Ա., Եսայան Օ.Ե./

1. Ղեկավարվելով ԼՂՀ նխ մասին ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով և ելնելով հանրապետության տարածքում ստեղծված ռազմական բարդ իրադրությունից, նույն օրենքի 2-րդ հոդվածի 1 կետի համաձայն՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման նպատակով անհետաձգելի միջոցառումների մշակման և իրագործման համար մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը ԼՂՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծել պաշտպանության կոմիտե:

2. Պաշտպանության կոմիտեի նախագահ նշանակել Սերժ Ազատի Սարգսյանին:

3. Հանձնարարել Ս.Ա.Սարգսյանին 10 օրվա ժամկետում նախարարների խորհուրդ առաջարկություններ ներկայացնել պաշտպանության կոմիտեի կառուցվածքի, կանոնադրության և անվանական կազմի մասին:

4. Պաշտպանության կոմիտեին՝ իր ամբողջ գործունեությունը կազմակերպել ԼՂՀ Գերագույն խորհրդի և ԼՂՀ նախարարների խորհրդի որոշումների և կարգադրությունների հիման վրա:

ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահ՝ Օ.Եսայան

Այդ օրերին, ուժեր ու միջոցներ կենտրոնացնելով Արցախի Հանրապետության սահմանագծի ամբողջ երկայնքով, առանձին տեղամասերում հակառակորդը փորձել է շոշափել և հայտնաբերել ԻՊՈՒ պաշտպանության համեմատաբար թույլ հատվածները, մշտական հրետակոծությունների միջոցով ձգտել է ավերել խաղաղ բնակավայրերը և հոգեբանորեն ընկճել բնակչությանը, այսինքն՝ մարտնչող ռազմիկներին զրկել անհրաժեշտ նեցուկից, ինչպես նաև, բոլոր ռազմագործողություններում սկսել է օգտագործել ԱՊՀ ՁՈՒ-ի՝ Ադրբեջանում տեղակայված զորամասերի սպաներին: Հակառակորդին հաջողվել է իմանալ, որ հայ մարտիկները ռազմամթերքի պակաս են զգում, ուստի գործել է բացահայտ ու անպատիժ: Հայտնի դարձած մյուս տվյալները ևս վկայել են սպասվող լայնածավալ հարձակման օգտին:

Արցախի Հանրապետության պաշտպանության կոմիտեն, կազմակերպական անհետաձգելի միջոցներ ձեռնարկելուն զուգընթաց, այդ բացասական գործոններին հակադրել է հայ ազատամարտիկների բարձր բարոյամարտական որակները, հայրենիքը պաշտպանելու շարժառիթավորված վճռականությունը և պատմության ընթացքում քանիցս անհաշտ անհանդուժողականությամբ աչքի ընկած արյունռուշտ ոսոխի նկատմամբ խոր ատելությունը:

1992թ. գարնանային ռազմարշավի կեսերին Արցախում թշնամու ռազմական գլխավոր հենադաշտը շարունակում էր մնալ Շուշին, որի հետ ռազմավարական գիծ էին կազմում ռազմական հենակետերի վերածված Քյոսալար, Ջանհասան, Կարագյավ գյուղերը: Առանց հիշյալ հենակայանների վնասազերծման ոչ միայն անհնարին էր բարձրացնել Արցախի Հանրապետության պաշտպանունակությունը, այլ նաև ապահովել շատ թե քիչ բնականոն ներհանրապետական կյանք: Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդեն ապրիլի վերջերին ու մայիսի սկզբներին հասունացել էր Արցախում ադրբեջանցիների ամենախոշոր ու վտանգավոր ռազմահանգրվանի վերածված Շուշի բերդաքաղաքի ազատագրման պատմական պահը: Իր գագաթնակետին հասած ռազմաքաղաքական իրադրությունը սպառնում էր դուրս գալ վերահսկողությունից և զարգանալ Արցախի հայ ազգաբնակչության համար վտանգավոր ձևով, եթե, իհարկե, ժամանակին չվնասազերծվեին Շուշիի և Ստեփանակերտին հարակից գյուղերի կրակակետերը[67]:

[67] Տե՛ս **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 77-78:

Այնինչ, կապված զինված բախումների ծավալների աճի հետ, մարտական գործողությունները տեխնիկական ու կազմակերպական առումներով ավելի են բարդացել: Իսկ դա պահանջել է Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության կոմիտեից ստեղծել միասնական հրամանատարություն, մարտունակ բնակչության զորահավաքի համակարգ, զինվորական ստորաբաժանումների մատակարարման կառույցներ, բանակային կադրերի նախապատրաստման, մասնագետների ընդգրկման ուսումնական բազաներ և այլն: Սակայն, կենսականորեն կարևոր այդ հարցերի լուծումը և հենց Արցախի գոյատևումը, առանց շնչահեղձ անող համապարփակ շրջափակման ճեղքման, անհնարին էր[68]:

Ստեղծված իրադրությունն այսպես է ներկայացրել ԻՊՈՒ հրամանատար, գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը. «Խոջալուի ազատագրումից հետո հակառակորդն ավելի սաստկացրեց Ստեփանակերտի գնդակոծությունը Շուշիից: Ամեն օր Ստեփանակերտում խաղաղ բնակիչներ էին զոհվում, իսկ քաղաքն էլ պլանաչափորեն ավերվում էր: Արցախի քաղաքական ղեկավարությունը, ջոկատների հրամանատարները և քաղաքի բնակչությունը Պաշտպանության կոմիտեից պահանջում էին անհապաղ և ամեն գնով ազատագրել Շուշին: Սակայն Կոմիտեի ղեկավարությունը գիտակցում էր, որ հայկական ջոկատների ուժը բավարար չէ հաջողությամբ գործողությունն իրականացնելու համար: Ակնհայտ էր, որ եթե անգամ մենք այդ գործողության մեջ ընդգրկեինք մեր տրամադրության տակ գտնվող բոլոր ջոկատները, ապա լավագույն դեպքում զորքերի թվաքանակը հավասար կլինի: Մինչդեռ ռազմական տեխնիկայի, հրետանու և զինամթերքի առումով հայկական կողմն ամեն դեպքում խիստ զիջում էր Շուշիի ադրբեջանական ուժերին: Այնուհանդերձ, հաշվի առնելով Շուշիի կրակակետերի ոչնչացման ծայրահեղ անհրաժեշտությունը, ժողովրդի հոգեբանական տրամադրվածությունը՝ Պաշտպանության կոմիտեն մարտի սկզբին ինձ հանձնարարեց Ինքնապաշտպանության ուժերի շտաբի հետ միասին մշակել Շուշիի ազատագրման պլանը: Այդ պահից սկսվեց գործողության նախապատրաստությունը, որը տևեց երկու ամիս[69]»:

---

[68]Фонд общественно-политической информации, НКР: история и современность, С., 1998, с. 24:

[69] **Տեր-Թադևոսյան Ա.,** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն(1991թ. հուկիս-1992թ. հուլիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19, էջ 8***, Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), "Вопросы стратегии и безопасности", составитель, редактор, автор предисловия и примечаний - Армен Айвазян, Е., “Лусакн”, 2007, с. 570.

Շուշիի ազատագրման ռազմական նախապատրաստությունների շրջանակներում Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի այն ստորաբաժանումները, որոնք տվյալ պահին ընդգրկված չեն եղել մարտական գործողություններում կամ մարտական հերթապահությունում (պահպանությունում), կամավորականների խմբեր են հատկացրել Շուշիի թշնամական հենակետերը գրոհելու համար: Ապրիլ-մայիս ամիսներին առավել արդյունավետ ու հաճախակի են դարձել հետախուզական աշխատանքները, որոնք անհրաժեշտ էին ԻՊԿ-ին Շուշիի ազատագրման ռազմագործողության պլանի մանրամասներն ու առանձին տարրերը ճշգրտելու համար[70]: Սղնախ գյուղի մոտակա բարձունքից (Չախմախ յալ) ոչ միայն դիտարկվել է Լաչին-Շուշի ճանապարհով կատարվող երթևեկությունը, այլև վերահսկվել: Մասնավորապես հայտնի է, որ 2-րդ վաշտի զրահատեխնիկայի կողմից այդ ճանապարհին խփվել են տասնյակ փոխադրամիջոցներ: Այդպիսով մասամբ արգելափակվել է Շուշիի ադրբեջանական կայազորին մահաբեր հրթիռների ու այլ սպառազինության մատակարարումը: Համապարփակ շրջափակման մեջ գտնվող Արցախի համար հույսի շող է բացվել Ստեփանակերտի օդանավակայանի ազատագրման շնորհիվ, որից հետո հնարավոր է դարձել ՅԱԿ-40 ինքնաթիռներով ու ՄԻ-8 ուղղաթիռներով մայրաքաղաք հասցնել բեռների այն նվազագույն քանակությունը, որն անհրաժեշտ էր Շուշին ազատագրելու համար[71]:

Պահի լրջությունը և մեծ պատասխանատվությունը ռազմական ու քաղաքական ղեկավարները գիտակցում էին, ուստի ոչ բոլորն էին պատրաստ ստանձնելու ամբողջ պատասխանատվությունը: ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանի վկայությամբ. «Մինչ այդ Ստեփանակերտում դրությունը կրիտիկական էր դառնում, և չնայած ռազմական մատակարարման անբարենպաստ իրավիճակին՝ Արցախի Պաշտպանության կոմիտեն՝ Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ, ստանձնեց պատասխանատվությունը և ինձ հանձնարարեց անցկացնել գործողությունը»[72]:

---

[70]Տե՛ս **Հարությունյան Մ.,** Համազգային իղձի իրականացումը (Շուշիի ազատագրման 17-րդ տարեդարձի և Պաշտպանության բանակի օրվա առթիվ), «Մարտիկ», № 17-18, 2009 թ., էջ 6-7:

[71] **Բալայան Զ.,** Դժոխք և դրախտ [Արցախի ազգային-ազատագրական պատերազմի մասին], Ե., «Զվարթնոց», 1995, էջ 30:

[72] **Տեր-Թադևոսյան Ա.,** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. հուլիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19, էջ 8, ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), "Вопросы стратегии и безопасности", с. 570.

Շուշիի ազատագրման ռազմական օպերացիայի պլանը, որի մշակմանը ակտիվորեն մասնակցել է նաև ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը, արտաքնապես ինչքան պարզ, նույնքան խոր ու հանճարեղ էր մտահղացմամբ, հիմնականում, հաջողվեց իրականացնել[73]:

Մեծ է Շուշիի ազատագրման պատմական նշանակությունը[74]: Ակնհայտ է, որ Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի համար առաջին լուրջ մարտական մկրտությունը դարձած Շուշիի և Ջանհասան-Քյոսալարի ենթաշրջանի ռազմականացված գյուղերի ազատագրման գործողության մշակմամբ ու իրագործմամբ Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության կոմիտեն և ինքնապաշտպանության ուժերը շարունակեցին հայ ժողովրդի կերտած ռազմարվեստի լավագույն ավանդույթները: Համեմատաբար փոքր կորուստների գնով հայկական ուժերի նվաճած փայլուն հաղթանակը ցույց տվեց ինքնապաշտպանության կոմիտեի, բոլոր աստիճանների հրամանատարների կողմից ռազմագործողություններ մշակելու, նախապատրաստելու և իրականացնելու գործում ադրբեջանական հրամանատարության նկատմամբ ունեցած ակնհայտ առավելությունը, ինչպես նաև հայ ազատամարտիկի բարոյահոգեբանական անվիճարկելի գերազանցությունը զավթիչի նկատմամբ: Շուշիի ազատագրման ռազմական գործողություններն իրենց արժանի տեղն են գտել հայ ազգային-ազատագրական շարժման պատմության տարեգրությունում: Հայկական հինավուրց քաղաքի ազատագրումը ռազմաքաղաքական ու բարոյահոգեբանական մեծ նշանակություն ունեցավ ազգային ազատագրական շարժման նոր փուլում: Պատմության այդ սրընթաց ակնթարթը, Լաչինի միջանցքի բացման հաջող ռազմագործողությունը հանգեցրին Արցախի Հանրապետության շրջափակման օղակի ճեղքմանը, ինչո՞ւ չէ, նաև կյանքի ճանապարհի բացմանը, հետևաբար և արհեստականորեն մասնատված ժողովրդի երկու կեսի գործնական

---

[73] Հանգամանալից տե՛ս Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից (նվիրվում է Շուշիի ազատագրման 20-ամյակին):,ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի օպերատիվ վարչություն, Ե., ՀՀ ՊՆ վարչ. ապարատի հրատ., 2012, 44 էջ: **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 75-128: **Նույնի** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, էջ 65-84: **Նույնի** Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, էջ 100-139: **Նույնի** Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006թթ., էջ 41-42, 50: **Վարդումյան Հ.,** Շուշիի ազատագրումը, խմբ.՝ Գ. Մախսուդյան, Ե., «Տոներ», 2007, էջ 16-78: ***Вардумян О.,*** Освобождение Шуши, Е., «Эдит Принт», 2012, с. 30-75 և այլն:

[74] **Հարությունյան Մ.,** Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը, «Մարտակերտ», № 41-64, 2007 թ., էջ 24-25:

միավորմանը[75]: Շուշիի ռազմագործողությունն առ ոչինչ է դարձրել այսպես կոչված Ադրբեջանի՝ արցախյան հողատարածքի նկատմամբ առանց այդ էլ անհիմն իրավունքներն ու հավակնությունները: Այդ մասին, թեև տհաճությամբ, խոսել և խոստովանել են անգամ ադրբեջանցիները[76]: Շուշիի ազատագրումը նպաստել է մեր ժողովրդի մարտական ոգու բարձրացմանը, վերջնականապես ամրագրել թվաքանակով ու միջոցներով գերակշռություն ունեցող հակառակորդի դեմ սեփական ուժերով հաղթանակ տանելու վճռականությունը: Մյուս կողմից, խորտակիչ բարոյահոգեբանական հարված հասցվեց հակառակորդին, որն այդպես էլ չկարողացավ հետագա մարտական գործողությունների ընթացքում, ունեցած մարտավարական ու նույնիսկ ռազմավարական բնույթի ժամանակավոր հաջողություններով հանդերձ, հաղթահարել պարտվածի բարդույթը:

Շուշիի հաղթանակի հաղորդած համընդհանուր լիցքը, այդ կարևոր հաղթանակը կորցնելու տագնապը օգնեցին Արցախի հայ ազգաբնակչությանը դիմանալու, տոկալու հակառակորդի՝ 1992թ. հունիսի 12-ի լայնածավալ ագրեսիային, Շահումյանի ու Մարտակերտի անկմանը, մայրաքաղաքի ու մյուս խաղաղ բնակավայրերի անողոք ռմբահարումներին ու հրթիռահրետակոծություններին հաջորդած անլուր տառապանքներին ու զրկանքներին[77]: Շուշիի ռազմագործողությունը, փաստորեն, առանձին գործող ինքնապաշտպանական ջոկատներից Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի՝ նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցման և արագ զարգացման փուլի սկիզբն էր[78]: Անկասկած, Շուշիի ազատագրումը կարևոր հանգրվան էր Արցախում կանոնավոր զինված ուժեր ստեղծելու և, ընդհանրապես, ռազմական շինարարության համար: Ուստի մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի օր է հռչակվել և մեծ շուքով տոնվել է թե՛ Արցախի Հանրապետությունում, թե՛ Հայաստանի Հանրապետությունում և՛ թե սփյուռքում մինչև 2020թ. աշնանային կապիտուլյացիան:

---

[75] «Մարտիկ», № 18, 1999 թ., **Հարությունյան Մ.,** Շուշիի ազատագրումը. «Շուշի», № 7-10, 1999 թ.:
[76] ***Султанов З.,*** Агдарадан калан вар, Б., 1993, с. 14:
[77] **Հարությունյան Մ.,** Ռազմական ու ոգեղեն հաղթանակ (Շուշիի ազատագրման 18-րդ տարեդարձի առթիվ), «Մարտիկ», № 17-18, 2010 թ., էջ 12-13:
[78] «Մարտիկ», № 18, 1999 թ.:

1992 թվականի հունիսի 4-ին՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի նախօրյակին ԼՂՀ ԳԽ «Արցախ» պաշտոնաթերթի թղթակիցը հետաքրքրվել է, թե ինչն էր առաջնահերթն ու կարևորը այդ ժամանակ ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի համար: «Ինձ համար առաջնահերթ նշանակություն ունի բանակի մասին օրենքի ընդունումը,- պատասխանել է Ս. Սարգսյանը:-Ռազմական հաջողության հետ կապված ընդհանուր ոգևորությունը վտանգավոր է դառնում: Երբեք չպետք է ինքնահանգստանալ: Ես գտնում եմ, որ պետք է այնպիսի օրենքներ ընդունել, որ հստակվի ԼՂՀ-ի պաշտպանական ուժերի մեջ մտնող մարտիկների կարգավիճակը: Առայժմ հայտնի չէ՝ նրանք կամավո՞ր են, թե՞ վարձու, ո՞վ է ենթակա զինակոչի և այլն: Մեզ պետք է օրենք բանակի մասին, որպեսզի իսկական ժամանակակից բանակ ստեղծենք»[79]:

Պատերազմող կողմերի ուժերի հաշվեկշռի և Շուշիի ու Լաչինի ռազմագործողությունների միջոցով ագրեսորին պարտադրված հրադադարը խախտվել է, երբ 1992թ. մայիսի վերջերին ու հունիսի սկզբներին Ռուսաստանն Ադրբեջանին է հանձնել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, ըստ ժամանակի մամուլի «առնվազն 150 տանկ, 120 ՀՄՄ, 170 ԶՓԴ, մոտ 150 ականանետ, 90 զենիթահրետանային կայանք, ՍՈՒ-25 և ՄԻԳ տեսակի ինքնաթիռներ»[80]: Միաժամանակ, երբեմնի Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղակայված նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի զորամասերի զինվորական մասնագետների ու սպաների համար ստեղծվել էին որպես վարձկաններ մարտական գործողություններին մասնակցելու բոլոր պայմանները: Այս ամենը, ըստ այդ նույն աղբյուրի, Ադրբեջանին թույլ է տվել կտրուկ փոխելու Արցախի Հանրապետության դեմ ծավալած ռազմաճակատում տիրող իրավիճակը[81]: Ռազմաճակատի ամբողջ երկայնքով 1992թ. հունիսի 12-ի օրվա երկրորդ կեսին հակառակորդի՝ ԼՂՀ սահմանամերձ շրջաններում կուտակված կազմավորումների, մեծաքանակ զրահատեխնիկայի, հրետանու և ռազմաօդային ուժերի ձեռնարկած լայնածավալ հարձակումը, որի հիմնական ուղղություններն էին հատկապես Ասկերանի,

---

[79] «Արցախը՝ գլխավոր ընտրության առաջ», «Արցախ» ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտոնաթերթ, 4 հունիսի 1992 թ., № 2 (https://www.serzhsargsyan.com/hy/article/serzh-sargsyan-artsakh-arm-forces-1992):

[80] «Pro Armenia», журнал, № 7, Москва, 1992 г.

[81] Նույն տեղում: Այդ նույն կարծիքին են խնդրո առարկա հարցին անդրադարձած գրեթե բոլոր հեղինակները: Հարցի քննությունը տե՛ս **Հարությունյան Մ.,** 1992 թվականի ամառային պատերազմափուլի ռազմաքաղաքական հարցերի շուրջ, զեկուցում Երիտասարդ գիտնականների 2-րդ գիտաժողովում (12-14 ապրիլի 2007 թ.), ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», № 2, Ս., 2008, էջ 60-67, հմմտ.՝ **Նույնի** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., էջ 85-86:

Մարտակերտի, ապա և Ծահումյանի շրջանները, բացահայտել է Ինքնապաշտպանության ուժերի շինարարության և պաշտպանության կազմակերպման լուրջ թերությունները, որոնց պատճառով հնարավոր չեղավ իրականացնել մարտական խնդիրները և պաշտպանել մեր երիտասարդ հանրապետության տարածքային ամբողջականությունը:

Գեներացնելով քաղաքական շահարկումները՝ մի շարք հեղինակներ անհիմն պնդում էին, թե ռազմական օգնությունը դիտավորյալ չի հասցվել Ծահումյանի պաշտպաններին[82]:

Ինչ վերաբերում է ԼՂՀ ԻՊՈՒ շտաբի կողմից անհրաժեշտ օգնությունը չհասցնելու խնդրին, ապա հանուն ճշմարտության պիտի ասել, որ նման հնարավորություն, ընդհանրապես, չի եղել, քանզի ռազմական տեխնիկայի առկա սուղ միջոցները բաշխվել էին շրջաններին կամ տրամադրվել ռազմաճակատի ամենավտանգավոր տեղամասերին: Ի դեպ, մի ուշագրավ հաղորդագրություն գալիս է հաստատելու այդ միտքը: Այսպես, 1992թ. հունիսի 11-ի ժամը 00:25-ին Ծահումյանից Ծ. Մեղրյանը դիմել էր Արկադի Տեր-Թադևոսյանին ու Սերժ Սարգսյանին. «Խնդրվում է հայտնել ռազմագործողության ժամանակ տեխնիկայով աջակցելու հնարավորության մասին»: Ժամը 00:30-ին տրվել է հետևյալ պատասխանը. «Ծահումյան: Ծահենին: Ամբողջ տեխնիկան օժանդակելու նպատակով ուղարկված ու ներգրավված է շրջաններում, պաշտպանական տեղամասերում: Տեխնիկայով օգնելու հնարավորություն չկա: Արկադի»[83]:

Արցախի Հանրապետությունում աննախադեպ ծանր կացություն էր ստեղծվել Ադրբեջանի լայնածավալ նախահարձակման, Ծահումյանի շրջանի, Մարտակերտի, Ասկերանի ու Հադրութի շրջանների մի մասի բռնազավթման, հանրապետության ավելի քան 40 հազար բնակիչների բռնի տեղահանման, տասնյակ բնակավայրերի ավերման ու հրկիզման, խաղաղ բնակիչների սպանությունների և գերեվարության հետևանքով: Ծառացած օրախնդիր հարցերի լուծումը, առանց կարգ ու կանոնի, առանց ուժերի ու միջոցների համախմբման, անհնար էր: Ուստի, 1992թ. հունիսի 18-ին տեղի է ունեցել ԼՂՀ ԳԽ նախագահության նիստ, որտեղ քննարկվել է հանրապետությունում տիրող

---

[82] **Նանագուլյան Ս.,** Ծահեն, Ե., «Մանկավարժ», 1993, էջ 104, 109, **Ղահրամանյան Կ.,** Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար (2 գրքով). Գիրք Բ, Ե., «Մ. Վարանդեան», 1993, էջ 83, **Պետրոսեան Ա.,** Մեծն Ծահեն [Ազատագրական շարժման գործիչ Ծահէն Մեղրեանի մասին], Ե., Հեղին. հրատ., 2011, էջ 10-11, 419-420, **Ղահրամանյան Կ.,** Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր, խմբ.՝ Ա. Ղազիյան, Ե., «ԴԱԼԼ», 2013, էջ 189-192:

[83] ԱՀՊՆԱ, ՕՀԱՏ, № 217, էջ 14:

ռազմաքաղաքական իրավիճակը: Ադրբեջանի մինչ այդ աննախադեպ մասշտաբային հարձակման պատճառած հետևանքները վերացնելու և Արցախի Հանրապետությունում օրինականությունն ու կարգուկանոնը վերականգնելու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշել է հանրապետության ամբողջ տարածքում հայտարարել արտակարգ դրություն[84]: Թշնամու նախահարձակմանն ըստ ամենայնի դիմագրավելու նպատակով որոշվել է սկսել համընդհանուր զորակոչ: ԼՂՀ ԳԽ նախագահությունը հայտարարել է պարտիզանական պատերազմ սկսելու մասին[85]:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԼՂՀ մինիստրների խորհրդի համատեղ որոշմամբ 1992թ. հունիսի 20-ին հանրապետության տարածքում անցկացվեց մասնակի զորահավաք: Զորակոչի ենթարկվեցին 18-ից 40 տարեկան զինապարտ սերժանտները, զինվորները և զորակոչիկները, մինչև 50 տարեկան սպաները, հատուկ պատրաստություն ունեցող 19-ից 30 տարեկան կանայք[86]: Կռվող ուժի, մարդկային սուղ պաշարների պայմաններում զորահավաքի անցկացումն անհրաժեշտություն էր Մարտակերտի ճակատում արնաքամ լինող ԻՊՈՒ ստորաբաժանումների շարքերը լրացնելու, կանոնավոր կազմավորումները լրահամալրելու և, ընդհանրապես, պատերազմին համաժողովրդական վերաբերմունք ու համազգային բնույթ հաղորդելու տեսակետից: Այդ աշխատանքների կազմակերպման ու օպերատիվորեն ղեկավարման ամբողջ ծանրությունը հիմնականում տանում էր ինքնապաշտպանության կոմիտեն, որի ձեռնարկված անհետաձգելի միջոցները, սակայն, դեռևս բավարար չէին ռազմաճակատում ստեղծված օրհասական վիճակը կայունացնելու համար:

Այդ աշխատանքների բնույթի մասին պատկերացում է տալիս ժամանակի մամուլում ԻՊԿ նախագահի անմիջական գնահատականը. «Այսօր կան մարտակերտցիներից կազմված ջոկատներ, որոնք կռվում են հերոսաբար: Օրերս իմ մոտ էր Զագլիկի ջոկատի հրամանատարը: Տարիքն առած այդ մարդը երդվել է, որ չի լքի իր հողը, մինչև վերջ կկռվի հայրենիքի համար: Մենք կատարելու ենք ժողովրդի առջև ունեցած մեր պարտքը: Դա կախված է շատ հանգամանքներից: Առաջին հերթին՝ Ստեփանակերտում պարապ-սարապ թրև եկող մարդկանցից, Երևանի փողոցներում մուրացկանություն անող մարդկանցից, հատկապես

[84] ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշումը «Արտակարգ դրություն մտցնելու» մասին (Հ. Նխ.-0070-1), ԼՂՀ ԳԽ նախագահության որոշումների թղթապանակ, թթ. 41-42:
[85] «Արցախ», № 7, 1992 թ.:
[86] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ մինիստրների խորհրդի որոշումներ, որոշում № 53 առ 19. 06.1992 թ., արձանագրություն № 6:

երիտասարդներից, որոնց դեմ ձեռնարկվում են միջոցներ: Նրանք, որպես դասալիքներ, կալանավորվում են և ուղարկվում հանրապետություն: Այդ գործն առաջիկայում ավելի կուժեղացվի: Այդ նպատակով Երևան ենք ուղարկել ԼՂՀ պաշտպանության կոմիտեի ներկայացուցչին: Դասալիքներին ձերբակալելու և դատելու մասին կա պաշտպանության պետկոմի որոշումը, ըստ որի՝ Ղարաբաղը լքած յուրաքանչյուր զինապարտ դասալիք է: Իհարկե, տարբերություն կա անզեն ու զենքով փախածների միջև: Բոլորն էլ, սակայն, դասալիքներ են: Ես շատ ուրախացա, երբ ձեր թերթում ընթերցեցի այդ դասլիքների անուն-ազգանունները»[87]:

Ձեռնարկված միջոցներից էր նաև ԻՊԿ պլանավորմամբ հակահարձակողական գործողությունների անցկացումը ռազմաճակատի տարբեր ուղղություններում: ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումների հուլիսյան հակահարձակման արդյունքում ազատագրվել է Մարտակերտի շրջանի մեծ մասը: Հակառակորդի մարտակերտյան խմբավորումը ծանր հարվածներ է ստացել: Մարտական գործողությունների ընթացքում ԻՊԿ ղեկավար կորիզը, ինքնապաշտպանության ուժերի հրամանատարական կազմը և մարտիկները համապատասխան փորձ են ձեռք բերել, զարգացրել մարտավարական հմտությունները, ռազմավարական մտածողությունը և ռազմագործողությունները պլանավորելու ու ղեկավարելու կարողությունները: Այդուհանդերձ, հաջողությունը երկար չի շարունակվել, քանի որ դեռևս բոլոր պայմանները չէին ստեղծվել նախնական ձեռքբերումներն ամրապնդելու և պաշտպանելու համար:

Ադրբեջանի օգոստոսյան լայնածավալ հարձակման և Արցախի տարածքի զգալի մասի բռնազավթման կապակցությամբ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը օգոստոսի 12-ին որոշել է հանրապետությունում հայտարարել ռազմական դրություն և նույն օրվանից անցկացնել արական սեռի 18-ից 45 տարեկան քաղաքացիների զորահավաք[88]: Դա հնարավորություն է տվել ի մի բերելու և օգտագործելու հանրապետության զորահավաքային թեկուզև սահմանափակ ներուժն ընդդեմ ոսոխի:

Հանրապետության տարածքային ամբողջականության պաշտպանության և պաշտպանունակության, ինչպես նաև բանակաշինության հետ կապված հրատապ

---

[87] Ս. Սարգսյան. «Մենք անպայման կազատագրենք մեր հողերը», «Արցախ», 8 սեպտեմբերի 1992 թ., № 38:

[88] ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ ԳԽ նախագահության հրամանագիրը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու» մասին (Հ. Նխ.- 0099-1), ԼՂՀ ԳԽ նախագահության որոշումների թղթապանակ, թթ. 32-33, տես նաև «Արցախ», № 30, 1992 թ.:

հիմնահարցերի լուծման արդյունավետության բարձրացման նպատակով օգոստոսի 15-ին ստեղծվել է ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռ. Քոչարյանի նախագահությամբ: Կոմիտեի անդամներն էին Կարեն Բաբուրյանը (նախագահի տեղակալ), Սերժ Սարգսյանը (Ինքնապաշտպանության կոմիտեի և ինքնապաշտպանության ուժերի ղեկավար), Արմեն Իսագուլովը (ներքին գործերի ղեկավար), Սամվել Բաբայանը (Ինքնապաշտպանության ուժերի ղեկավարի տեղակալ, ՊԲ հրամանատար), Բորիս Առուշանյանը (Տնտեսական գծով ղեկավար), Վալերի Բալայանը (Պաշտպանության և անվտանգության կոմիտեի ղեկավար)[89]:

Պետական կառավարման նորաստեղծ մարմնին են հանձնվել Նախարարների խորհրդի բոլոր գործառույթները, ինչպես նաև ռազմական դրության իրականացման լիազորությունները[90]: Հանրապետությունում ստեղծված ծայրաստիճան ծանր ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական կացության բարելավման, պետական իշխանության ու կառավարման բոլոր կառույցների համախմբման, հանրապետության պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ճանապարհին պատերազմական իրավիճակում կառավարման նոր մարմնի ստեղծումը կարևոր քայլ էր, ինչը հնարավորություն է ընձեռել օպերատիվորեն ու մասնագիտորեն լուծելու ծառացած հիմնահարցերը:

Ինքնապաշտպանության համակարգն առավել կատարելագործելու, կենտրոնացված ու միասնական հրամանատարություն և կառավարման արդյունավետ գործող օղակներ ստեղծելու, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, մարտական գործողությունների շրջանում կարգապահության, կարգ ու կանոնի հաստատման հրատապությունն ու անհրաժեշտությունն ամենայն սրությամբ զգացվել են 1992թ. ամառային ռազմարշավի ավարտին:

---

[89] https://yerevan.today/all/politics/62920/ppk-28-qayl,-ory-shrdjadardzayin-eghav-arcaxi-azatamartoum

[90] **Քոչարյան Ռ.,** Նշվ. գիրքը, էջ 188-194:

Экз. №

исх №07
КСО НКР
на 2 листах

БОЕВОЕ РАСПОРЯЖЕНИЕ ПО П В О № _____

КП СТЕПАНАКЕРТ 26.8.92 г. карта I:I00000 изд.I980г.

I.Противник имея абсолютное превосходство в воздухе развивает успешные боевые действия на Мардакертском направлении и активные оборонительные бои по всей линии соприкосновения войск.

Основными районами базирования авиации являются Насосная-30 МИГ-25, Кюрдамир 2 МИГ-25, 2 МИГ-2I, 2 СУ-25, Даляр- 4-5 СУ-24, Кировабад - I0-I2 МИ-24,МИ-8 МТ.

Запасные аэродромы Агдам,Евлах.

Основное направление действия сил авиации противника Кюрдамир (Даляр) водохранилище,Шуша,Красный Базар,Гадрут.

Наиболее характерным способом нанесения БШУ является свободная охота, удар парой по населенным пунктам,высотам и ПУ.

Удар наносится с горизонтального полета,пикирования под небольшим углом и кабрирования.

Высоты пролета и нанесения удара авиации вне зоны воздействия С-I0,ЗСУ-23-4 (высота 5000-6000м) Безнаказанность со стороны сил ПВО позволяет противнику наносить удар с первого,второго и третьего захода на цель. Характер действия при полной безнаказанности - дерзкий.

2. Силы ПВО НКР ведут бой с авиацией противника на малых высотах сосредоточенным и заградительным огнем сил ПВО объекта (района).

3. ЗРБ после совершения марша сосредоточиться в районе 2 км сев.-вост. Шушикенд (0652) и в готовности к занятию СП и прикрытию г.Степанакерт и Аскеранского оборонительного района.

Основные усилия сосредоточить на уничтожении авиации противника в зоне ПВО Степанакерт.

Готовность к занятию СП - I2.00ч. 27.8.92г.

Готовность к открытию огня по ТТХ.

Разведку воздушного противника вести своими силами. Оповещение о нападении противника передавать в сети оповещения НКР.

4. Начальнику связи Сил Самообороны организовать связь с ПУ ЗРБ,КП Степанакерт и оборонительными районами.

43



Иметь радионаправление ЗРБ – КП.

5. Начальнику инженерной службы обеспечить выполнение мероприятий по инженерному оборудованию СП и района сосредотовения ЗРБ.

6. Начальникам тыла и вооружения принять меры к полному обеспечению личного состава и вооружения ЗРБ подготовить расположение и питание личного состава.

7. Командиру Степанакертского ОР выделить охрану района ЗРБ.

8. Начальнику ОМО принять решительные меры по мобилизации военнообязанных для обучения в расчетах комплекса.

9. Об исполнении боевого распоряжения доложить по команде:

О занятии района – немедленно

О готовности и занятии СП к 12.00 ч. 27.8.92 г.

10. Решение на боевые действия командиру ЗРБ представить в Штаб Сил Самообороны к 11.30 27.8.92 г.

ПРЕДСЕДАТЕЛЬ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

Г. ТАРХАНЯН =

Տակավին մարտական գործողությունների ամենաեռուն շրջանում՝ 1992թ. հուլիսի կեսերին, ԻՊԿ նախագահի ղեկավարությամբ արդեն սկսվել էր Արցախում պաշտպանության գոտիների ստեղծումը[91], ինչը թույլ կտար լուծելու վերոհիշյալ խնդիրները: Այդ իսկ նպատակով դեռ այն ժամանակ նախատեսվում էր Արցախի տարածքը բաժանել վեց մարտական գոտիների, հիմնականում՝ Հադրութի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի, Ստեփանակերտի և Շուշիի շրջանների սահմաններում: Մարտական գոտիների տարածքներում տեղակայված ստորաբաժանումները, մարտական ջոկատները, կազմավորումները, անկախ իրենց պատկանելությունից, անվերապահորեն պետք է անցնեին մարտական գոտիների հրամանատարների լրիվ ենթակայության տակ և մարտական գործողություններ վարեին համաձայն միասնական պլանի ու մարտական խնդիրների: Չենթարկվող կազմավորումներն անհապաղ պետք է զինաթափվեին ու կազմացրվեին: Հադրութի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի,

[91] ԱՀՊՆԱ, ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագրերը, գործ № 1, թ. 1: Տես նաև **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., էջ 109-110:

Ստեփանակերտի մարտական գոտիների հրամանատարներ էին նշանակվելու համապատասխանաբար Ա. Աղաբեկյանը, Մ. Մելքոնյանը, Վ. Բալասանյանը, Հ. Բաղմանյանը և Ս. Օհանյանը: Հրամանագրով սահմանված էին նաև հրամանատարների լիազորությունները: Մասնավորապես, նրանց էր անցնում ենթակաների ու ՄԳ-ում գտնվող ստորաբաժանումների և կազմավորումների նկատմամբ ամբողջ իշխանությունը: ՄԳ-ների հրամանատարները պետք է ԻՊԿ որոշումների համաձայն պատասխանատվության գոտիներում պլանավորեին, կազմակերպեին և անցկացնեին մարտական գործողություններ, ինչպես նաև մասնակի (տեղային) մարտեր: Հրամանատարների իրավասությանն էին հանձնվում մարտական տեխնիկայի և նյութատեխնիկական միջոցների բաշխումը, ինչպես նաև ՄԳ-ում գտնվող կազմավորումներում կարգուկանոնի, պահանջվող կարգապահության հսկողությունը և պահպանումը, չենթարկվելու և դիրքերի ինքնակամ լքման փորձերի կանխումը: Այդ ամենի համար հրամանատարները պատասխանատու էին նաև հանրապետության կառավարության առաջ[92]: Բայց և այնպես, Մարտակերտի ռազմաճակատում մարտական գործողությունների սաստկացումը, ադրբեջանական բանակի օգոստոսյան հարձակման կասեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցներն ու ջանքերը խլել են այդ հրամանագրի կենսագործման համար անհրաժեշտ ժամանակի և հնարավորությունների մեծ մասը:

Այդ դժվարություններից, թերևս, ամենաանհաղթահարելին խաղաղ բնակչության անվտանգության խնդիրն էր: Այդ մասին ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանն իր հարցազրույցներից մեկում նկատել է տվել հետևյալը. «Օգոստոսի 23-ի օդային հարձակումը քաղաքի վերջին ռմբակոծությունն էր, երբ ադրբեջանական օդահենները անպատիժ հեռացան մեր տարածքից: Ինչպես գիտենք, դրանից հետո խփվել է թշնամու երեք ռմբակոծիչ: Վերջին օրերի իրադարձությունները ցույց են տալիս, որ ադրբեջանցիները ռիսկ չեն անում Ստեփանակերտը ռմբակոծել: Իրոք, օգոստոսյան ռմբակոծությունը շատերին ստիպեց թողնել Ստեփանակերտը: Ես առաջին հերթին նկատի ունեմ կանանց ու երեխաներին: Բայց հեռանալու պատճառը երևի միայն ռմբակոծությունը չէ, այլև այն, որ անհրաժեշտ է հոգալ երեխաների դպրոց հաճախելու և սոցիալական հարցերը: Պետք է ասել, որ կան նաև շատ վերադարձողներ: Կանանց և երեխաների արտահոսքը քիչ է ազդել հանրապետության պաշտպանունակության

[92] ԱՀՊՆԱ, ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանագրերը, գործ № 1, թ. 1:

վրա: Զինվորների մի մասը գտնում է, որ իրենք ավելի լավ կարող են կռվել, երբ իրենց ընտանիքները գտնվում են անվտանգ վայրերում: Բայց կա նաև երկրորդ մոտեցումը, ըստ որի՝ ազատամարտիկը կարող է հուսալի պաշտպանել իր դիրքերը, երբ գիտի, որ իր ընտանիքը իր ետևում է: Դժվար է ասել, թե այդ երկու մոտեցումներից որն է առավել ճիշտը, բայց Ծահումյանի և Մարտակերտի դեպքերը ցույց տվեցին, որ զինվորները չպետք է ունենան ավելորդ հոգսեր: Ես գտնում եմ, որ եթե կա հստակ պաշտպանական կառույց, ապա բնական է, որ քաղաքացիական բնակչության առկայությունը ոգևորում է մարդկանց: Երբ ճեղքվածք է տալիս պաշտպանական կառուցվածքը, յուրաքանչյուր զինվոր մտածում է, թե ինչպես ապահովի իր ընտանիքի, ունեցվածքի անվտանգությունը:

Վերջին ժամանակներս ահագին գործ է կատարվել Ստեփանակերտի հակաօդային պաշտպանությունն ուժեղացնելու համար: Համոզված եմ, որ այսօր ԼՂՀ մայրաքաղաքը հուսալիորեն պաշտպանված է»[93]:

Մյուս կողմից՝ հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու և ռազմաճակատը կայունացնելու կենսական խնդիրը պահանջում էր արագացնել ԻՊՈՒ-ում սկսված կառուցվածքային բարեփոխումները: Դա թելադրված էր նաև նրանով, որ Արցախի տարածքում ընթացող մարտական գործողությունները թևակոխել էին լայնածավալ ռազմագործողությունների փուլը՝ պայքարի ժամանակակից միջոցների կիրառմամբ, ինչը կտրուկ փոփոխում էր իրավիճակը, պահանջում մարդկային ու նյութական մեծ պաշարների վատնում: ԻՊՈՒ-ի ամառային ռազմարշավի ընթացքում մղված գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս մարտում և ամենօրյա գործունեության ժամանակ Զինված ուժերի կենտրոնացված կառավարման միասնական համակարգի ստեղծմանը, խնդիրների լուծմանը հաստատունություն և նպատակասլացություն հաղորդելու, ԻՊՈՒ-ն Պաշտպանական շրջանների, գումարտակների, դիվիզիոնների, վաշտերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի փոխադրելու, դրանով իսկ այդ ուժերին օպերատիվ ու մարտավարական ինքնուրույնություն տալու անհրաժեշտությունը: «Պաշտպանական շրջանների և շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանի 1992թ. օգոստոսի 14-ի հրամանագրով ստեղծվել են 6 պաշտպանական շրջաններ: Հրամանատարներին հանձնարարվել է վերակազմել

[93] Ս. Սարգսյան. «Մենք անպայման կազատագրենք մեր հողերը», «Արցախ», 8 սեպտեմբերի 1992թ., № 38:

ջոկատները և ձեռնամուխ լինել գումարտակների (դիվիզիոնների), վաշտերի (մարտկոցների), դասակների ու ջոկերի կազմավորմանը:



П Р И К А З
ПРЕДСЕДАТЕЛЯ КОМИТЕТА САМООБОРОНЫ Н К Р
№ 3

"___" августа 1992 г. г.Степанакерт

"Об организации оборонительных районов
и организационно-штатной структуре
районного комплекта сил и средств."

Боевые действия на территории Республики перешли в фазу широкомасштабных боев с применением современных средств борьбы, резко меняющейся обстановки, больших затрат людских и материальных ресурсов. Анализ действий Сил Самообороны в летнем периоде показывает на необходимость создания единой системы централизованного управления силами в бою и повседневной деятельности, твердости и целенаправленности в решении поставленных задач, перевода Сил Самообороны на организационно-штатную структуру оборонительных районов батальонов, дивизионов, рот, придания этим силам оперативной и тактической самостоятельности

П Р И К А З Ы В А Ю:

I. Создать на территории Республики шесть оборонительных районов:-

- Гадрутский оборонительный район
- Мартунинский оборонительный район
- Аскеранский оборонительный район
- Мардакертский оборонительный район
- Шушинский оборонительный район
- Центральный оборонительный
- Части и подразделения центрального подчинения.
(приложение № I Карта оборонительного района)

2. Создать в каждом оборонительном районе на базе имеющи сил и средств с учетом доукомплектования частей и подразделений, находящихся в непосредственном подчинении командира оборонительного района. (приложение № 2. Организационно-штатная структура Сил оборонительного района).

3. Реорганизацию отрядов и переход на новую организационно-штатную структуру провести решением командиров оборонительных районов согласно принятой схеме формирования батальонов (дивизионов), рот, (батарей), взводов и отделений, в срок до 15 сентября 1992 года (приложение № 3)

4. Командирами оборонительных районов (ОР)

НАЗНАЧИТЬ:

- Командиром Гадрутского ОР -АГАБЕКЯНА Артура Александровича
- Командиром Мартунинского ОР - МЕЛКОНЯНА Монте
- Командиром Аскеранского ОР- БАЛАСАНЯНА Виталия Михайловича
- Командиром Мардакертского ОР- БАГИАНЯНА Аликаза
- Командиром Шушинского ОР- КАСПАРЯНА Мартина Ашотовича
- Командиром Центрального ОР - ОГАНЯНА Сейрана Кушеговича

5. Командиры оборонительных районов в срок до 25.08.92 представить в Штаб Сил Самообороны представления на назначение на должности: заместителей, начальников родов войск, отделений, служб и командиров батальонов для утверждения их Председателем Комитета.

6. Назначение командиров рот (батарей) и взводов провести приказом командиров ОР.

Назначение младших командиров - приказом командиров батальонов (отдельных рот).

Выписки из приказов представить в штаб Сил Самообороны к 10.09.1992 г.

7. Заместителям Председателя комитета, командирам ОР, начальникам родов войск и служб в срок до 25 сентября 1992 года представить в Штаб Сил Самообороны материалы на представление к присвоению офицерских званий личному составу назначенному на командные должности (от командира взвода и выше).

Организационно-мобилизационному отделу Штаба Сил Самообороны совместно с финансовой службой спланировать и провести необходимые мероприятия по своевременному выполнению настоящего приказа.

8. Решения командиров ОР и батальонов на организацию и ведение боевых действий, дислокацию и порядок формирования подразделений в новой организационно-штатной структуре представить в Штаб Сил Самообороны к 1.9.1992 г.

9. Приказ довести до командиров батальонов включительно.

10. Об исполнении настоящего приказа доложить Рапортом на имя Председателя Комитета Самообороны Нагорно-Карабахской республики 25.09.1992 г.

11. Приказ разослать в оборонительные районы.

ПРЕДСЕДАТЕЛЬ
КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР =С.САРКИСЯН=

Մինչև նույն թվականի սեպտեմբերի 15-ը նշանակվել են պաշտպանական շրջանների հրամանատարներ: Դեռևս մարտական գոտիների հրամանատարների պաշտոնների համար առաջադրված զինվորական պետերը գրեթե նույնությամբ ու համապատասխանաբար ստանձնել են Արցախի հինգ շրջաններում ու Ստեփանակերտում կազմավորվող ՊԾ-ների հրամանատարությունը[94]:

ՊԾ հրամանատարները մինչև սեպտեմբերի 25-ը ԻՊՈՒ շտաբ՝ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանի հաստատմանն են ներկայացրել տեղակալների, զորատեսակների, բաժանմունքների, ծառայությունների պետերի և գումարտակների հրամանատարների պաշտոններում նշանակումների մասին ներկայացումները: Վաշտերի (մարտկոցների) և դասակների հրամանատարների նշանակումները վերապահվել են ՊԾ-ների հրամանատարների, իսկ կրտսեր հրամանատարական կազմի նշանակումները՝ գումարտակների հրամանատարների իրավասությանը: Նաև սահմանվել են հրամանատարական կազմին սպայական կոչումների շնորհման, կազմակերպական այլ հարցերի լուծման կարգն ու ժամկետները[95]:

Այդ հրամանագրի իրագործումն առաջընթաց կարևոր քայլ էր Արցախում կանոնավոր ու ժամանակակից բանակ ստեղծելու ճանապարհին: Անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկվել են նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցնելու, կանոնավոր ստորաբաժանումներ վերակազմավորելու ուղղությամբ: ԼՂՀ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանի օգոստոսի 29-ի հրամանագրով, նախկին 1-ին, 4-րդ և 6-րդ վաշտերի հիման վրա սկսել են կազմավորվել մոտոհրաձգային գումարտակներ՝ ՊԾ ՄՀԳ հաստիքացուցակի համաձայն:

---

[94] Նախկին խորհրդային սպա Ս. Օհանյանը չհաստատեց ստանձնել Ստեփանակերտի ՊԾ-ի հրամանատարությունը, իսկ ՄԳ-ների ցանկին հավելված Շուշիի ՊԾ-ի հրամանատար պետք է նշանակվեր Մ. Գասպարյանը, սակայն դա էլ տեղի չունեցավ: Հետագայում նշված ՊԾ-ների հրամանատարներ նշանակվեցին համապատասխանաբար Ս. Կարապետյանը և Վ. Իշխանյանը:
[95]Նույն տեղում, հրաման № 2, թ. 3-4:

П Р И К А З
ПРЕДСЕДАТЕЛЯ КОМИТЕТА САМООБОРОНЫ Н К Р
(по л и ч н о м у составу)
№ 5

"29" августа 1992 года г.Степанакерт

В связи с переходом на новую организационно-штатную структуру строительства Сил Самообороны НКР

П Р И К А З Ы В А Ю:

1. Сформировать на базе 1,4 и 6 рот мотострелковые батальоны согласно штату мсб оборонительного района (приложение № 1).

2. Укомплектование личным составом,вооружением и техникой вновь формируемых батальонов провести за счет подразделений Степанакертского гарнизона,мобилизационного резерва и подразделений Центрального оборонительного района.Передачу личного состава,вооружения и техники оформить актами и приемо-сдаточными ведомостями, завершение формирования батальонов отдать приказом по Комитету Самообороны.

3. Начальнику организационно-мобилизационного отдела совместно с командирами формируемых батальонов обеспечить организованное перераспределение личного состава батальонов и призвать необходимое количество военнообязанных запаса на доукомплектование батальонов до полного штата. Доукомплектование офицерских должностей провести за счет наиболее подготовленных, показавших себя с положительной стороны,младших командиров с последующим представлением достойных к присвоению первичных офицерских званий. Обеспечить вновь формируемые подразделения всей необходимой учетной документацией,и оказать практическую помощь в налаживании учета личного состава вооружения и техники

4. Заместителям Председателя Комитета Самообороны,начальникам родов войск и служб Управления в срок до 2.9.92 г. организовать перераспределение и передачу всех материально-технических запасов,вооружения и техники во вновь формируемые батальоны и обеспечить их укомплектование до полного штата мсб.

К I.9.92 г. представить в Штаб Сил Самообороны предложения по расквартированию батальонов в Степанакертском гарнизоне с учетом имеющегося жилого и паркового фонда гарнизона, организации питания банно-прачечного обслуживания и финансового обеспечения.

5. Коменданту Степанакертского гарнизона совместно с командирами батальонов разработать и представить к 2.9.92 г. план организации Гарнизонной и Караульной службы в пунктах дислокации батальонов и гарнизона.

6. Батальоны сформировать:-

- I мотострелковый батальон - I рота, взвод Аго, рота Феликса, взвод Аго из Шоша;
- 2-й мотострелковый батальон - 4 рота, взвод Тиго, группы "Амарас", "Врех", взводы "Вадо", "Шаген", "Боря"
- 3-й мотострелковый батальон - 6 рота, 2 рота, 3 рота, 7 рота.

7. Командирами батальонов назначить:-

- I мсб Гениха
- 2 мсб - Саргсяна Гаго
- 3 мсб Самвела

8. Назначение остальных должностных лиц провести приказом по Комитету Самообороны по представлениям командира оборонительного района, начальников родов войск и служб и командиров батальонов.

9. К формированию мотострелковых батальонов приступить 30 августа I992 г.
Переход батальонов на новые штаты завершить 5 сентября I992 года.
Исполнение доложить рапортом в Штаб Самообороны НКР.

I0. Обращаю внимание командиров всех степеней на поддержание постоянной боевой готовности вновь формируемых подразделений и их способность к немедленному выполнению внезапно-возникающих задач.

II. Контроль за исполнением настоящего приказа возложить на зам. Председателя Комитета Самообороны.

I2. Приказ довести до командиров взвод

ПРЕДСЕДАТЕЛЬ КОМИТЕТА САМООБОРОНЫ

= С.САРКИС

НАЧАЛЬНИК ШТАБА КОМИТЕТА САМООБ

Р.ГЗ

Վերակազմավորվող գումարտակներն անձնակազմով, սպառազինությամբ ու տեխնիկայով համալրվել են Ստեփանակերտի կայազորի ստորաբաժանումների, զորահավաքային ռեզերվի և Կենտրոնական ՊԾ ստորաբաժանումների հենքի վրա: Կազմակերպական-զորահավաքային բաժնի պետին հանձնարարվել է կազմավորվող գումարտակների հրամանատարների հետ համատեղ ապահովել զինանձնակազմերի կազմակերպական վերաբաշխումը և զորակոչել պահեստազորի զինապարտների անհրաժեշտ քանակակազմ՝ մինչև ըստ հաստիքացուցակի գումարտակները լրիվ համալրելը: Սպայական պաշտոնների կազմալրումը կատարվել է ավելի պատրաստված, դրական կողմերով իրենց դրսևորած կրտսեր հրամանատարների թվից՝ հետագայում ներկայացնելով սկզբնական սպայական կոչումների շնորհման: Անհրաժեշտ էր գործնական օգնություն ցուցաբերել անձնակազմի, սպառազինության ու տեխնիկայի հաշվառման գործընթացի կազմակերպմանը: ԻՊԿ նախագահի տեղակալ Ս. Բաբայանին, զորատեսակների ու վարչության ծառայությունների պետերին հանձնարարվում էր մինչև սեպտեմբերի 2-ն ավարտել նյութատեխնիկական բոլոր պաշարների, սպառազինության ու տեխնիկայի վերաբաշխումն ըստ վերակազմավորվող գումարտակների և ապահովել դրանց լրիվ համալրումը ՄՀԳ-ի հաստիքացուցակի համաձայն:

ԻՊՈՒ նոր մարտավարական միավորների՝ գումարտակների կազմավորումը պաշտոնապես սկսվել է 1992թ. օգոստոսի 30-ին: Նոր հաստիքներին անցում կատարելու ավարտի մասին 1992թ. սեպտեմբերի 5-ին զեկուցվել է ԼՂՀ Ինքնապաշպանության շտաբին: Բոլոր աստիճանների հրամանատարների ուշադրությունն է հրավիրվել վերակազմվող ստորաբաժանումներին մշտական մարտական պատրաստության և հանկարծակի առաջացող խնդիրների անհապաղ կատարման ունակության բարձրացման վրա[96]: Այս և արական սեռի բնակչության զորակոչը կենսականորեն անհրաժեշտ քայլեր էին: Զինվորական կանոնավոր կառույցների ստեղծման դրական արդյունքները երկար սպասել չտվեցին թե՛ Պաշտպանության բանակի նախահիմքերը ստեղծելու, թե՛ ռազմաճակատում արմատական բեկում մտցնելու առումով:

Տակավին 1992թ. «Արցախ» թերթի թղթակցի հարցերին պատասխանելով՝ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանն ասել է. «Վիճակը ռազմաճակատում ծանր է, բայց հուսահատվելու հիմք չկա: Ինչ վերաբերում է թշնամուն կանգնեցնելուն, ապա

[96] Նույն տեղում, հրաման № 3, թ. 6-7:

թշնամին արդեն կանգնեցված է: Մեր հողերի ազատագրությանը կհասնենք միայն այդ բանից հետո, երբ բոլորը պարզ հասկանան, որ պատերազմը բոլորի համար է, որ միայն ուրիշների տղաները չեն կռվելու ընդհանուր հայրենիքի համար: Մինչև վերջերս Ղարաբաղի պաշտպանությունը մարդկանց մի խմբի գործ էր միայն: Բայց ռազմական դրություն մտցնելուց հետո, իրավիճակը փոխվել է, և մոտ ժամանակներս մենք կունենանք հաջողություններ»[97]:

Արցախի Հանրապետությունում կանոնավոր բանակի ստեղծման գործում, ինչպես տեսանք, մեծ է եղել Սերժ Սարգսյանի և նրա զինակիցների ավանդը: 1992թ. ամառային ռազմարշավի ժամանակավոր անհաջողություններից համապատասխան հետևություններ կատարելով՝ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ կամ ակտիվ մասնակցությամբ մի շարք անհետաձգելի միջոցառումներ են ձեռնարկվել պետական իշխանության ու կառավարման մարմինների, ինչպես նաև ինքնապաշտպանության համակարգի և հրամանատարության կենտրոնացման, ուժերի ու միջոցների համախմբման ուղղությամբ, ինչը տվել է իր դրական արդյունքները: ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանի հմուտ ղեկավարությամբ ԻՊՈՒ նոր կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցնելուց, այսինքն՝ բանակային ենթակառույցների, պաշտպանական շրջանների ձևավորման աշխատանքներ ձեռնարկելուց հետո, հնարավորություն է ստեղծվել դիմագրավելու հակառակորդի աշնանային լայնածավալ հարձակումներին, համառ պաշտպանական մարտերում հյուծելու նրա ուժերը և դրանով նախադրյալներ ստեղծելու բռնազավթված բնակավայրերի ազատագրման, ԼՂՀ տարածքային ամբողջականության վերականգնման համար:

Այդ մասին, փաստորեն ԻՊԿ նախագահի ժամանակին տված հավաստիացումները հիմնավոր էին ու կյանքի կոչվեցին: Դրանք հնչել էին «Արցախ» թերթի թղթակցի «Ինչպե՞ս է ընթանում զորակոչը: Վերջապես կանոնավոր բանակ կունենա՞նք, և ի՞նչ քայլեր են արվում այդ ուղղությամբ» հարցին ի պատասխան. «Կանոնավոր բանակ ունենալու ենք և ունենալու ենք շուտով: Կռվելով՝ միաժամանակ ստեղծում ենք կանոնավոր բանակ: Այսօրվա դրությամբ ունենք հավատարմության երդում տված կանոնավոր գումարտակներ, ստորաբաժանումներ: Արդեն այդ բանակի հոգսերը հոգացող կա: Հենց իրենք՝ զինվորները, զգում են, որ վերջին ժամանակներում Ձեր ասած սնունդը, ծխախոտը կան: Զորակոչը դեռևս բավարար հիմքերի վրա չէ՝ մանավանդ

[97] Ս. Սարգսյան. «Մոտ օրերս դրությունը կբարելավվի», «Արցախ», 27 օգոստոսի 1992թ., № 34:

Ստեփանակերտում և Մարտակերտի շրջանում: Բայց Հադրութում և Մարտունիում զգալի գործ կատարվել է: Մոտ ժամանակներս բոլոր զորատեսակները կմտնեն ռազմական կառուցվածքի մեջ: Նպատակահարմար եմ գտնում ավելացնելու, որ կռվողների ընտանիքների սոցիալական ապահովվածությունը զգալիորեն կլավանա: Զինվորների ընտանիքներին հատկացվում է սննդամթերք, որպեսզի զինվորը համոզված լինի, որ իր կինը, երեխաները սոված չեն: Հարկային տարբերություն կլինի զինվորի և մյուս ընտանիքների, կռվող և չկռվող ընտանիքների միջև: Բազմազան միջոցներ են նախատեսվում, և մոտ օրերս կիրականացվեն:

Մի խոսքով՝ ես համոզված եմ, որ շուտով իրադրությունը հանրապետությունում կփոխվի: Կփոխվի դեպի լավը»[98]:

Կամավորականից կանոնավոր բանակի անցումը ոչ ամենուր և ոչ բոլոր ջոկատների առումով է հարթ կատարվել: Երբեմն հարկ է եղել նաև ուժ գործադրել անհնազանդ հրամանատարներին կամ ջոկատայիններին կանոնավոր բանակ բերելու համար: Այն ժամանակ էլ որոշակի դժգոհություններ են եղել, որոնց մասին Արցախի Հանրապետության ԳԽ պաշտոնաթերթը բարձրաձայնել է և պարզաբանումներ ստացել անձամբ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանից: Թղթակցի այն հարցին, թե. «Ազատամարտիկներից ենք լսում, որ ռազմաճակատում տեխնիկան քիչ է, որ վառելիք չկա, սնունդն անբավարար է, ծխախոտ չկա, տեխնիկան ուշանում է և այլ կարգի պատճառներ: Ի՞նչ կասեք: Խնդրում եմ անկեղծ լինեք՝ ինչու՞ այս հարցերը չեն լուծվում», նա պատասխանել է. «Ես միշտ էլ անկեղծ եմ պատասխանում՝ զգալով իմ պատասխանատվության աստիճանը, իմ խոսքի գինը: Նշված պրոբլեմներն իրոք կան, բայց ոչ այնքան, ինչպես ասում են: Որ կռվողները քիչ են, դա մեր մեղքը չէ, բանակի մեղքը չէ, դա այն մարդկանց մեղքն է, որոնք ամեն կերպ խոչընդոտում էին հանրապետությունում ռազմական դրություն մտցնելուն: Ընդհանրապես, կամավորության սկզբունքներով բանակ ստեղծելն անհնար է: Չկար զինվորական դատախազ, զինվորական դատարան, ռազմական տրիբունալ: Իրավական հիմք չկա, որ մեկին, օրինակ՝ վախկոտության համար, պատժեինք: Ռազմական դրություն մտցնելուց հետո ունենք զինվորական դատախազ, ռազմական դրության մասին օրենք, կարգապահության մոմենտը զգալիորեն բարելավվել է այսօր: Ինչ վերաբերում է տեխնիկայի պակասին, ապա հմուտ օգտագործելու դեպքում եղած տեխնիկան բավական է թշնամուն

[98] Նույն տեղում:

դիմագրավելու համար: Որոշ տեսակի զինամթերքի պակաս կա, բայց ոչ այնքան, որ անհաջողությունների պատճառ հանդիսանա: Ճիշտ է, ազերիների չափ ռազմական միջոցներ չունենք, բայց շարունակում ենք ստանալ և մեր եղած զինամթերքը գրագետ օգտագործելու դեպքում, հաջողություններ կունենանք: Ինչ վերաբերում է տղաների բողոքին, ապա ամենաշատը դժգոհում են նրանից, որ բոլորը չեն կռվում: Այսօր քաղաքում շրջում են զինվորական պարեկներ, որոնք դասալիքներ են բռնում: Վերջերս կալանավորվել են դասալիքներ և ջոկատի անարժան հրամանատարներ»[99]:

Արցախի Հանրապետության 1992թ. ամառային ռազմարշավի ընդհանուր բնութագիրը տվել է հենց դրանց ղեկավարը՝ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը. «Ռազմաճակատի տարբեր շրջաններում իրավիճակը տարբեր է: Իրավիճակը բարդ է Մարտակերտի շրջանում: Ասկերանում, Մարտունիում, Հադրութում թշնամին միշտ էլ արժանի հակահարված է ստանում և հետ շպրտվում: Օգոստոսի 18-ին, երբ թշնամին սկսած Մաղավուզից մինչև Ցոր հարձակման է անցել, ունենալով գլխավոր ուղղություններ՝ Հադրութում Մելիքջանլու գյուղը, Մարտունիում՝ Ճարտարը, Մարտունի ավանը, Մարտունի-Ասկերան հատվածում՝ Մյուրիշենը, Նորշենը, գլխովին ջախջախվել է Հադրութում՝ տալով 100-ից ավելի զոհ, կորցնելով 7 զրահատեխնիկա, Ճարտարում կորցրել է 3 տանկ, մեծ քանակությամբ հետևակ, Մարտունիում ևս սահմանները անառիկ են: Մեր կողմից զոհվել է 24 ազատամարտիկ, կորցրել ենք 1 տանկ: Այսպիսի հարաբերությունը կարծես մեր օգտին է. թվում է, մեզ պիտի բավարարի, բայց չէինք ցանկանա նույնիսկ մի սպանված ունենալ՝ 1000 ազերիների դիմաց: Վհատվելու հիմքեր չկան, և ես համոզված եմ, որ մոտ ժամանակներս իրավիճակը փոփոխվելու է: Ի դեպ, հունիսի 12-ից սկսած, երբ թշնամին լայնածավալ հարձակման է անցել, ազերիները կորցրել են 70-ից ավելի տանկ: Այդ 70 տանկերից 30-ը մեզ մոտ են, կռվում են իրենց նախկին տերերի՝ ազերիների դեմ, 40-ից ավելին փչացած ընկած են առաջավոր դիրքերում: Ես նկատի չունեմ տանկերի այն քանակը, որ մենք փչացրել ենք, բայց թշնամին հետ քաշվելիս իր հետ տարել է զգալի քանակությամբ զրահատեխնիկա: Թշնամին կենդանի ուժի կորուստ է տվել՝ ավելի քան 2000 զինվոր: Մեր կորուստները հասնում են մոտ 200-ի»[100]:

1992թ. սեպտեմբերի 4-ին իրականացվել է Ինքնապաշտպանության ուժերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի բարեփոխումից հետո առաջին

[99] Ս. Սարգսյան. «Մոտ օրերս դրությունը կբարելավվի», «Արցախ», 27 օգոստոսի 1992թ., № 34:
[100] Նույն տեղում:

ռազմագործողությունը Ասկերանի շրջանի դեռևս 1992թ. հունիսի 12-ին բռնազավթված մի շարք բնակավայրերի ու Մարտունու շրջանի արանքը սեպի պես խրված Աբդալ և Գյուլաբլու գյուղախմբի թշնամական կրակակետերը վնասազերծելու նպատակով: Այդ ռազմագործողության հաջող ելքը լուծել է մի շարք խնդիրներ. վնասազերծվել են ԼՂՀ սահմանամերձ թշնամական կրակակետերը, ազատագրվել են Ասկերանի շրջանի գյուղերը, թշնամուց առգրավված ռազմավարի հաշվին լրացվել է ԻՊՈՒ զինանոցը, վերահսկողության տակ են առնվել մարտավարական կարևոր նշանակության բարձունքներ ու ամրապնդվել են ԻՊՈՒ ստորաբաժանումների դիրքերը, իսկ թշնամին վերջապես զգացել է Արցախի պաշտպանների վերականգնվող ուժը: Այն բարոյահոգեբանական լիցքեր է հաղորդել մի շարք ձախողումներից հուսալքվածներին, ամրապնդել է հավատը սեփական ուժերի նկատմամբ:

«Արցախ» թերթի թղթակցի՝ «Ասկերանի օպերացիայով տեղի է ունեցել արմատական բեկո՞ւմ» հարցին թարմ հետքերով պատասխանելով՝ ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը, մասնավորապես, ասել է. «Դժվար է հստակ ասել, որ դրվել է արմատական բեկման սկիզբը: Նախ այն պատճառով, որ ես միշտ էլ համոզված էի՝ մենք չենք պարտվել և չենք ասել մեր խոսքը և երկրորդ՝ չենք իմանում, թե թշնամին ինչ ուժեր ունի, այնպես որ արմատական բեկման մասին խոսելը դեռ վաղ է: Բայց որ մեր հարվածը Ասկերանի և Մարտունու շրջանների հատման կետում թշնամու համար անսպասելի էր, գուցե և շշմեցնող, պարզ է: Այդ մասին չթաքցրին նաև իրենք. «Նորություններ» լրատվական ծրագրով ադրբեջանցի թղթակիցը շեշտեց, որ Հայաստանի էքսպեդիցիոն կորպուսի ուժերը վերադիրքավորվել և անսպասելի հարված են հասցրել՝ գրավելով ութ բնակավայր: Շատ է օգտագործվում «հայկական էքսպեդիցիոն կորպուս» անունը: Սակայն բոլորին էլ քաջ հայտնի է, որ կռվողների 99 տոկոսը ղարաբաղցիներ են: Ադրբեջանցիները կարծում էին, թե մեզ հետ իրենց հարցերն արդեն լուծել են, որ այսօր կամ վաղը կլինեն Ստեփանակերտում: Ադրբեջանի ղեկավար շրջաններում կան անլուրջ մարդիկ, որոնք ի լուր աշխարհի հայտարարում էին, թե երեք ամսում կլուծեն Ղարաբաղի հարցը, նշում էին ինչ-որ ժամկետներ, թե երբ են թեյ խմելու Ստեփանակերտում կամ Շուշիում: Ճիշտն ասած՝ այս վերջին շրջանում այդ մարդկանց ախորժակը կարծես թե մի քիչ փակվել է և արդեն խոսում են կապույտ սաղավարտների մասին: Հիմա խոսում են, որ իրենք են հրաման տվել չռմբակոծել քաղաքը: Չեմ

իմանում, այդ ո՞ր օրվանից են ադրբեջանական որոշ ղեկավարներ սկսել խղճալ մեզ»[101]:

Այնուհետև, ԻՊԿ նախագահը բացահայտել է թշնամու և յուրային զինվորների բարոյահոգեբանական վիճակը, մարտավարության որոշ տարրեր. «Ես միշտ ասել և կրկնում եմ՝ ադրբեջանցիները կարող են մեզ հետ հաշվի նստել միայն ու միայն այն ժամանակ, երբ զգան, որ իրենց դիմաց ուժ կա: Այդ ուժը նրանք զգացին Ասկերանի օպերացիայի ժամանակ, երբ ընդամենը 4 ժամում մեզ հաջողվեց ազատագրել ութ բնակավայրեր՝ Նախիջևանիկ, Արանզամին, Փիրջամալ, Աղբուլաղ, Դահիրազ, Խրամորթ, Գյուլափլու և Ավդալ: Բոլորին քաջ հայտնի է, որ Գյուլաբլուն ու Աբդալը ոչ թե երկու գյուղեր են, այլ վեց, դա պարզ երևում է քարտեզի վրա: Այս դեպքում մեզ համար գլխավորը ոչ թե գյուղեր գրավելն է, այլ այն, որ մենք ամրապնդեցինք մեր դիրքերը, գրավեցինք մարտավարական կարևոր նշանակություն ունեցող բարձունքներ»[102]:

Սեպտեմբերի 4-ի ռազմագործողության, հատկապես Աբդալի և Գյուլաբլուի վնասազերծման ԻՊԿ մտահղացումներից էր ադրբեջանական հրամանատարության ուշադրությունը Մարտակերտի և Լաչինի օպերատիվ-մարտավարական ուղղություններից շեղելը: Հակառակորդը զգացել է, որ Մարտունու շրջանում ուժ կա և ապարդյուն փորձել է այդտեղով ԻՊՈՒ պաշտպանական բնագծի ճեղքում կատարել: Սեպտեմբերի 5-ին հակառակորդը գրոհ է ձեռնարկել Աբդալի և Գյուլաբլուի ռազմական հենակետերը գրավելու մտադրությամբ: Հայկական դիրքերը հրթիռակոծվել են ռազմական 5 ուղղաթիռներից: Թշնամին մարտի է հանել 16 միավոր զրահատեխնիկա: Անընդհատ գործել է հրետանին: Մարտունու ՊԾ հրամանատար Մ. Մելքոնյանի, գնդապետ Հ. Հարոյանի, Ասկերանի ՊԾ հրամանատար Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, հայ մարտիկները իսկական ջարդ են տվել թշնամուն: Հատկապես տպավորիչ էին կանոնավոր ստորաբաժանումների մեջ համախմբված հայ ազատամարտիկների ու կամավորականների անհատական խիզախությունն ու զանգվածային հերոսությունները, որոնք անվիճելի առավելություն էին տալիս սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով ու կենդանի ուժով գերակշռություն ունեցող հակառակորդի նկատմամբ: Զրահատեխնիկայի հարվածային ուժի շնորհիվ ադրբեջանցիներին հաջողվել էր հասնել մինչև Վարազաբուն, սակայն

[101] Ս. Սարգսյան. «Մենք անպայման կազատագրենք մեր հողերը», «Արցախ», 8 սեպտեմբերի 1992թ., № 38
[102] Նույն տեղում:

հայ մարտիկներն ընդամենը երկու ժամում ստիպել են նրանց դիմել փախուստի՝ մարտադաշտում թողնելով տանկեր (շարքից հանվել ու առգրավվել է 9 միավոր ռազմական տեխնիկա, այդ թվում՝ 6 տանկ, 2 ՀՄՄ, 1 տանկային քարշակ), զենք ու զինամթերք, տասնյակ դիակներ:

Սեպտեմբերի 6-ի կեսօրին հակառակորդը հարձակվել է Ճարտարի ու Մաճկալաշենի ուղղություններով՝ միաժամանակ կատաղի հրթիռահրետակոծության ենթարկելով Գյուլաբլուի հայկական պաշտպանական դիրքերը: Հայ մարտիկները հետ են մղել թշնամու բոլոր գրոհներն ու անսասան են մնացել իրենց դիրքերում: Մաճկալաշենի ու Ճարտարի մատույցներում թողնելով 30 դիակ և ռազմական տեխնիկա՝ թշնամին ստիպված նահանջել է:

Այդ մարտերին ԻՊԿ նախագահի գնահատականը հիշարժան է. «Հաջորդ օրը շատ լուրջ ճակատամարտ տեղի ունեցավ: Մենք առգրավեցինք հակառակորդի 9 ռազմական տեխնիկա, այդ թվում՝ 8 տանկ, հետևակի 2 մարտական մեքենա, 1 տանկային քարշակ: Ոչնչացվեց հակառակորդի զգալի կենդանի ուժ: Կոնկրետ թիվ նշել չեմ կարող: Գերիների հարցաքննությունը դեռ չի ավարտվել: Մեր զինվորների տրամադրությունը մարտական է: Երբ ադրբեջանական բանակը զրահատեխնիկայի օգնությամբ փորձեց ճեղքել պաշտպանությունը, հասավ համարյա մինչև Արանզամին, մեր տղաները ընդամենը 2 ժամում թշնամուն ստիպեցին դիմել փախուստի: Ընդհանրապես, ռազմաճակատի բոլոր գծերում մեր մարտիկների տրամադրությունը բարձրացել է, հավատ կա սեփական ուժերի նկատմամբ: Դրա լավագույն ապացույցը Ճարտար և Մաճկալաշեն գյուղերի վրա ձեռնարկված թշնամական հարձակման հետմղումն է: Մաճկալաշենում ընկած են 30-ից ավելի ազերիների դիակներ, ինչպես նաև մի քանի միավոր զրահատեխնիկա: Նույնը տեղի է ունեցել նաև Ճարտարի ուղղությամբ: Այս պահին շարունակում ենք հարձակումը Մարտակերտի շրջանում և հաջողությամբ շարժվում առաջ»[103]:

Սեպտեմբերի 7-ին Ֆիզուլիի շրջանի Ներքին Դիվանալար գյուղում տեղաբաշխված հակառակորդը, հրետանային նախապատրաստությունից հետո, նոր հարձակում է ձեռնարկել Մաճկալաշեն, Սոս և Ճարտար գյուղերի ուղղությամբ՝ մարտադաշտ նետելով 8 միավոր զրահատեխնիկա և մի քանի հարյուր զինվոր: Առաջանալով Մաճկալաշենի տեղամասում՝ թշնամին մխրճվել է հայկական ստորաբաժանումների պաշտպանության խորքը և գրավել կարևոր

[103] Նույն տեղում:

բարձունքներից մեկը: ԻՊՈՒ մարտիկները կասեցրել են հակառակորդի առաջխաղացումը և ապա ստիպել նրան հետ քաշվելու՝ մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ:

ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Ս. Սարգսյանին հասցեագրված մարտական զեկուցագրում, որը ստորագրել էին գնդապետ Հ. Հարոյանն ու Մարտունու ՊԾ հրամանատար Մ. Մելքոնյանը, մասնավորապես կարդում ենք. «Մարտական խնդիրը լիովին կատարված է: Մարտերի ընթացքում հակառակորդից առգրավվել են 2 տանկ, 3 թնդանոթ, մեծ քանակությամբ զինամթերք (ավտոմատների, գնդացիրների փամփուշտ, տանկի արկ): Ոչնչացվել են մոտ 50 հետևակային, երկու տանկ, մեկ զրահամեքենա: Մեր կողմից տեխնիկայի կորուստներ չեն եղել, մեկ ազատամարտիկ զոհվել է, 14-ը՝ վիրավորվել: Մարտական գործողությունների ժամանակ արիությամբ աչքի ընկած սպաներին ու զինվորներին ներկայացնում եմ պարգևատրման»[104]:

Արցախի Հանրապետության ԻՊՈՒ 1992թ. աշնանային ռազմարշավի մասին ժամանակին ուշագրավ տեղեկություններ է հրապարակել ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը՝ պատասխանելով թղթակցի հարցերին. «Ռազմաճակատի ամբողջ գծում առանձին փոփոխություններ տեղի չեն ունեցել: Վերջին 15 օրվա ընթացքում մղվել են, այսպես ասած, տեղական նշանակության մարտեր: Հիմնականում բարելավել ենք մեր դիրքերը: Ընդհանրապես, այսօր դրության տերը մենք ենք: Հոկտեմբերի 28-ին ադրբեջանական բանակը զանգվածային հարձակման է անցել ռազմաճակատի Մարտակերտի և Ասկերանի ուղղություններով: Երեկոյան կողմ հակառակորդը հետ է շպրտվել՝ մարտադաշտերում թողնելով ավելի քան 60 դիակ: Մեր կողմից զոհվել են ութ ազատամարտիկներ: ՈՉ ՄԻ ՊԱՀԱԿԱԿԵՏ, ՈՉ ՄԻ ԲԱՐՁՈՒՆՔ, ՈՉ ՄԻ ԹԻԶ ՀՈՂ ՉԻ ՀԱՆՁՆՎԵԼ ԹՇՆԱՄՈՒՆ: Ռազմավարական նշանակության դիրքերը, որ գրավել էինք Մարտունու շրջանում, վերահսկում են ինքնապաշտպանության ջոկատները: Որոշակիորեն բարելավել ենք մեր դիրքերը Հադրութի շրջանի Մեծ Թաղերի, Խծաբերդի և սահմանակից Ղութաբլուի շրջանի ուղղություններում: Եվ վերջապես, մարտական հաջողությունները Լաչինի մարդասիրական միջանցքում: Մարդիկ իրենք են զգում այստեղ տեղի ունեցած դրական փոփոխությունները: Ներկայումս ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմը Մարտակերտի շրջանն է: Թեժ մարտեր են ընթանում Չլդրան-Ղազանչի հատվածում: Հոկտեմբերի 29-ի առավոտյան ադրբեջանական

[104] Զեկուցագիրը պահվում էր ՊԲ № 35383 զորամասի օպերատիվ բաժնում: Փաստաթղթի սղագրությունը պահվում է «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում (ֆ. 9 , գ. 7, թ. 23):

զորախմբերը նորից փորձել են ակտիվություն դրսևորել Ասկերանի շրջանում: Բայց հրետանային դիպուկ կրակով ոչնչացվել է հակառակորդի ավտոշարասյան վեց մեքենաներից երկուսը: Խուճապի մատնվելով՝ ադրբեջանական զինյալների մնացորդները դիմել են փախուստի: Այժմ շրջանում իրադրությունը համեմատաբար հանգիստ է: Այստեղ շարունակվում են միայն փոխադարձ հրթիռահրետակոծությունները»[105]:

Փոփոխական հաջողություններով ընթացած մարտական գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանի ռազմական ղեկավարության ձեռնարկած լայնածավալ նախահարձակմանը հնարավոր է եղել դիմակայել միմիայն օգոստոսի 14-ին կազմավորման նոր փուլ թևակոխած ԼՂՀ ԻՊՈՒ-ի, բանակային ենթակառույցների ու ծառայությունների ձևավորման, կենտրոնացված հրամանատարության ու շտաբների համակարգված աշխատանքի, ինչպես նաև հայ զինվորների համընդհանուր հերոսության ու տոկունության, հայրենի հողը պաշտպանելու վճռականության շնորհիվ: Սակայն, քանի դեռ բանակի կազմավորման գործընթացը նոր էր թափ առնում, ապա նրա արդյունքները շոշափելիորեն տեսանելի և ընկալելի էին միայն մի քանի ամիս անց, երբ համառ պաշտպանական մարտերում հյուծելով թվապես ու տեխնիկապես, սպառազինությամբ ու նյութական ռեսուրսներով մի քանի անգամ գերակշռող թշնամական ուժերը, ԻՊՈՒ հրամանատարությունը հող է նախապատրաստել հաջորդ տարվա փետրվարի 5-ի հակահարձակման և հակառակորդի մարտակերտյան, լաչին-քելբաջարյան խմբավորումները ջախջախելու համար:

1992թ. աշնանային և ձմեռային ռազմարշավները (ինչպես նաև 1993թ. հունվարը) բնութագրվում են ռազմական նախաձեռնության համար հակամարտող կողմերի համառ ու անզիջում պայքարով:

Այսպիսով, 1992թ. տարեվերջին ադրբեջանական բանակը փաստորեն ամբողջությամբ սպառել էր իր հարձակողական հնարավորությունները: Ըստ չեզոք աղբյուրների՝ 1992թ. իր իսկ սանձազերծած պատերազմում Ադրբեջանի Հանրապետությունը կորցրել է 3300 մարդ, այդ թվում՝ ավելի քան 2000 զինծառայողներ, իսկ հայերի կորուստները կազմել են 1 հազար զինվոր ու սպա և

[105] Ս. Սարգսյան. «Այսօր դրության տերը մենք ենք». «Արցախ», ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտոնաթերթ, 31 հոկտեմբերի 1992թ., № 59:

1,5 հազար խաղաղ բնակիչներ[106]: Ստեղծվել էր ուժերի իրական հաշվեկշիռ: Ահա թե ինչու ադրբեջանական կողմը հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու պատրաստակամություն էր հայտնում՝ միաժամանակ շարունակելով ռազմական նախապատրաստությունները և ուժի գործադրման սպառնալիքները:

Նախապատրաստվելով 1993թ. ձմեռային ռազմարշավին՝ Ադրբեջանի զինված ուժերը ռազմական տեխնիկայի, սպառազինության, նյութական պաշարների գերակշռություն են ստեղծել ռազմաճակատում և 1993թ. հունվարին հարձակողական գործողություններ ծավալել Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, ինչպես նաև Լաչինի միջանցքի ուղղություններում: Հունվարի վերջին հիմնական հարվածն ուղղվել է Լաչինի շրջանի հայկական պաշտպանական դիրքերի վրա: Այստեղ հայկական ուժերը ձախողել են ադրբեջանական զինված կազմավորումների հարձակումները երկու՝ հյուսիսային (Քելբաջարի ռազմահենադաշտից) և հարավային (Կուբաթլուի ռազմահենադաշտից) ուղղություններով զարգացնելու փորձերը:

1993թ. հունվարին, մարտերի բովում թրծվել ու շարունակել են կազմավորվել ԼՂՀ ԻՊՈՒ զորամասերն ու ստորաբաժանումները: ԻՊԿ շտաբը Ս. Սարգսյանի ղեկավարությամբ աշխատանքներ է տարել մարտերի պլանավորման և կազմակերպման գործում հրամանատարներին օգնելու, բանակային կառույցների ստեղծման ու կենցաղային հարցերը լուծելու ուղղությամբ: Հատկապես մտահոգիչ էր այն հանգամանքը, որ զորամասերում ու շտաբներում դանդաղ էր վճռվում մարտական խնդիրների առաջադրման և լուծման հիմնահարցը: Անթույլատրելի էին մանավանդ մարտական զգոնության ու աչալրջության թուլացման դեպքերը[107]: Այնինչ, հրամանատարները պետք է կարողանային միշտ կտրուկ պատասխանել հակառակորդի գործողություններին, այլապես անխուսափելի էին լինելու անտեղի կորուստները, ինչպես նաև հստակ կազմակերպել մարտական ծառայությունը դիտակետերում, ինչը կբացառեր կամ կխոչընդոտեր թշնամուն անպատիժ կրակ տեղալու խաղաղ բնակավայրերի ու մայրաքաղաքի վրա: Այդ խնդիրները լուծելով՝ անհամեմատ կբարձրանար Հայրենիքի պաշտպանության արդյունավետությունը, ինչին էլ ձեռնամուխ են եղել ԻՊԿ շտաբը և ԻՊՈՒ հրամկազմը:

---

[106] «Содружество», 1995, № 3: Report of Amnesty International Hostages in the Karabakh Conflict. London, April 1993, p. 4: Տես Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство/ Под ред. Р. М. Авакова, А. Г. Лисова, ИМЭМО РАН, М., ЗАО «Финстатинформ», 2000, с. 108:

[107] «Մարտական թերթիկ» (ԼՂՀ ԻՊԿ օրգան), № 1, 1993թ.:

Բանակաշինության ոլորտում ԻՊԿ ձեռնարկած միջոցները հնարավորություն են տվել ԼՂՀ ԻՊՈՒ-ին 1993թ. փետրվար-մարտ ամիսներին մարտական գործողություններ ծավալել Մարտակերտի շրջանի տարածքի հետագա ազատագրման և Ադրբեջանի զինված ուժերի՝ լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախման նպատակով, որը բազմիցս Լաչինի միջանցքը փակելու փորձեր էր ձեռնարկել և լուրջ սպառնալիք էր ներկայացնում Մարտակերտի ուղղությամբ մարտեր մղող ԻՊՈՒ հիմնական խմբավորման համար: 1993թ. հունվարի վերջին և փետրվարի առաջին օրերին ԼՂՀ ռազմաճակատներում տիրող հարաբերական անդորրը պայմանավորված էր պաշտպանական ծանր մարտերում հակառակորդի հարվածային ուժերի նշանակալի հյուծմամբ, ԻՊՈՒ ստորաբաժանումների դիրքերի նպատակասլաց ամրապնդմամբ, նյութական ապահովման ու սպառազինության հիմնահարցերին արդյունավետ լուծումներ գտնելով, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծել հակահարձակողական ակտիվ գործողություններ վարելու համար: Առանց ակտիվ մարտական գործողություններ ծավալելու, ինչը վկայում է դրանք կազմակերպելու՝ ադրբեջանական հրամանատարության անկարողության, ինչպես նաև ներքաղաքական անկայունության մասին, հակառակորդը շարունակել է Հադրութի, Մարտունու և Ասկերանի շրջանների, ԻՊՈՒ ստորաբաժանումների պաշտպանական դիրքերի ու խաղաղ բնակավայրերի հրթիռահրետակոծությունները: Իսկ փետրվար ամսվա մարտական գործողությունները հիմնականում ծավալվել են Մարտակերտի պաշտպանական շրջանում:

Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ձմեռային ռազմարշավի համար նախատեսված հարձակողական ռազմագործողությունը զարգացել է երեք՝ 1) Վաղուհաս-Զագլիկ-Թալիշ, 2) Չլդրան-Դրմբոն-Կուսապատ-Մարտակերտ և 3) Սրխավենդ-Բաշ Գյուլեփայա-Մանիքլու-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ ուղղություններով[108]: Հնգօրյա մարտերի ընթացքում հակառակորդը Արցախի Հանրապետության հյուսիսային ռազմաճակատում որպես ռազմավար թողնելով 4 Տ-72, 2 ՀՄՄ, 2 «ԳԱԶ-66», 2 «Ուրալ» մեքենաներ, 1 թնդանոթ, 3 քարշակ, ստիպված էր նահանջել: Մարտակերտի շրջանում ազատագրվել է 9 բնակավայր[109]:

---

[108] Հանգամանալից տե՛ս **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ.: Է.00.01-«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2001, էջ 97-100: Հմմ.՝ **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, էջ 123-126:

[109] ԱՀՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամաններ, գործ № 4, եր. 27բ:

Այդպիսով ԻՊՈՒ ձմեռային ռազմարշավի արդյունքում հակառակորդից խլվել է ռազմավարական նախաձեռնությունը և բարենպաստ նախադրյալներ են ստեղծվել Մարտակերտի շրջանի բռնազավթված տարածքների վերջնական ազատագրման համար: Ռազմաճակատում հաջողված մարտական գործողությունները վկայել են Արցախի ԻՊՈՒ կայացման ու բանակաշինության դժվարին գործընթացում ունեցած ձեռքբերումների մասին:

1993թ. մարտի 20-ին, այսինքն՝ պաշտոնավարման գրեթե մեկ տարվա գործունեության յուրօրինակ հաշվետվություն կարելի է համարել «Արցախ» թերթի աշխատակից Վիլեն Բախշիյանի հարցազրույցը ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Թղթակցի պաթոսային հարցին ի պատասխան՝ նա հատկանշել է. «Գովեստներ պետք չէ շռայլել: Պատերազմի հաղթական ավարտից հետո միայն կարող ենք ասել՝ ինքնապաշտպանության ուժերը պատվով են կատարել իրենց սուրբ պարտքը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ: Այսօր, իմ խորին համոզմամբ, մեր մարտիկների բացարձակ մեծամասնությունը, իրոք, հիանալի է կռվում անարգ թշնամու դեմ: Հունվարին, երբ մեզ հաջողվեց դիմակայել ադրբեջանական բանակի նոր լայնամասշտաբ հարձակմանը և նրան պատճառել կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի զգալի կորուստներ, համոզվեցինք, որ ժամանակն է շարժվելու առաջ և ջախջախիչ հարվածներ հասցնելու զավթիչներին: Փետրվարի 5-ը, իսկապես, հիշարժան օր է: Մարտակերտի շրջանում սկսած ռազմական օպերացիան, ինչպես դուք ընդգծեցիք, վճռական բեկում է մտցրել ամբողջ ռազմաճակատում: Առաջին իսկ մեծ հաջողությունը հաղթանակի նկատմամբ ամուր հավատ է ներշնչել մեր մարտիկներին, նրանց մղել մահու ու կենաց պայքարի՝ հանուն հայրենիքի ազատության: Արդեն ազատագրվել են շրջանի 27 մեծ ու փոքր գյուղեր, այդ թվում՝ Հաթերքի ամբողջ ենթաշրջանը, Սարսանգի հիդրոհանգույցի ջրամբարտակի գոտին: Վերահսկողության տակ են վերցվել Քելբաջար-Մարտակերտ գլխավոր ավտոմայրուղին և առայժմ բռնազավթված որոշ գյուղերի մի շարք կարևոր բարձունքներ: Ինքնապաշտպանության ուժերի առաջխաղացումն անկասելի է, և մեր նպատակն է՝ ազատագրել ոչ թե առանձին բնակավայրեր, այլ՝ ամբողջ հողը»[110]:

Հակառակորդին թերագնահատելու երանգ պարունակող թղթակցի հարցադրմանը ԻՊԿ նախագահը պատասխանել է. «Ես տրամադրված չեմ

[110] Ս. Սարգսյան. «Մեր առաջխաղացումն անկասելի է», «Արցախ», 20 մարտի 1993թ., № 31:

հեգնանքով արտահայտվելու ադրբեջանական բանակի մասին, ընդհակառակը, հակված եմ մեր դեմ տեսնելու միանգամայն լուրջ հակառակորդի: Բայց այն, որ թշնամին կրում է կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ, խոսում է ինքնապաշտպանության ուժերի օգտին: Փաստերն ավելի քան համոզիչ են: Այս տարվա հունվարին ռազմաճակատի տարբեր գծերում ոչնչացվել են շուրջ 750 ադրբեջանական հետևակայիններ, 17 զրահատեխնիկա, երեք ռազմական ինքնաթիռ ու մեկ ուղղաթիռ: Հետագայում, մանավանդ փետրվարի 5-ից սկսած, հակառակորդը կորցրել է ևս 25 միավոր հրասայլ և ռազմական այլ տեխնիկա: Դրանց որոշ մասն այսօր գտնվում է ռազմաճակատում և խփում է յուրայիններին: Որպես ռազմավար, վերցրել ենք նաև որոշակի քանակությամբ զինամթերք՝ հիմնականում հրետանային արկեր և փամփուշտ, մեծ թվով ավտոմեքենաներ: Մարդկային կորուստներն, ամենահամեստ հաշվումներով, կազմում են ավելի քան 600 ադրբեջանական զինվոր ու սպա: Միայն մարտի 18-ին Ջանյաթաղ և Գյուլաթաղ գյուղերի ազատագրման համար մղված մարտերում հակառակորդը տվել է 21 սպանված: Այդպես է ռազմաճակատի ամբողջ գոտում, այդպես է թշնամու... թիկունքում: Բոլորովին վերջերս մեր հետախույզները թափանցել են ռազմակայանի վերածված Դիվանալար գյուղ (Ֆիզուլիի շրջան), ադրբեջանական զինյալների քթի տակից թռցրել նրանց հրասայլը և, շարժվելով առաջ, լիովին ոչնչացրել հակառակորդի զորանոցը և ամբողջ անձնակազմով վերադարձել իրենց դիրքերը[111]:

Այնուհետև, անդրադառնալով մարտական և ոչ մարտական կորուստներին՝ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը նկատել է տվել. «Հիշյալ շրջանում կորուստներն, իրոք, համեմատաբար շատ են, բայց դրանց միայն 25 տոկոսն ենք տվել անմիջապես մարտերում: Առավել վտանգավոր է դարձել, եթե կարելի է այսպես ասել, ոչ մարտական իրավիճակը: Ինչպես գիտեք, ներկայումս ռազմական գործողությունների հիմնական թատերաբեմը Մարտակերտի շրջանն է, իսկ այստեղ ահեղ մարտերը շարունակվում են անցյալ տարվա հունիսի 12-ից, հաճախ միևնույն տարածքը քանիցս անցել է ձեռքից ձեռք և, բնական է, որ պատերազմող կողմերը տվյալ գոտում ստեղծել են իրենց ականապատ դաշտերը: Մենք ականազերծում ենք այդ տարածքները, որտեղ հնարավոր է' օգտագործում

[111] Ավելի հանգամանալից տե՛ս Հակոբյան Կ., Սոսի արծիվները (ազատամարտիկի հուշեր): «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), 13 (155-166), 2019; Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյան, Ծուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2020, էջ 125-128: Հմմտ.՝ թվայնացված տարբերակի հետ (https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2019(13)_ocr.pdf):

շրջանցող ճանապարհները, սակայն թեկուզև ժամանակի առումով գործնականում անհնարին է լիովին վերացնել մահացու վտանգը»[112]:

Թղթակցի այն հարցին, թե որպես ԻՊԿ նախագահ, ինչպես է վերաբերվում բանակցային գործընթացին, Ս. Սարգսյանը պատասխանել է. «Անձամբ ինձ համար պարզ է մի բան. ղարաբաղյան հիմնահարցը վճռվում է ոչ թե Հռոմում, Բաքվում կամ մեկ ուրիշ տեղ, այլ՝ ռազմադաշտում: Մենք, իհարկե, դեմ չենք հանդիպումներին ու բանակցություններին, եղել և մնում ենք Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակիցներ: Մեր վզին փաթաթված պատերազմը, սակայն, մեզ ստիպել է զենք վերցնել և պաշտպանել հողն հայրենի: Պետք է գիտակցենք, որ մեզ կհարգեն ու մեզ հետ՝ ինչպես հավասարը հավասարի, հաշվի կնստեն այն ժամանակ, երբ լիովին ազատագրենք մեր տարածքները և հուսալիորեն պաշտպանենք սահմանները»[113]:

Այս խոսքերը հարիր են հաղթանակ կերտող հրամանատարին, հայրենիքի պաշտպանության և ազատագրման գործին նվիրված ժողովրդի ու ինքնապաշտպանության ուժերի վստահությունը վայելող ղեկավարին, որոնց ճշմարտացիությունը բռնեց կյանքի դաժան փորձությունը:

Արցախի ԻՊՈՒ կազմակերպական ու մարտավարական առաջընթացի մասին է վկայել նաև Քելբաջարի ռազմագործողությունը, ինչը թելադրված էր Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ԻՊՈՒ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու, խաղաղ բնակչության վերադարձի անվտանգությունն ապահովելու, Լաչինի միջանցքի վրա մշտական սպառնալիքը նվազեցնելու[114*] և լաչին-քելբաջարյան խմբավորումը ջախջախելու անհրաժեշտությամբ: Քելբաջարի շրջանի ազատագրումը կարևոր էր նաև Հայաստանի հետ ցամաքային կապի՝ երկրորդ կյանքի ճանապարհի բացման, ինչպես նաև Օմարի բարձրադիր լեռնանցքում, ռազմավարական առումով՝ նպաստավոր ու տիրապետող բնագծերում Արցախի Հանրապետության հյուսիսարևմտյան սահմաններին հակառակորդի մշտական սպառնալիքին ավելի դյուրությամբ ու հուսալիորեն դիմագրավելու նկատառումներով:

Պատմական Քարվաճառի ազատագրման ռազմական գործողության օպերատիվ պլանը փոխգնդապետ Սամվել Բաբայանը Դրմբոնում տեղակայված

---

[112] Ս. Սարգսյան. «Մեր առաջխաղացումն անկասելի է», «Արցախ», 20 մարտի 1993թ., № 31:
[113] Նույն տեղում:
[114*]Իսպառ վերացման մասին խոսք կարող է գնալ միայն Կուբաթլուի վնասազերծումից (1993թ. օգոստոս) հետո:

կենտրոնական շտաբում քննարկեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի, Պաշտպանական շրջանների հրամանատարներ Նորայր Դանիելյանի, Մոնթե Մելքոնյանի մասնակցությամբ: Պլանին հավանություն են տվել նաև ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանը, ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, Գուրգեն Դալիբալթայանը, Քրիստափոր Իվանյանը, ԻՊՈՒ շտաբի պետ Անատոլի Զինևիչը և ուրիշներ:

Վազգեն Մանուկյանը հիշում է. «Ես նրան (ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին.– Հ.Խ.) զեկուցեցի այդ օպերացիայի փոքր մասը միայն, և, ստանալով նրա համաձայնությունը, մենք արեցինք ավելին»[115]:

Նորից ամենայն սրությամբ ծառացավ պատասխանատվության ստանձնման հարցը, և այն, ինչպես նախկինում, հանձնառել է ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը: Այդ մասին հետագայում վկայել է Ս. Բաբայանը. «…Քելբաջարի շրջանի ռազմագործողությունը մշակել եմ ես, սակայն Վազգեն Մանուկյանն ու Սերժ Սարգսյանն արդեն պատասխանատվություն էին կրում (այսինքն՝ ի տարբերություն որոշ բարձրաստիճան գործիչների՝ չէին խուսափել իրենց վրա վերցնել պատասխանատվությունը.-Մ.Հ.)»[116]:

Մարտակերտի շրջանի բռնազավթված ու զորակայանների վերածված գյուղերում թշնամին կենդանի ուժ և ռազմական տեխնիկա է կուտակել, նախապատրաստվելով նոր, լայնածավալ հարձակման: Հաշվի առնելով շրջանի հայ բնակչությանը սպառնացող իրական վտանգը՝ Արցախի Հանրապետության ԻՊՈՒ հրամանատարությունը մշակել է անհետաձգելի միջոցառումներ վերադարձող խաղաղ բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով: Բացի այդ, ավելորդ չէ կրկնել, որ Լաչինի շրջակա տարածքը և Արցախը Հայաստանի Հանրապետությունից կտրելու՝ այսպես կոչված Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի համառ փորձերը, ինչպես նաև անմիջական սպառնալիքը Մարտակերտ շրջկենտրոնի ուղղությամբ ազատագրական մարտեր մղող Արցախի Հանրապետության ԻՊՈՒ հիմնական զորամասերի թիկունքին, մարտ ամսվա վերջին օրակարգի հարց են դարձրել հակառակորդի լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախումը: Մարտական

---

[115] **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ, Մարգարյան Ս.,** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդակնչ 44, էջ 89:
[116] Նույն տեղում, էջ 322:

գործողությունները սկսվել են մարտի 27-ին, որոնց նախորդել են մանրազնին հետախուզությունն ու հրամանատարների՝ իրենց շտաբների հետ կատարած նախապատրաստական համակողմանի աշխատանքները: Լեռնային ծանր պայմանները, զրահատեխնիկայի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև բնակավայրերում հակառակորդի կենդանի ուժի ու սպառազինության մեծ կուտակումները դժվարացրել են ԻՊՈՒ ստորաբաժանումների առաջխաղացումը: Փորձելով շեղել ԻՊՈՒ կազմավորումների ուշադրությունն արևմտյան ռազմաճակատից՝ հակառակորդը, հրետանու աջակցությամբ, նոր հարձակում է ձեռնարկել Պուշկեն յալի հայկական դիրքերի ուղղությամբ: Հարձակումը բարեհաջող հետ է մղվել: Մարտի 29-ին ինքնապաշտպանության ուժերն ազատագրել են Մարտակերտի շրջանի Չարեքտար գյուղը և, շարունակելով առաջխաղացումը, ճնշել են Ենիքենդ, Աղջաքենդ գյուղերի կրակակետերը: Մարտի 29-30-ին ԻՊՈՒ զորամասերն առաջ անցնելով Աղդաբանից 2-3 կմ, իսկ Չարեքտարից՝ 5 կմ՝ ազատագրել են Չարեքտարից հյուսիս-արևելք ընկած Վանք գյուղը և հայկական ճարտարապետության հին կոթող Դադիվանքը (Խութավանք)[117]: Մարտավարական բարենպաստ դիրքերում գտնվող հակառակորդը զգալի կորուստներ է կրել: Միայն Չարեքտար գյուղի համար մղված գիշերային մարտերում ինքնապաշտպանության ուժերն առգրավել են 2 թնդանոթ, 2 ՀԱՆ-17 տիպի նռնականետ և 1 ԴԾԿ[118]: Ազատագրվող բնակավայրերից մշտապես հրետակոծվել ու ավազակային հարձակումների են ենթարկվել Մարտակերտի շրջանի բնակավայրերը: Գետավանցի ազատամարտիկներն Աղդաբանում և նշված մյուս գյուղերում տեսել և ճանաչել են իրենց ու հարևան գյուղերից դեռևս 1992-ի ամռանը կողոպտված իրերն ու կահկարասին, հայատառ գործվածքով ազգային գորգեր, ավարառված հեռուստացույցներ ու սառնարաններ[119]:

Ազատագրական մարտերին զուգընթաց, փետրվար-մարտ ամիսներին շարունակվել է Արցախի զինված ուժերի կազմավորումը ԻՊԿ-ի ղեկավարությամբ: Բոլոր աստիճանների հրամանատարներն ու շտաբները քրտնաջան աշխատանք են կատարել զորամասերի և ստորաբաժանումների հետագա կազմավորման, նրանց համալրման ու լրակազմավորման ուղղությամբ: Հայրենիքի

---

[117] Տես **Հարությունյան Մ.,** 1993թ. մարտի 30. Ազատագրվեց Դադիվանքը, «Մարտիկ», № 11, 1998թ., էջ 3:

[118] **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ.- «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 131:

[119] «Մարտական թերթիկ», 1993թ., № 3:

պաշտպանների շարքերը համալրել են 18 տարեկան պատանիները, որոնք համապատասխան պատրաստություն են անցել Ուսումնական կենտրոնում:

Կատարելագործվել է զորքերի կառավարումը, շտաբները սկսել են ավելի ըմբռնումով մոտենալ ու զբաղվել մարտական գործողությունների կազմակերպման ու կառավարման հարցերով: Բոլոր մակարդակների հրամանատարները զորամասերի և ստորաբաժանումների կառավարման, մարտական գործողությունների կազմակերպման ու լեռնային տեղանքի, դաժան ձմռան պայմաններում մարտը ղեկավարելու փորձ են ձեռք բերել: Կատարելագործվել է հրետանու, հետախույզների ուսումնական կենտրոններում զորքերի մարտական և սպաների հրամանատարական նախապատրաստումը: Աստիճանաբար ծավալվել է մեկօրյա հավաքների, ինչպես նաև զորամասեր մեկնելու մեթոդով շտաբների ու պաշտպանական ուղղությունների ծառայությունների սպաների նախապատրաստումը: Կատարելագործվել է մարտի ընթացքում տեխնիկայի ու սպառազինության շահագործման, նորոգման ու սպասարկման կազմակերպումը: Ծարունակվել են տեխնիկայի ու սպառազինության վերանորոգման բազայի հզորացումն ու կատարելագործումը: Թիկունքային մատակարարման կատարելագործման, զորքերի կարիքներին ու պահանջմունքներին նրա համապատասխանեցման ուղղությամբ նշանակալի աշխատանք են կատարել ԻՊԿ-ի, պաշտպանական շրջանների և զորամասերի թիկունքի աշխատողները:

Фил.2 32

П Р И К А З

ПРЕДСЕДАТЕЛЯ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

№ 18

"12" марта 1993 г. г.Степанакерт

" О проведении инвентаризации государственного имущества в Комитете Самообороны НКР и его подразделениях"

В целях уточнения реального состояния зданий и сооружений, боевой техники, транспортных средств, средств связи, вооружений, вещевого имущества, продовольствия и других материальных ценностей, руководствуясь приказом МО РА № 234 от II.I2.92 г.

П Р И К А З Ы В А Ю :

I. Создать Центральные инвентаризационные комиссии в КСО НКР :

а) по обсуждению результатов инвентаризации военной техники, средств связи, вооружения, инвентаря боевого назначения и других материальных ценностей;

- п/п-к Усунц Вячеслав Самвелович-председатель комиссии
- м-р Мелкумян Размик Сароевич-член комиссии
- ст.л-нт.Михаелян Вазген Багратович-член комиссии
- ст.л-нт.Саркисян Валерик Семенович-член комиссии
- ст.л-нт.Мелкумян Владимир Артемович-член комиссии
- л-нт.Амбарцумян Амик Мовсесович-член комиссии.

б) по обсуждению результатов инвентаризации зданий, сооружений, строительных объектов, транспортных средств, инвентаря, приборов, вещевого имущества, продовольствия и других материальных ценностей;

- к-н Саакян Бако Саакович-председатель комиссии
- к-н Саркисян Ваик Кавказович-член комиссии
- ст.л-нт.Григорян Славик Артаваздович-член комиссии
- ст.л-нт.Давидян Виген Богданович-член комиссии
- ст.л-нт.Давидян Гамлет Багратович-член комиссии
- ст.л-нт Захарян Александр Владимирович-член комиссии
- л-нт.Галстян Сейран Рубенович-член комиссии

2. Председателям центральных комиссий п/п-ку Усунцу В.С, капитану Саакяну Б.С., отдельными приказами создать рабочие комиссии по проведению инвентаризации основных средств и материальных ценностей, находящихся в распоряжении КСО НКР.

- результаты инвентаризации оформить актом и составить соответствующие ведомости;

- инвентаризацию завершить в 30-дневный срок.

3. Командирам всех подразделений Сил Самообороны начальнику ОМО, районным военным комиссарам:

- в целях быстрого и качественного проведения инвентаризации соответствующим приказом создать Центральные и рабочие комиссии;

- результаты инвентаризации рабочих комиссий обсудить в центральных комиссиях и копии материалов до 30.04.93 представить соответствующим центральным комиссиям КСО НКР: по вооружению - п/полковнику Уснунцу В.С., по тылу, КЭС и другим направлениям - капитану Саакяну Б.С.

- при выявлении, по результатам инвентаризации, недостач, порчи и других злоупотреблений материалы протоколировать отдельно и представить соответствующим центральным комиссиям КСО НКР,

- результаты инвентаризации оформить актами и сличительными ведомостями;

- инвентаризацию завершить в 30-дневный срок;

- центральным комиссиям КСО НКР отдельно представить списки тех основных средств, техники, зданий, сооружений и т.д., пострадавших в результате авиабомбежек, артобстрелов и других причин.

4. Председателям центральных комиссий КСО НКР обобщить, оформить в установленном порядке и утвердить результаты инвентаризации, полученных из подразделений.

По результатам инвентаризации подготовить информацию и представить в ГКО НКР.

5. Ответственность за выполнение настоящего приказа возложить на командиров подразделений, нач. ОМО и военных комиссаров.

6. Контроль исполнения настоящего приказа возложить на председателей центральных комиссий КСО НКР.

7. Начальнику КЭС КСО НКР ст.л-ту Григоряну С.А.

- с целью уточнения реального состояния и количества военного имущества, основных средств и других ценностей,

- учитывая необходимость взятия на учет указанных объектов и закрепления материально-ответственных лиц,

- исходя из необходимости оформления паспортов различных объектов и имущества, находящихся в ведении КСО НКР, а также решения вопросов связанных с ремонтно-восстановительными работами;

- создать специальную комиссию и до I августа 1993 года провести инвентаризацию на местах. Одновременно проверить точность про-



- 3 -

ведомных в подразделениях инвентаризаций, обсудить результаты и представить соответствующие предложения и рекомендации.

8. Приказ объявить всему личному составу Сил Самообороны в части их касающейся.

ПРЕДСЕДАТЕЛЬ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

=С. САРКИСЯН=

Թերություններով հանդերձ, բարելավվել է մարտական գործողությունների բժշկական ապահովման կազմակերպումը: Հատկանշելով ձեռք բերված հաջողությունները, հայրենի գյուղերն ազատագրող մարտիկների ու հրամանատարների արիությունը՝ սխալ կլիներ շրջանցել թերությունները: Դրանց մասին բարձրաձայնում և այդ թերություններն օր առաջ շտկելու անհրաժեշտության մասին խոսում էր նաև ԻՊԿ ղեկավարը: Մարտական գործողությունների կազմակերպման ու անցկացման վերլուծությունը ցույց է տվել, որ երբեմն ցածր մակարդակով էին լուծվում մարտական գործողությունների պլանավորման և հատկապես դրանց համակողմանի ապահովման, փոխգործակցության կազմակերպման հարցերը: Մինչև վերջ չէր լուծվել նվաճված բնագծերում ստորաբաժանումների դիրքերի ամրապնդման և հակառակորդի հրետակոծություններից նրանց պաշտպանության կարևոր հարցը, ինչի հետևանքով չարդարացված կորուստներ են եղել: Ցածր մակարդակի վրա էր մարտական գործողությունների ինժեներական ապահովումը, մասնավորապես վատ են կազմակերպվել ինժեներական հետախուզումը, ճանապարհների ականազերծումը: Դեռևս լուծված չէր պաշտպանության առաջին գծի

ինժեներական սարքավորման հարցը: Շատ թերություններ ու բացթողումներ են եղել հակաօդային պաշտպանությունում, ինչի հետևանքով չի օգտագործվել մի քանի նշանակետերի խոցման հնարավորությունը[120]:

Այս ամենով հանդերձ, շարունակելով թշնամու կողմից զավթված Մարտակերտի շրջանի ազատագրման՝ փետրվար-մարտ ամիսների մարտական հաջող գործողությունները, ԻՊ ուժերը Արցախի Հանրապետության հյուսիսարևմտյան մասում ապրիլի սկզբին անմիջականորեն հասել են նախկին պետական սահմանին: Նպատակ ունենալով ոչնչացնել հակառակորդի կրակակետերը և ձգտելով ընդլայնել ու վտանգազերծել կենսականորեն կարևոր Լաչինի միջանցքը՝ ԻՊ ուժերը վճռական հարձակման են անցել Քելբաջարի՝ պատմական Քարվաճառի (կամ Ծարի մելիքության) ուղղությունում:

Ինքնապաշտպանության ուժերն առաջ են շարժվել երեք տարբեր ուղղություններով՝ նպատակ ունենալով վերջնականապես ջախջախել հակառակորդի լաչին-քելբաջարյան խմբավորումը և հուսալիորեն փակել Օմարի բարձրադիր լեռնանցքը: Զինապաշարի, վառելիքի ու մյուս նյութատեխնիկական միջոցների պակասով հանդերձ, հայ մարտիկների արիության և տոկունության, հայրենի հողն ազատագրելու վճռականության, հրամանատարների ու շտաբների կազմակերպական աշխատանքների շնորհիվ ԻՊՈՒ զորամասերն ու ստորաբաժանումները հաջողությամբ կատարել են իրենց առջև դրված խնդիրները: Գրագետ ու հմտորեն են գործել հրետանավորներն ու կապավորները, ինժեներական ծառայության զինվորները: Բոլոր ստորաբաժանումների փոխհամագործակցությունն ու հմուտ ղեկավարումը կանխորոշել են ձեռք բերված հաջողությունները: ԻՊՈՒ զորամասերի հաղթարշավը շարունակվել է նաև հաջորդ օրերին և պսակվել հակառակորդի՝ լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախմամբ[121]: Հակառակորդն անզոր է գտնվել որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու: Տարերային դիմադրության օջախները վերացնելով՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները կրնկակոխ հետապնդել են հակառակորդին: Լաչինի ու Մարտակերտի շրջաններից հասցված միաժամանակյա հարվածով Արցախի Հանրապետության ԻՊՈՒ զորամասերը ապրիլի 2-ին տիրել են Քելբաջար-Գանձակ

---

[120] Տե՛ս Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի համապատասխան հրամանը, ԱՀՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., л. 50, գույքահամար 9: (Инв. N 15/2-9): Հմմտ.՝ Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի 1993թ. փետրվար-մարտ ամիսների մարտական գործողությունների մասին, «Մարտիկ», № 6, 1993թ.:

[121] ԱՀՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամանները, գործ № 4, թ. 48:

խճուղու թունելին, ապա՝ Քելբաջար շրջկենտրոնին: Ծարունակելով թշնամու կրակակետերի վնասազերծումը՝ Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ստորաբաժանումները վերահսկողության տակ են առել Քելբաջարի շրջանի ռազմավարական բնագծերը, իսկ այնուհետև փոխհամագործակցելով Արևելյան զորախմբի ստորաբաժանումների հետ՝ զարգացրել են հարձակումը և դուրս եկել Օմարի ռազմավարական լեռնանցքը:

Ամենաթեժ մարտերի մասին ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը վկայել է հետևյալը. «Ամենահամառ մարտերը մղվում էին Աղդաբան-Չարեքտար-Նարեշտար ուղղության վրա և թունելի շրջակայքում: Հետագայում ադրբեջանական զինվորական ստորաբաժանումները ոչ մի դիմադրություն ցույց չտվեցին և նահանջեցին: Ահա, թե ինչու զգալիորեն քիչ եղան Քելբաջարի խաղաղ բնակիչների, ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի և ադրբեջանական զինծառայողների կորուստները»[122]:

Այսպիսով, Մարտակերտի, Մարտունու և Ծուշիի ՊԾ-ների կողմից համատեղ անցկացված կայծակնային ռազմագործողությունն ավարտվել է այսպես կոչված Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախումով, ինչը ձախողել է հակառակորդի զավթողական մտադրությունները, ապահովել անվտանգ երթևեկությունը «Կյանքի ճանապարհով»: Մարտերով ազատագրվել են երկու տասնյակից ավելի գյուղեր, ռազմավար են վերցվել զգալի քանակությամբ զենք ու զինամթերք, մարտական տեխնիկա և մեքենաներ[123]: Օմարի լեռնանցքի վրա վերահսկողության սահմանումը նկատելիորեն ամրապնդել է ԻՊՈՒ դիրքերը՝ ցնցող հարված հասցրել թշնամուն, ի չիք դարձնելով նրա զավթողական նկրտումներն այդ շրջանում: Մարտերում աչքի են ընկել №№ 48183, 47722 զորամասերի, Մարտունու ՊԾ, Ծուշիի ՊԾ հետախուզական դասակի և այլ ստորաբաժանումների անձնակազմերը[124]:

Նմանապես հաջող են ընթացել միաժամանակ Հադրութի, Մարտունու և Մարտակերտի ՊԾ-ներում ծավալված պաշտպանական ու հարձակողական մարտերը[125]: Հարավ-արևելքում Հադրութի և Մարտունու ՊԾ-ների համատեղ

---

[122] Ս. Սարգսյան. «Մենք նպատակ չունեինք վնասել քաղաքացիական բնակչությանը», «Հայաստանի Հանրապետություն» (ՀՀ Գերագույն խորհրդի օրաթերթ), 10 ապրիլի 1993թ., № 69:
[123] Նույն տեղում, թ. 54-56:
[124] ԱՀՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., л. 54-56:
[125] **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, էջ 134-137:

ջանքերով գրավված կարևոր նշանակության Խազազ, Ծահիրուվեն յալ բարձունքները, Ղաջար, Գովշաթլու և Դիվանալար բնակավայրերը, որոնք ադրբեջանական զինված կազմավորումների համար հենակետեր էին Արցախի Հանրապետության տարածք ներխուժելու համար, չեզոքացրել են սպառնալիքը: Դրա հետ մեկտեղ, Մարտունու ՊԾ-ում ձեռք բերված անառարկելի հաջողությունների համապատկերի վրա նշմարվել է հարձակմամբ գրավված դիրքերում և բնագծերում ամրանալու մարտիկների չվարժված լինելը: Դիրքերը բազմիցս հանձնելը և վերագրավելը կամ ձեռքից ձեռք անցնելը, վկայում են, որ կրտսեր հրամանատարները պատշաճ կերպով չեն մշակել նոր գրավված բնագծերում ամրանալու հարցերը: Հաշվի չեն առնվել տեղանքի մարտավարական առանձնահատկությունները, բացակայել է ամուր կարգապահությունը: Դա պարզորոշ երևացել է Մարտունու ՊԾ-ում մղված, հատկապես Ոսկեբլուր (Կըզըլկայա) սարի, 631,8 բարձունքի մարտական գործողությունների վերլուծությունից[126]:

ԻՊՈՒ-ի ձեռնարկած հակահարձակողական ու պաշտպանական մարտերը, ընդհանուր առմամբ, թեև հաջող էին, սակայն, դեռևս ուղեկցվել են մի շարք թերություններով:

Ունենալով անհրաժեշտ քանակությամբ միջոցներ՝ այն անարդյունավետ կերպով է պայքարել թշնամական նշանակետերի դեմ, որից օգտվելով՝ հակառակորդի օդուժը բազմիցս ներխուժել է Արցախի Հանրապետության օդային տարածքը և հրթիռառմբային հարվածներ հասցրել խաղաղ բնակավայրերին[127]: Այս ամենով հանդերձ, բանակի կազմակերպման ու շինարարության նախնական փուլը որակական նոր առաջընթաց է ապրել: Դա հաստատվել է ապրիլ ամսում ձեռք բերված մարտական բարձր հաջողություններով: Փետրվարյան մարտական գործողություններում սկզբնավորված բեկումը հետագա զարգացում է ապրել, հակառակորդը կորցրել է նախաձեռնությունը[128]:

Թեև 1993թ. մայիս ամիսը համեմատաբար հանգիստ է անցել, սակայն ադրբեջանական զինված կազմավորումների ակտիվ տեղաշարժերը, զենքի ու զինամթերքի, ինչպես նաև կենդանի ուժի և տեխնիկայի կուտակումները ռազմաճակատի տարբեր հատվածներում, որոնք ուղեկցվել են հրթիռահրետանային հարվածներով, փաստել են ռազմագործողություններն

[126] Արցախի Հանրապետության ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., л. 55:
[127] Նույն տեղում:
[128] Նույն տեղում:

ակտիվացնելու հակառակորդի մտադրությունները: Միաժամանակ չեն հանգստացել կրքերը՝ կապված Քելբաջարի շրջանի կրակակետերի վնասազերծման հետ: Մի շարք երկրների խաղաղարարական ջանքերը հակասել են հակամարտող կողմերից որևէ մեկի կենսական շահերին: Եվ ինչպես միշտ, ստեղծված իրավիճակը հակառակորդը փորձել է ծառայացնել պատերազմի սաստկացման նպատակին՝ շարունակելով սադրանքները ռազմաճակատում և տեղեկատվության ոլորտում:

Հակառակորդին զսպելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Դրանցից հատկանշելի է Ծահումյանի շրջանը բռնազավթած թշնամու թիկունքում մղվող գործողությունների նկատելի ակտիվացումը: Ընդհանրապես հարկ է ընդգծել պարտիզանական պայքարի լավագույն ավանդույթների շարունակման և Արցախի Հանրապետության պաշտպանության գործում դրա ունեցած դերը: Պարտիզանական մարտերում կոփված Ծահումյանի ու Մարտակերտի շրջանների արժանի զավակները հետագայում միավորվել են զորամասի մեջ և կազմավորել Ծուհումյանի պաշտպանական շրջանը, որը դարձել է ՊԲ մարտունակ զորամասերից մեկը և նշանակալի ավանդ է ունեցել Արցախի Հանրապետության հյուսիսային սահմանների պաշտպանության գործում:

Թեև ակտիվ հարձակողական ռազմագործողություններ չեն վարվել, սակայն տեղի ունեցող դիրքային մարտերն ինքնին հստակ պատկերացում են տվել թշնամական այն բնակավայրերի ու դրանցում առկա կրակակետերի աշխարհագրության մասին, որոնք ագրեսիվ վարքով ու սադրիչ չարագործություններով վաղ թե ուշ իրենց վրա էին հրավիրելու կամ հրահրելու հայ վրիժառու բազկի հակահարվածը, որն անխուսափելի էր, նախևառաջ՝ Արցախի անվտանգությունը և հայ ազգաբնակչության նորմալ կենսագործունեությունն ապահովելու առումներով:

Բանակաշինության ոլորտում ինտենսիվ կերպով աշխատանքներ են տարվել օրավուր աճող ու բարդացող մարտական խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ ենթակառույցները և նյութատեխնիկական բազան բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, մայիսին շարունակվել է մարտական պատրաստության, անձնակազմերի համապատասխան քանակության ապահովման և ՊԾ-ներում նրանց տեղավորվածության, կենցաղային պայմանների հետագա բարելավման գործընթացը:



ПРИКАЗ

ПРЕДСЕДАТЕЛЯ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

№ 38

"16" мая 1993 г. г.Степанакерт

Подразделения КСО НКР ведут упорные бои с противником, проявляя массовый героизм и верность воинскому долгу.

В ходе боевой жизни возникает и необходимость представления личному составу краткосрочных отпусков(за свой счет) по семейным и другим обстоятельствам,с выездом из районов боевых действий или за пределы НКР.В большинстве своем воины решают свои дела в установленные сроки и своевременно возвращаются в строй.

Вместе с тем за последнее время участились случаи опоздания и длительного незаконного отсутствия личного состава в подразделениях.Эти ненормальные явления подрывают боеспособность подразделений,отрицательно сказываются на состоянии дисциплины и порядка в войсках.

В целях наведения должного порядка в представлении краткосрочных отпусков личному составу

ПРИКАЗЫВАЮ:

I. Командирам всех степеней навести должный порядок в вопросах представления краткосрочных отпусков личному составу. Ужесточить требовательность к опоздавшим,вплоть до предания их суду военного трибунала.Краткосрочные отпуска представлять личному составу только с выходом из боя,в период отдыха или переформирования.

2. Определить продолжительность краткосрочного отпуска по семейным обстоятельствам до 3-х суток,при стихийных бедствиях до 5-и суток,при смерти родных(мать,отец,жена ,дети,родные братья, сестры,бабушка,дедушка)-7 суток.

Краткосрочные отпуска представляются согласно поданного рапорта военнослужащего,оформляется приказом по данному подразделению и выписка представляется начальнику финансового довольствия.

3. Начальникам финансового довольствия всех подразделений- в каждом конкретном случае произвести необходимые перерасчеты и удержать по ведомости соответствующую сумму с денежного довольствия убывающих в краткосрочный отпуск военнослужащих.

- 2 -

4. Право на представление краткосрочного отпуска представить командирам рот и вышестоящим прямым начальникам.

Разрешение на право выезда за пределы НКР представить штабу КСО НКР.

5. Контроль за исполнением настоящего приказа возложить на командиров подразделений.

6. Приказ довести до всего личного состава КСО НКР.

ПРЕДСЕДАТЕЛЬ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

С.А.САРКИСЯН

Վերադառնալով ռազմաճակատային իրադրությանը՝ հիշեցնենք, որ 1993թ. ապրիլի սկզբին ԻՊ ուժերն, ավարտելով հակառակորդի քելբաջարյան զորախմբի ջախջախման ռազմագործողությունը, պլանավորել և, ուժերի ու միջոցների վերախմբավորում կատարելով, ձեռնամուխ են եղել առաջին կիսամյակի

մարտական գործողությունների եզրափակիչ փուլի՝ Մարտակերտի գործողության պլանավորմանն ու նախապատրաստմանը: Հունիսի 12-ին 2-րդ, 3-րդ, 5-րդ ՊԾ և Կենտրոնական ենթակայության զորամասերը, 4-րդ ՊԾ մի քանի ստորաբաժանումներ սկսել են Մարտակերտ քաղաքի և համանուն շրջանի բռնազավթված մասի ազատագրման խոշորամասշտաբ գործողությունը: Ընկճելով հակառակորդի 3-րդ մոտոհրաձգային բրիգադի, ներքին զորքերի բրիգադի, տանկային բրիգադի զորամասերի համառ դիմադրությունը, հաղթահարելով համատարած ականադաշտերը, հրետանու, տանկերի հարուցած արգելքները և ի չիք դարձնելով նրա սպառազինության առումով ու օդում ունեցած բացարձակ տիրապետությունը՝ ԻՊՈՒ-ն Աղդամի ուղղությունում գրավել են օպերատիվ ու մարտավարական առումներով շահավետ բարձունքներ և բնագծեր[129]: Մարտերի ընթացքում հայկական կողմը կորուստներ է ունեցել, հերոսի մահով զոհվել է նաև Մարտունու ՊԾ հրամանատար Մոնթե Մելքոնյանը, որի ավանդը բանակաշինության և Արցախի սահմանների պաշտպանության գործում նշանակալի է[130]: Պատահական չէ, որ նրա անվան հետ են կապում Մարտունու ՊԾ-ի՝ որպես մարտունակ զորամասի կազմավորման, մարտական ուղու և հրամանատարների աստղաբույլի ձևավորման գործընթացները:

Զորաշարժով բարդ մարտական խնդիրներ կատարելու ԻՊՈՒ ընդունակության մասին է վկայել Շուշիի ՊԾ-ի հունիսի 14-ի զորաշարժը: Փոխհամագործակցելով Շահբուլաղի ու Փափրավենդի ուղղություններով գրոհող Ասկերանի և Կենտրոնական ՊԾ-ների հետ, զարգացնելով հաջողությունը և հակահարձակման անցնելով հյուսիսարևելյան ուղղությամբ՝ Շուշիի ՊԾ-ի ստորաբաժանումները մեծապես նպաստել են Մարտակերտ քաղաքի ազատագրմանը, քանի որ 819,7 բարձունքում (Թազախաչին յալում) շրջապատման մեջ հայտնվելու սպառնալիքը ստիպել է հակառակորդին թողնել Մարտակերտը[131]: Ճնշվել են նաև Մեծ Ջինլի, Ալիմադաթլի, Մոլլալար և Քյուրդլար գյուղերի թշնամական կրակակետերը[132]:

---

[129] Արցախի Հանրապետության ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. N 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР ном.: 017, л. 40:

[130] Տե՛ս տողերիս հեղինակի անդրադարձները հերոսի կերպարին. Անուն, որ սրբություն է մեզ համար, «Մարտիկ», 2004թ., № 49, Նրա հիշատակը համազոր է կենդանի ներկայությանը, «Մարտիկ», 2008 թ., № 47, Հերոսի ծննդյան օրը, «Մարտիկ», 2009 թ., № 47, Իշխեց իր բանակն ազնվությամբ, «Մարտիկ», 2011թ., № 47, Հիշատակը՝ համազոր կենդանի ներկայությանը, «Մարտիկ», 2012թ., № 47, Հերոսի վերջին մարտը, «Մարտիկ», 2013 թ., № 22, Հերոսները, «Մարտիկ», 2015 թ., № 19-20:

[131] «Մարտիկ», 1993թ., № 21:

[132] Արցախի Հանրապետության ՊՆԱ, ՕՀԱՏ, № 151, եր. 68ա:

Այսպիսով 2-րդ, 3-րդ ՊԾ զորամասերը, 4-րդ ՊԾ ուժերի մի մասը և 6-րդ ՊԾ ստորաբաժանումները, գրավելով օպերատիվ ու մարտավարական առումներով շահավետ բարձունքներ ու բնագծեր, դուրս են եկել Աղդամ-Մարտակերտ մայրուղու բնագիծը: Հակառակորդը, զգալի կորուստներ կրելով Մարզիլլի, Խրամորթ, Փափրավենդ գյուղերի շրջանում, ստիպված էր ռազմաճակատի Կուբաթլուի, Ջաբրայիլի և Մարտակերտի ուղղություններից այստեղ տեղափոխել կենդանի ուժ և տեխնիկա, դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծելով Մարտակերտի լեռնաշղթայի վրա հակառակորդի ջախջախման, Մարտակերտ քաղաքն ազատագրելու և հիմնական ուժերը Խրամորթ-Բոյահմեդլի-Փափրավենդ-Մարտակերտ-Մատաղիս բնագիծ դուրս բերելու գլխավոր նպատակն իրագործելու համար[133]: Տևական ու դաժան մարտերից հետո ազատագրվել են Աղդարա (Հեռուստաաշտարակ) և Թազախաչին յալ (Պուշկեն յալ) բարձունքները: Փաստորեն հունիսի 26-ին[134*] 4-րդ ՊԾ զորամասերը մտել են Մարտակերտ քաղաքը, որով ավարտվել է մարտակերտյան ռազմագործողությունը: 3-րդ, 5-րդ, 6-րդ ՊԾ զորամասերն անցել են գերիշխող բարձունքների, մասնավորապես՝ Եդդիխրման, Բուզդաղ լեռների, Բոյահմեդլի, Փափրավենդ, Թազախաչին յալ, Աղդարա լեռնաշղթայի վրայով ձգվող գծի և հիմնական ճանապարհների պաշտպանությանը[135]: Հունիսի 27-ին հայ մարտիկներն ամրապնդվել են Ներքին Հոռաթաղում, Աղաբեկալինջում, Մատաղիսի մոտակա բարձունքների վրա: Հունիսի 28-ին ադրբեջանցի զավթիչները շրջկենտրոնից հալածվել են 2-3 կմ անդին: Մարտակերտ քաղաքի ազատագրումն ունեցել է ռազմաքաղաքական կարևոր նշանակություն: Նախ, շշմեցուցիչ հարվածներ է ստացել հակառակորդի մարտակերտյան խմբավորումը, ԻՊՈՒ կազմավորումները, տիրելով նպաստավոր բնագծերի, ավելի հուսալի պաշտպանություն են բռնել: Ակնհայտորեն, առանց Մարտակերտի ազատագրման, անհնարին էր ճնշել Աղդամի վտանգավոր կրակակետերը: Բարոյահոգեբանական առումով Մարտակերտի ազատագրումը բարենպաստ ներգործություն է ունեցել համանուն շրջան վերադարձող խաղաղ բնակչության, Ադրբեջանի նախահարձակման հետևանքով ավերված բնակավայրերի վերակառուցման ու փախստականների բնակեցման, շրջանի երբեմնի տնտեսական ներուժը վերականգնելու համար: Այդ ռազմագործողության

[133] ԱՀՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամաններ, գործ № 4, թ. 40:
[134*] Մարտակերտի ազատագրման օրը նշվում էր հունիսի 27-ին կամ 28-ին:
[135] **Հարությունյան Մ.,** Մարտակերտի ազատագրումը. ընթացքն ու արդյունքները, «Մարտիկ», 1998թ., № 24, էջ 2:

արդյունքները վկայել են Արցախում բանակաշինության ոլորտում առաջընթացի մասին:

Հուլիս ամսվա առաջին օրերին կարճատև ու տեղային բնույթ կրող մարտական գործողություններ են ընթացել Հադրութի շրջանի՝ թշնամու կողմից օկուպացված տարածքում: 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ ԱՄՀԳՄ-ների և 83-րդ ՄՀԲ-ի ուժերով անցկացված կարճատև ռազմագործողությունների արդյունքում ազատագրվել են հայկական մի քանի բնակավայրեր, վերահսկողության տակ են առնվել կարևոր, շրջակայքի վրա գերիշխող բարձունքներ և ոչնչացվել հակառակորդի այն կրակակետերը, որոնցից մշտապես հրետակոծվում էին Հադրութ շրջկենտրոնը և մյուս խաղաղ բնակավայրերը: Ըստ երևույթին Հադրութի և Մարտակերտի ՊԾ-ներում ԻՊՈՒ զորամասերի ակտիվ գործողությունները նպատակ են ունեցել շեղելու հակառակորդի ուշադրությունը Աղդամի ուղղությունից, որի վտանգավոր կրակակետերի ճնշման համար ԻՊՈՒ շտաբը ծրագրել էր լայնածավալ հակահարձակում:

Հիրավի, Աղդամն Արցախի դեմ հակառակորդի ռազմական գլխավոր ու ամենավտանգավոր հենադաշտն էր, որտեղից մշտական սպառնալիքի տակ էին պահվում Արցախի Հանրապետության արևելյան եզրերը, սահմանամերձ բնակավայրերը, այդ թվում՝ Ասկերանը, ինչպես նաև մայրաքաղաք Ստեփանակերտը: Ադրբեջանցի ռազմավարներն Աղդամը համարել են Ստեփանակերտ ներխուժելու ամենակարճ ճանապարհը: 1991թ. վերջերին և 1992թ. ամբողջ ընթացքում ադրբեջանական զինված կազմավորումներն Աղդամից բազմիցս փորձել են ճեղքել Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի արևելյան բնագծերը, բայց ամեն անգամ հետ են շպրտվել, անգամ ժամանակավոր հաջողություններից հետո: Հնարավոր չէ առանց սոսկումի հիշել Աղդամում տեղակայված կրակակետերից Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի և Ստեփանակերտի բարբարոսական հրթիռակոծությունները, արկ ու հրթիռի պայթյուններից երեխաների ու կանանց քրքրված մարմինները... Արցախի անձնվեր պաշտպանները ձեռնարկել են շատերին աննախադեպ թվացող համարձակ քայլ՝ վնասազերծել են Աղդամի կրակակետերը և ռազմական հենակետը:

Նոր ծավալներ ու չափեր ընդունող, ինչպես նաև արդիական զինատեսակների կիրառմամբ ընթացող պատերազմի տրամաբանությունը գալիս էր փաստելու, որ այսպես կոչված Ադրբեջանի տենդագին

նախապատրաստությունները, սպառազինության ու կենդանի ուժի բազմապատկումը նպատակաուղղված են եղել Արցախի Հանրապետության դեմ լայնածավալ մարտական գործողությունների վերսկսմանը, հետևաբար անհրաժեշտ էր հակառակորդին նախօրոք զրկել այնպիսի կարևոր ռազմավարական հենադաշտից, ինչպիսին Աղդամն էր, ինչը հնարավորություն կընձեռեր գոնե Ասկերան-Ստեփանակերտ ուղղությունում սահմանափակելու ադրբեջանցիների դիրքային առավելությունը, ի դերև հանելու ամենակարճ ճանապարհով հանրապետության մայրաքաղաք հասնելու հակառակորդի հույսերը: ԻՊՈՒ ռազմավարական և օպերատիվ-մարտավարական խնդիրները թելադրել են իրականացնելու Աղդամի հենադաշտի վնասազերծումը, ինչը կարող էր վճռական բեկում մտցնել Ադրբեջանի սանձազերծած պատերազմում:

Բնականաբար, լավ հասկանալով այդ ռազմագործողության կարևորությունը, Ինքնապաշտպանության կոմիտեն՝ Ս. Սարգսյանի նախագահությամբ, լուրջ նախապատրաստական աշխատանքներ է իրականացրել ինչպես կազմակերպական-հաստիքային բարելավումների, այնպես էլ զորքերի խմբավորման ու լրահամալրման, սպառազինման ու նպաստավոր բնագծերի տիրելու առումներով:

1993թ. հուլիսի 4-ին սկսված ռազմական գործողությունը պսակվել է հաջողությամբ և հուլիսի 23-ին Աղդամն անցել է Արցախի Հանրապետության ԻՊՈՒ-ի վերահսկողության տակ՝ շնորհիվ հարավից Մարտունու ՊԾ-ի, հարավ-արևմուտքից Ասկերանի ՊԾ-ի և հյուսիս-արևմուտքից Կենտրոնական պաշտպանական շրջանի, ինչպես նաև այլ ստորաբաժանումների համաձայնեցված գործողությունների: Արդյունքում վերացել է Ստեփանակերտի գլխին դամոկլյան սրի պես կախված մահացու վտանգը, մայրաքաղաքի ու շրջակա գյուղերի բնակիչներն ի վերջո ազատ շունչ են քաշել: Հակառակորդին հասցվել է ռազմական ու բարոյահոգեբանական խորտակիչ հարված: Աղդամը հաղորդակցության ուղիների կարևոր հանգույց էր, որից հակառակորդին զրկելը կաթվածահար էր արել ոչ միայն Արցախի Հանրապետության արևելյան, այլև հարավային սահմանների երկայնքով կենտրոնացված խմբավորումների նախահարձակ գործողությունները և նրանց թիկունքային ապահովումը: Պատահական չէր, որ այսպես կոչված Ադրբեջանի ղեկավարությունը վերջապես տեղի է տվել և անմիջապես դիմել է Արցախի Հանրապետության ղեկավարությանը՝ կրակի դադարեցման խնդրանքով, ինչը հնարավորություն

կտար հակառակորդին շշմեցուցիչ հարվածից ու խայտառակ պարտությունից ուշքի գալու և լուծելու Աղդամի հենադաշտի կորստին անխուսափելիորեն հետևած բազմաթիվ հիմնախնդիրները:

Արցախի ինքնապաշտպանության ուժերը տիրել են նպաստավոր բնագծերի ու ռազմավարական առումով շահավետ դիրքերի, ստեղծելով Արցախի Հանրապետության շուրջ, մանավանդ՝ նրա կենտրոնի համար, կենսականորեն անհրաժեշտ անվտանգության գոտի: Անտարակույս, Աղդամի ազատագրումը, որով խորտակվել է այսպես կոչված Ադրբեջանի բարոյահոգեբանական ամրոցը, պատմական անհրաժեշտություն էր և թելադրված էր ԻՊՈՒ-ի ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական խնդիրներից[136]: Արցախի հայ ազգաբնակչությունը Ծուշիից հետո, թերևս, մեկ էլ Աղդամի պարագայում այլընտրանք չուներ, բացի ագրեսիայի այդ մշտական աղբյուրը վերացնելուց:

Վերլուծելով Աղդամի ռազմագործողության ընթացքում և դրան հաջորդած իրադարձությունները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ այդ կարևոր հաղթանակը խթանել է մարտական բարդ խնդիրների կատարմամբ ուղեկցվող բանակաշինության գործընթացում հրամանատարների արհեստավարժության բարձրացմանը, նրանց գործառութային պարտականությունների իմացությանը ու արդյունավետ կիրառմանը, ենթակա ստորաբաժանումների ու անձնակազմի գործողությունների ներդաշնակմանը, առաջադրված բարդ խնդիրների լուծմանը:Աղդամի ռազմագործողության ժամանակ ԻՊՈՒ ստորաբաժանումների ու զորատեսակների հրամանատարների մասնագիտական աճի և զորքերի ղեկավարման ու մարտավարության կատարելագործման փաստը նշվել է նաև հրամանատարության կողմից: Ինչպես Պաշտպանության բանակի հրամանատարի՝ «1993թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ինքնապաշտպանության ուժերի մարտական գործողությունների արդյունքների մասին» հրամանում է արձանագրված՝ Աղդամի ռազմագործողության նախապատրաստման ու անցկացման գործում մեծ ավանդ են ունեցել Ասկերանի, Մարտունու և Կենտրոնական ՊԾ-ների, ինչպես նաև կենտրոնական ենթակայության հրետանավորները, որոնք գործել են հմտորեն ու գրագետ, դրանով իսկ նպաստելով հաջողությանը: Մշտապես զգալով ռազմամթերքի պակաս՝ հրետանավորները կարողացել են հասնել առավելագույնին, շնորհիվ ճշգրիտ հասցված կրակային հարվածների և առկա միջոցների արդյունավետ

[136] **Հարությունյան Մ.,** Վերստին Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 7, էջ 198:

օգտագործման: Հրամանատարների և շտաբների կազմակերպական մեծ աշխատանքի, մարտական գործողությունների փորձի կուտակման, մարտիկների զանգվածային հերոսության և անձնվիրության շնորհիվ Աղդամի ռազմագործողությունը հաջողվել է անցկացնել նվազագույն կարճ ժամկետում և ռազմաճակատի այս հատվածում ավարտել հակառակորդի լրիվ ջախջախումը[137]:

Այլ հեղինակներ ևս համամիտ են, որ Աղդամի ռազմագործողությունը պլանավորման, կրակի կառավարման, կրակային խոցման ասպարեզներում ոչ միայն կենտրոնական ենթակայության, այլև գնդային հրետանու բարձր մակարդակի հասնելու վկայությունն էր[138]:

Աղդամի ռազմագործողությունը ոգևորիչ ազդեցություն է ունեցել Արցախի ԻՊՈՒ մարտիկների վրա՝ բարձրացնելով նրանց մարտական ոգին և ամրապնդելով հավատը սեփական ուժերի նկատմամբ: Հրամանատարները ձեռք են բերել մարտավարական հմտություններ և զորքերը ղեկավարելու փորձ: Հակառակորդից առգրավված մեծաքանակ սպառազինությունը և տեխնիկան նշանակալիորեն համալրել են ԻՊՈՒ զինանոցը: Այս ամենը, եթե հավելենք նաև Աղդամի վնասազերծումից ու ներքաղաքական հերթական լարվածությունից հետո Ադրբեջանին թեկուզ և կարճատև հրադադարի պարտադրումը, բնականաբար, բարենպաստ պայմաններ է ստեղծել անհետաձգելի քայլեր ձեռնարկելու զորքերի մարտունակության, կարգապահության և, իհարկե, վերահսկողության տակ առնված նոր բնագծերում ամրապնդվելու ուղղությամբ:

Մասնավորապես, ինչպես նշված է վերոհիշյալ հրամանում, հուլիս-օգոստոսյան մարտական գործողություններում, ընդհանուր առմամբ, բոլոր ծառայություններն ու զորատեսակները հանդես են բերել բավական բարձր մակարդակ: Նկատելի էր շտաբներում աշխատանքի ոճի ու մեթոդների կատարելագործման միտում, շտաբայինների բարձր պատասխանատվություն և իրենց մասնագիտության մեջ հմտանալու ձգտում: Մեծ առաջընթաց է նկատվել մարտական գործողությունների առավել հիմնավոր նախապատրաստման ու պլանավորման ուղղությամբ[139]:

Հուլիսի երկրորդ կեսին Արցախի Հանրապետության ԻՊԿ շտաբը տեղափոխվել է նոր շենք և հիմնականում ավարտվել են ծառայությունների

---

[137] ԱՀ ՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամանագրեր, գործ № 4, թ. 74:
[138] **Դևրիկյան Տ.**, Աղդամի ազատագրումը, «Հայ զինվոր», 2011թ., № 32, էջ 10:
[139] ԱՀՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամանագրեր, գործ № 4, թ. 76:

տեղավորումը, որոնք անցել են բնականոն գործունեության[140]: Ծտաբի նախկին շենքում տեղավորվել է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նորաստեղծ նախարարությունը, փաստորեն, ստանձնելով ռազմական հաղթանակները դիվանագիտական ճակատում ամրապնդելու էստաֆետը:

Թեև դրականորեն են նշվել Աղդամի ռազմագործողության ժամանակ մեկական ինքնաթիռ և ուղղաթիռ ցած գցելու, ինչպես նաև ՀՕՊ տեխնիկայի մի շարք վերանորոգողական-կանխարգելիչ աշխատանքների, մասնավորապես՝ ԲՄ-11 և ԲՄ-12 մեքենաների վերանորոգման ու մյուս սարքերի և համակարգերի անսարքությունների վերացման հաջողությունները, միաժամանակ, բարձրաձայնվել է Լեռնային Ղարաբաղի բարդ ռելիեֆի պայմաններում տարբեր համակարգերի նորմալ գործունեության կարգավորման, փոխգործակցության ու փոխհամալրման ուղղությամբ մեծածավալ աշխատանք տանելու անհրաժեշտության մասին: Մանավանդ, որ հենց այդ թերություններով էին պայմանավորված հակառակորդի ՌՕՈՒ հանկարծակի ու անպատիժ հարձակումները, որոնք ուղեկցվում էին խաղաղ քաղաքների, գյուղերի ու ԻՊՈՒ դիրքերի ռմբակոծանիչ հարվածներով[141]:

Զգալի աշխատանքներ են կատարվել ինժեներական ծառայության գծով: Հաջողվել է նվազեցնել սեփական ու հակառակորդի ականների վրա կորուստներ կրելու դեպքերը, թեև եղածն էլ ոչ մի արդարացում չուներ: Աղդամի ռազմագործողությանը նախապատրաստման և բուն ընթացքի ժամանակ թույլ տրված սխալները հաշվի առնելով՝ խնդիր է դրվել ընդլայնել կանխարգելիչ միջոցառումներն ու նախազգուշացումները, ինչպես նաև ականների որոնման ու ոչնչացման աշխատանքները:

Միաժամանակ արձանագրվել են ականազերծման մեծածավալ աշխատանքները Շելլի-Աղդամ, Մուղանլու-Աղդամ, Աղդամ-Գյոյթեփե ուղղություններով, ինչպես նաև «Պուշկեն յալ»-Փափրավենդ-Շահբուլաղ տեղամասում և Աղդամի օդանավակայանի շրջանում: «Դրանից բացի այստեղ,-նշված է հրամանում,- սարքավորվել են երկարաժամկետ կրակակետեր և

---

[140] Նույն տեղում:

[141] Նույն տեղում, թ. 77: Տե՛ս նաև «Արցախի Հանրապետության դատական իշխանություն» հանդես, № 3, 2012 թ., էջ 39-45:

կրակային դիրքեր: Տարբեր ուղղություններով կարգի են բերվում և բացվում են ճանապարհներ զրահատեխնիկայի համար»[142]:

ԻՊՈՒ հրամանատարությանը հուզել է նաև մարտի վարման ժամանակ զգոնության ու մարտական աչալրջության ուժեղացման հարցը, որի վկայությունն է դրա մասին հատուկ հրամանի ընդունումը: Այնտեղ, 1993թ. առաջին կեսի մարտական գործողությունների վերլուծության հիման վրա նշվում են թերությունները և չարդարացված կորուստները, հրամայվում է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ[143]:

Թեև հուլիսի սկզբին հետախուզության առանձին ստորաբաժանումների հիման վրա ստեղծվել էր հետախուզական գումարտակ, բայց ՊԲ հրամանատարը գոհ չէր հետախուզությունից: Հրամանում նշվել է, որ հնարավորությունների չափով չէր գործել ԻՊԿ հետախուզության բաժինը: «Հետախուզաորոնողական աշխատանք, գործնականում, չի տարվում: Հակառակորդի մասին տվյալները կա՛մ ընդհանրապես բացակայում են, կա՛մ ստացվում են ուշացումով: Ոչ հստակ է կազմակերպված հետախուզության գործունեությունը պաշտպանական շրջաններում»[144]:

Դրան հակառակ, բավական հուսալի է գործել կապը՝ մարտում ստորաբաժանումները ղեկավարելու ժամանակ: Առկա սարքավորումներն օգտագործվել են գրագետ ու բանիմացաբար: Աղդամի կրակակետերի ճնշման ժամանակ մեծ օգնություն է ցուցաբերել ռադիոէլեկտրոնային պայքարի դասակը: Մասնավորապես կազմակերպվել է շուրջօրյա մարտական հերթապահություն և ակտիվ աշխատանք է տարվել հակառակորդի զորքերի ղեկավարման ժամանակ կապի կազմալուծման նպատակով հիմնական օբյեկտների ճնշման ուղղությամբ[145]:

Հրամանում շեշտվել է բաց ռադիոփոխանակումների ժամանակ գաղտնիության ռեժիմի բարձիթողի վիճակը, որն արտահայտվել է միանգամայն գաղտնի տեղեկույթը բաց տեքստով հաղորդելու դեպքերով: Դրանից բացի, ցավով է արձանագրվել, որ ռադիոեթերը զբաղեցվում է գործին չվերաբերող խոսակցություններով[146]:

---

[142] Նույն տեղում: Տե՛ս նաև **Հարությունյան Մ.,** Վերստին Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 7, էջ 200-201:

[143] Նույն տեղում, թ. 60:

[144] Նույն տեղում, թ. 77:

[145] Նույն տեղում, թ. 78: Տե՛ս նաև **Հարությունյան Մ.,** Վերստին Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Կաճառ», Գիրք 7(83-84), 2013., էջ 201:

[146] Նույն տեղում:

Նշվել է նաև վերանորոգողների անձնուրաց աշխատանքը: Հուլիս-օգոստոս ամիսներին նրանց կողմից վիթխարի աշխատանք է տարվել զրահատեխնիկայի, ավտոփոխադրամիջոցների ու սպառազինության նորոգման և վերականգնման ուղղությամբ: Մասնավորապես վերանորոգվել է 19 միավոր Տ-72 տանկ, 56 միավոր ՀՄՄ-1, ՀՄՄ-2, ՄՎՏՄ, 4 միավոր «Գրադ» կայանք, 75 միավոր ԿԳՏ, ԴԾԿ, ԿԳԱ, «Ուտյոս» տիպի գնդացիրներ: Անմիջապես մարտական դիրքերում մեծածավալ աշխատանքներ են տարել արտագնա բրիգադները՝ տեղում վերանորոգելով 18 միավոր Տ-72 տանկ և 16 միավոր ՀՄՄ-1, ՀՄՄ-2[147]:

Անբավարար է համարվել կազմզորահավաքային բաժնի աշխատանքը: Մասնավորապես նշվել է, որ դեռևս չեն զորակոչվել բոլոր այն անձինք, որոնք պատերազմական ժամանակ ենթակա են զորակոչի: Տարբեր պատճառներով զինապարտությունից ազատված քաղաքացիները ոչ միշտ են ունեցել համապատասխան փաստաթղթեր, իսկ եղածն էլ հաճախ հնացած էր բժշկական հանձնաժողովի հետազոտման վաղեմության առումով[148]:

Հաջողությունների ու թերությունների վերհանումը ԻՊՈՒ հրամանատարությանը հնարավորություն է ընձեռել անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու դրականի զարգացման, իսկ բացասականի վերացման ուղղությամբ: Այդ նպատակով ՊԲ հրամանատարի տեղակալներին, ՊԾ-ների ու գումարտակների հրամանատարներին հրամայվել է խիստ միջոցներ ձեռնարկել զինվորական կարգապահության հետագա ամրապնդման, առկա թերությունների շտկման, զորամասերի մարտունակության բարձրացման ուղղությամբ և սեղմ ժամկետում ՊԲ շտաբ ներկայացնել զորատեսակների ու ենթակա ստորաբաժանումների մարտունակության մասին տեղեկանք: ՊԲ շտաբի կապի պետին հրամայվել է վերահսկողության տակ վերցնել գաղտնի տեղեկությունների հաղորդումը, պայքար ծավալել ալիքների փակման և ռադիոփոխանակումների ժամանակ գաղտնիության պահպանման համար[149]:

Աղդամի կրակակետերի ճնշումը, հակառակորդին ստիպելով որոշ ժամանակ դադարեցնել մարտական գործողությունները, հնարավորություն է տվել ի հակակշիռ Ադրբեջանի ռազմական նախապատրաստությունների, ավելի մեծ ուշադրություն հատկացնել բանակաշինության գործընթացին: ԻՊԿ նախագահի

---

[147] Նույն տեղում: Տե՛ս նաև **Հարությունյան Մ.,** Վերստին Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Կաճառ», Գիրք 7(83-84), 2013, էջ 202:
[148] Նույն տեղում, էջ 79:
[149] Նույն տեղում:

1993թ. հուլիսի 28-ի հրամանով հրահանգվել է ուժեղացնել ռազմաճակատի պաշտպանական համակարգը՝ շեշտադրելով հատկապես Աղդամի շրջանում անհետաձգելի միջոցառումները: Այսպես, 3-րդ ՊԾ-ը խնդիր է ստացել զրահատեխնիկայով ու հրետանիով ուժեղացված ստորաբաժանումներով պաշտպանությունն ամրապնդել Գյոյթափա-Աղդամ բնագծում՝ հակառակորդի ճեղքման փորձերը հետ մղելու նպատակով[150]: Հրամայվել է պատրաստականության բերել ՊԾ-ի հրետանին, հակատանկային ռեզերվը, հրաձիգ-հակաօդայիններին, բարձրացնել համազորային պահեստազորի մարտական պատրաստականությունը հանկարծահաս խնդիրների լուծման համար[151]:

Անշուշտ, նման միջոցներ ձեռնարկվել են նաև մյուս պաշտպանական շրջաններում: Առանձնապես հստակեցվել ու վերանայվել են նրանց օպերատիվ-մարտավարական խնդիրները, քայլեր են ձեռնարկվել հարևան ստորաբաժանումների միջև փոխգործակցության և նրանց պաշտպանական հատվածների ամրաշինական կառույցների կատարելագործման, ռազմագործողություններում շրջանային ուժերի ու միջոցների, պահեստազորի նպատակային օգտագործման ուղղությամբ: Ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ համալրումը, թեև հիմնականում կատարվել է հակառակորդից առգրավված ռազմավարի միջոցով, բայց բավարարել է ընթացիկ խնդիրների լուծման պահանջները:

Այս ձեռնարկումները, կազմելով 1992թ. օգոստոսի 14-ին Ս. Սարգսյանի ղեկավարությամբ սկիզբ առած Արցախի ինքնապաշտպանության ուժերը բանակային կառույցների վերակազմակերպելու գործընթացի բաղկացուցիչ մասը, եզրափակվել են Արցախի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993թ. նոյեմբերի 10-ի համապատասխան որոշմամբ[152]:

Այսպիսով, Աղդամի ռազմահենադաշտի վնասազերծումը ունեցել է ոչ միայն ռազմաքաղաքական կարևոր նշանակություն, այլև դրականորեն է ազդել Արցախում ռազմական շինարարության գործընթացի վրա, նպաստելով ինքնապաշտպանության ուժերը ժամանակակից բանակային կառուցվածքի փոխակերպելուն, ինչը կանխորոշել է 1993-1994թթ. ձմեռային ռազմարշավի ծանր

---

[150] ԱՀՊՆԱ, Մարտական հրամաններ և մարտական կարգադրություններ, գործ № 38, թ. 36:
[151] Նույն տեղում, թթ. 36-37:
[152] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. № 33, որոշում № 323:

պաշտպանական մարտերի, ապա և ՊԲ հակահարձակողական գործողությունների հաջողությունը:

Մարտակերտ քաղաքի շրջանում և Աղդամի ռազմական հենադաշտում հակառակորդի հարվածային ուժերի ջախջախումը, Արցախի Հանրապետության ԻՊՈՒ-ի կողմից նպաստավոր բնագծերի զբաղեցումը տիրապետող բարձունքների վրա Ստեփանակերտի ու Մարտակերտի օպերատիվ ուղղություններում կանխարգելել են հակառակորդի ակտիվ գործողությունները՝ միաժամանակ անվտանգ դարձնելով Արցախի Հանրապետության հյուսիսարևելյան սահմանագիծը: Հակառակորդի հարձակման միակ հնարավորությունը օդուժն էր, սակայն Արցախի Հանրապետության հակաօդային պաշտպանության արդյունավետության բարձրացումը, ՀՕՊ միջոցների կատարելագործումը և հակաօդայինների մասնագիտական վարպետության բարձրացումը կաշկանդել են հակառակորդի գործողությունները նաև օդում: Ստեղծված պայմաններում հակառակորդի նոր ակտիվացումն սպասելի էր հարավարևելյան և հարավային ճակատագծում, քանի դեռ մարտունակ էին Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Զանգելանի ռազմական խմբավորումները: Փոխվրեժի նպատակով ադրբեջանական հրամանատարությունը հարվածի հիմնական ծանրությունը փոխադրել է հենց հիշյալ օպերատիվ ուղղությունը: Դա դժվար չէր կռահել, քանի որ Մարտունու ուղղությունը, Աղդամի ռազմահենադաշտի կորստից ու այնտեղ գտնվող մարտունակ խմբավորման պարտությունից հետո, այլևս չէր կարող գայթակղել հակառակորդին կամ հաջողության հույս ներշնչել: ԻՊՈՒ մեծ ուժերի ու միջոցների առկայությունը Աղդամի և Մարտակերտի ուղղություններում հակառակորդին զրկում էր հակահարձակման անցնելու հնարավորությունից, իսկ Օմարի և Լաչինի ուղղություններում հակառակորդի առաջխաղացման բոլոր փորձերը կասեցվել են: Հադրութի ՊԾ ուղղությամբ հակառակորդի ակտիվացումը պայմանավորված էր նաև այստեղ ադրբեջանական մեծ ուժերի առկայությամբ և հետագա կենտրոնացմամբ, ինչպես նաև հայկական ուժերի պաշտպանության ճակատագծի ձգվածությամբ, ինչը մի որևէ հատվածում ճեղքում կատարելու հույս էր տալիս թշնամուն: Արցախի Հանրապետության ԻՊՈՒ հրամանատարությունն իր հերթին շահագրգռված էր Հադրութի ՊԾ-ում պաշտպանական համառ մարտերով հյուծելու հակառակորդի հարվածային խմբավորումներին, անցնելու վճռական հակահարձակման և լուծելու հանրապետության հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգության

խնդիրը, որը ծառացած էր դեռևս 1992թ. աշնանային ռազմարշավից ի վեր: Ինչպես և սպասվում էր, Աղդամի խմբավորման պարտությունից հետո, հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ է կուտակել Ֆիզուլիի և Ջաբրայիլի շրջաններում, դրանով իսկ հարվածի գլխավոր ուղղությունը տեղափոխելով Արցախի Հանրապետության հարավարևելյան ու արևելյան շրջանները[153]: Խախտելով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմանի համաձայնության պայմանները՝ հակառակորդը ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով շարունակել է հայկական պաշտպանական դիրքերի հրթիռահրետակոծությունները: Հակառակորդն անընդհատ լարված է պահել իրադրությունը հակամարտության գոտում՝ չդադարող հրթիռահրետակոծություններով ու հարձակումներով ստիպելով Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ստորաբաժանումներին դիմել պատասխան գործողությունների, ընդհուպ մինչև թշնամու կրակակետերի վնասազերծումը: Հետ մղելով թշնամու ուժեղ ճնշումը՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները հակահարձակման են անցել հարավային ռազմաճակատի ամբողջ գծի երկայնքով՝ նպատակ ունենալով ազատագրել Հադրութի շրջանի լեռնային մասը: Օգոստոսի 15-ին սկսվել է Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ստորաբաժանումների ընդհանուր հակահարձակումը Հադրութի շրջանի հարավում: Մարտական գործողությունները շարունակվել են նաև Հադրութի ՊԾ մյուս և Լաչինի մարդասիրական ճանապարհի ուղղություններում:

Շուշիի ՊԾ ստորաբաժանումների և օգնության հասած ԻՊՈՒ ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունների արդյունքում Կուբաթլուի ուղղությունում կոտրվել է թշնամու դիմադրությունը: Ընկճելով ադրբեջանական բանակի և տեղի զինավառ բնակչության կատաղի դիմադրությունը՝ հայկական կազմավորումները երեք ուղղություններով խորացել են Կուբաթլուի ռազմականացված շրջանի տարածք՝ շարժվելով շրջկենտրոնի ուղղությամբ: Կուբաթլուի շրջանում ամրացած հակառակորդը մշտապես սպառնում էր Լաչինի միջանցքի անվտանգությանը, կրակի տակ էր պահում Ստեփանակերտ-Երևան ավտոմայրուղին: Ձգտելով ապահովել Արցախի Հանրապետության հարավային սահմանների լիակատար անվտանգությունը՝

[153] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. N 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 74, **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), գիրք 5, էջ 150:

ԻՊՈՒ-ը հակահարձակման են անցել, նպատակ ունենալով ջախջախել այսպես կոչված Ադրբեջանի ՀՈՒ Կուբաթլուի շրջանում տեղակայված խմբավորումը և ամսվա վերջին օրը վնասազերծել են համանուն շրջկենտրոնը:[154] Հադրութի շրջանի ազատագրման, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան ռազմագործողությունը ռազմաքաղաքական մեծ նշանակություն է ունեցել: Վերացվել է Արցախի Հանրապետության արևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվել են Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի ռազմահենադաշտերը, ջախջախիչ պարտության են մատնվել համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, նկատելիորեն ընդլայնվել ու ամրապնդվել է Արցախի անվտանգությունը, և Ինքնապաշտպանության ուժերը հաստատվել են նպաստավոր բնագծերում: Ռազմական պարտությունների մատնելու միջոցով Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերը ստիպել են Ադրբեջանին նստելու բանակցությունների սեղանի շուրջ: Դրանից հետո Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ստորաբաժանումները, հետապնդելով ճողոպրող թշնամուն՝ կանգ են առել Իրանի սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Հադրութի շրջանի ազատագրման, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան ռազմագործողության ընթացքում հայ հրետանավորները գործել են բավական հուսալի և, հիմնականում, լուծել են առաջադրված խնդիրները: Հրետանու դիպուկազարկության հետևանքով հակառակորդը զբաղեցրած դիրքերից ճողոպրել է՝ թողնելով տեխնիկա, զենք ու զինամթերք: Օգոստոսյան մարտերում հակառակորդից առգրավվել են 4 Դ-30, 4 Տ-12, 3 Դ-44 թնդանոթներ, 2 120 մմ-անոց ականանետ և մեծ քանակությամբ 82 մմ-անոց ականներ[155]:

Այսպիսով, 1991-1993 թթ. Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային խնդիրների լուծման, նախևառաջ Ինքնապաշտպանության ուժերի ստեղծման ու կայացման, պաշտպանական և ազատագրական ռազմական օպերացիաների պլանավորմանն ու ղեկավարմանն արդյունավետ մասնակցության գործում Սերժ Սարգսյանն ունեցել է ծանրակշիռ

---

[154] **Հարությունյան Մ.,** Պատմական հողերի ազատագրումը (օգոստոս. 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս 1999թ., № 34, էջ 3:

[155] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., 99 л.(Инв. N 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 76:

ավանդ, ինչի մասին են վկայում ներկայացված փաստերը: Իսկ բազմաթիվ փաստեր դեռ սպասում են իրենց բացահայտմանը և համակողմանի ուսումնասիրմանը՝ դրանց չգաղտնազերծված լինելու, մի մասն այսօր քաղաքական նպատակահարմարությամբ հարուցված խոչընդոտների, մի զգալի մասն էլ 2023 թ. սեպտեմբերին Արցախի Հանրապետության արխիվների ոչնչացման և մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով :

Արցախի Հանրապետության պաշտպանության գործում ունեցած մեծ ավանդի լավագույն գնահատականը Սերժ Սարգսյանին Արցախի Հանրապետության բարձրագույն՝ Արցախի հերոսի կոչման և «Ոսկե Արծիվ» շքանշանի արժանացնելն է:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

020.0172.01.09.00

ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 17-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Պաշտպանության կազմակերպման գործում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների, ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հռչակման 9-րդ տարեդարձի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար

Սերժ Ազատի **Սարգսյանին**

շնորհել «Արցախի հերոս» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն կոչում՝ պարգեւատրելով «Ոսկե արծիվ» շքանշանով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

«1» սեպտեմբերի 2000 թ.

ՆՀ-172

ք.Ստեփանակերտ

առաջին շրջանում (1993-1995թթ.) Ս. Սարգսյանի ավանդը ՀՀ ԶՈՒ-ի կայացման և հետագա զարգացման գործում

ԼՂՀ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանը 1993թ. օգոստոսին ստանձնեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի պաշտոնը[156] և պաշտոնի բերումով տեղափոխվեց Երևան[157]:



ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ОБОРОНЫ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

ПОСТАНОВЛЕНИЕ

"26" августа 1993г. № 277

г.Степанакерт

О Саркисяне С.А.

Государственный Комитет Обороны НКР постановляет :

Освободить Саркисяна Сержа Азатовича от должности председателя Комитета Самообороны при СМ НКР в связи с переходом на другую работу.

Председатель Государственного Комитета Обороны НКР Р.Кочарян

Управделами Совета Министров НКР В.Тонмасян

Մինչ այդ, ինչպես վկայել է ՊԲ նախկին հրամանատար Ս. Բաբայանը, տակավին «1993թ. մայիսին Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ

---

[156] Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագիրը Սերժիկ Ազատի Սարգսյանին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար նշանակելու մասին (21 օգոստոսի 1993 թվականի, քաղ. Երևան, ՆՀ-250): https://www.irtek.am/views/act.aspx?aid=8476 (ներբեռնումը՝ 16.06.2024թ.): Հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետություն», 24 օգոստոսի 1993թ., № 167, էջ 1:

[157] ԼՂՀ ԻՊԿ նախագահի պաշտոնից, այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, նա ազատվեց 1993թ. օգոստոսի 26-ին (տես ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումներ, որոշում № 277 առ 26 օգոստոսի 1993թ., Արձ. 29):

Սարգսյանը գործուղվել էր Ռուսաստանի Դաշնություն՝ նպատակ ունենալով լուծելու Պաշտպանության բանակի պարենային և հանդերձանքի ապահովման խնդիրները»[158]:

Պատասխանելով Դավիթ Հարությունյանի (Ազատական-առաջադիմական կուսակցություն) հարցին՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, մասնավորապես, նշել է. « …Սերժ Սարգսյանին ես բերել եմ ոչ թե Ղարաբաղից, այլ Մոսկվայից: Սերժ Սարգսյանը Ղարաբաղից աքսորված էր, նա այնտեղ ուներ խնդիրներ, ուներ լուրջ վեճեր: Որքան էլ հիմա այլ բան ասեն, բայց այդպես էր: Նա արդեն մեկ տարի ապրում էր Մոսկվայում, շատ օգտակար գործ էր անում, բանակի մատակարարման գործով շատ լավ համագործակցում էր և՛ Վազգեն Սարգսյանի հետ, և՛ Ղարաբաղի իշխանավորներից ոմանց հետ: Օգտակար, շատ կարևոր գործ էր անում: Նա կարող մարդ էր, նա ուներ փորձ, երևի մեզանից ամենաշատ փորձը, միշտ աշխատել է պետական ապարատում, կազմակերպչական ընդունակություններ ուներ, ուստի նրա կարողությունների համեմատ դա շատ փոքր գործ էր»[159]:

Հետագայում, անդրադառնալով Արցախի Հանրապետությունից Ս. Սարգսյանի Հայաստան տեղափոխվելն իրենց լարված փոխհարաբերություններով պայմանավորելու շուրջ շահարկումներին՝ Ս. Բաբայանը խորհուրդ է տվել փաստերով գնահատականներ հնչեցնել իր և Սերժ Սարգսյանի հարաբերությունների մասին. «Կան փաստեր, փաստաթղթեր՝ սևով սպիտակի վրա գրված՝ հրաժարական, հրամանագիր և այլն: Եվ, ի վերջո, կա 1997 թվականին Վազգեն Սարգսյանի ելույթը, որում ասում է. «Ես ինքս եմ գնացել Սերժ Սարգսյանին խնդրել, բերել»: Իր և Ս. Սարգսյանի միջև անընդհատ արծարծվող հակասությունները հերքելով՝ Սամվել Բաբայանը հավաստիացրել է. «Հարաբերությունների սրում որևիցե ժամանակ չի եղել, արդեն 17-18 տարուց ավելի մոտիկից ճանաչում եմ Սերժ Սարգսյանին, և որևիցե անգամ բարձր ձայնով իրար հետ խոսած չկանք»[160]:

Տարիներ անց անդրադառնալով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնելու հանգամանքներին՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության «Մարդու ժամանակը» հաղորդմանը Ս. Սարգսյանը պատմել է, որ. «1993

---

[158] **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ, Մարգարյան Ս.,** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդակնչ 44, էջ 100:

[159] **Տեր-Պետրոսյան Լ.,** Վերադարձ: Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, էջ 64-65:

[160] **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ, Մարգարյան Ս.,** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. Ազդակնչ 44, էջ 375:

թվականին, եթե չեմ սխալվում արդեն ապրիլի վերջերն էր կամ մայիսի սկիզբը (բնական է՝ այն ժամանակ ինքը (Վազգեն Սարգսյանը.-Մ.Հ.) պաշտպանության նախարարը չէր, նախագահի խորհրդականն էր՝ անվտանգության գծով), ասաց. «Գիտես, կարծիք կա քեզ տեղափոխելու Հայաստան՝ պաշտպանության նախարար»: Ինձ համար մի քիչ տարօրինակ էր, չէի սպասում: Այդպես էլ ասացի: Ասացի. «Վազգե՛ն, մի քիչ տարօրինակ բաներ ես ասում, գործն այստեղ է»: Երկրորդ անգամ՝ արդեն մայիսին, Վազգեն Մանուկյանը գնացել էր վիրահատվելու, և արդեն շատ ավելի լուրջ պայմաններ էին, երբ Վազգենը նորից ասաց: Բնականաբար, ես խորհրդակցեցի Քոչարյանի հետ, ընկերներիս հետ, և ասացին, որ միանշանակ պետք է առաջարկությունն ընդունել, որովհետև, չնայած որոշակի հաջողություններ ունեինք, գիտեք՝ Հայաստանի ներքաղաքական լարվածությունը անմիջապես փոխանցվում էր այնտեղ, և բոլոր տղաները չէ, որ վստահ էին, որ Հայաստանի պաշտպանության նախարարությունն ամեն ինչ անում է, որպեսզի մարդիկ կարողանան կռվել: Միշտ էլ դժգոհներ լինում են, միշտ էլ Մարտակերտում կռվողը ասում է, թե՝ տեսնու՞մ ես Ստեփանակերտում կռվողների զինամթերքը շատ է և այլն: Եվ հիմնական իմ դրդապատճառը դա էր, նաև՝ իմ ընկերների: Այնուհետև՝ նաև ծանր ժամանակաշրջան ինչպես հայկական բանակի, այնպես էլ ամբողջ Ղարաբաղի համար (ադրբեջանցիների հակահարձակում, Օմարի հետգրավում և այլն): Եվ արդեն 1993 թվականից, երբ սկսեցինք շատ լուրջ զբաղվել կանոնավոր բանակով, զորակոչիկներով (և 1993 թվականին էր, որ առաջին անգամ զորակոչիկներով գունդը գնաց սահման) և 1994 թվականին, մայիսին զանգահարեց Գրաչովն ու մեզ հրավիրեց ադրբեջանցիների հետ Մոսկվա, այնտեղ ստորագրեցինք փաստաթուղթ՝ զինադադարի մասին՝ սկսեցինք անմիջապես ձեռնամուխ լինել բանակաշինության գործին: Վազգենը պետնախարար էր»:[161]

Ս. Սարգսյանը ՀՀ ռազմական գերատեսչությունը գլխավորեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ բանակաշինությունը թևակոխել էր իր իսկ սահմանած «երկրորդ փուլը, որը ներառում է 1992թ. հունիսից մինչև 1994թ. մայիսն ընկած ժամանակահատվածը, երբ անկախ Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ միասին գտնվելով չհայտարարված, բայց

[161] **Սարգսյան Ս.,** Ելույթներ, հարցազրույցներ (ծննդյան 50-ամյակի առթիվ), կազմ.՝ Ս. Շահսուվարյան, խմբ.՝ Մ. Դավոյան, Ե., ՀՀ ՊՆ, 2004, էջ 6:

փաստացի պատերազմի մեջ, ձեռնամուխ եղավ Ազգային բանակի ստեղծմանը»[162]: Նույն պարբերացման երրորդ փուլում, որն ընդգրկում է 1994թ. հունիսից մինչև մեր օրերը (2002թ.), ՊՆ-ին առաջադրված էին «բանակաշինության, զորքերի մարտունակության բարձրացման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման, խաղաղ պայմաններում բանակի՝ որպես ռազմապաշտպանական համակարգի վերջնական ձևավորման» խնդիրները, որոնց լուծման գործում Ս. Սարգսյանի ներդրումը ակներև է:

Հատկանշելի է, որ նա ժամանակի չափորոշիչներով բավական լավ ժառանգություն էր ստացել իր նախորդներից՝ Վ. Մանուկյանից և Վ. Սարգսյանից: Նրանց անմիջական նախաձեռնությամբ բանակաշինության գործում զգալի աշխատանքներ էին կատարվել:

Ս. Սարգսյանն արդեն նշանակվել էր ՀՀ պաշտպանության նախարար, երբ Արցախի Հանրապետության հարավային սահմանագծի ամբողջ երկայնքով ձեռնարկված հակահարձակումը հասավ եզրափակիչ ակորդին՝ օգոստոսի 31-ին Կուբաթլուի (Սանասարի) թշնամական կրակակետերի վնասազերծմանը:

ԻՊՈՒ 1993թ. ամառային ռազմարշավը ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ: Վերացվեց Արցախի Հանրապետության արևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվեցին Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի ռազմահենադաշտերը, ջախջախիչ պարտության մատնվեցին համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, նկատելիորեն ընդլայնվեց ու ամրապնդվեց Արցախի անվտանգությունը, և Ինքնապաշտպանության ուժերը հաստատվեցին նպաստավոր բնագծերում: Ռազմական պարտությունների մատնելու միջոցով հայկական կողմը ստիպեց Ադրբեջանին նստելու բանակցությունների սեղանի շուրջ: Դրանից հետո Արցախի Հանրապետության ԻՊՈՒ ստորաբաժանումները, հետապնդելով ճողոպրող թշնամուն՝ կանգ առան Իրանի սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

Ներկայումս Ադրբեջանի անպատիժ զավթողական քաղաքականության և ՀՀ-ի ինքնիշխան տարածքների սողացող օկուպացիայի մռայլ համապատկերում 1993թ. ամառային ռազմարշավի հաջողությունները կարևորելի են Հայաստանի

[162] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 10-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստում, «Հայկական բանակ», № 1-2 (31-32), 2002թ., էջ 13

Հանրապետության անվտանգության համար, որովհետև դրանց շնորհիվ ոչ միայն վերացավ Լաչինի մարդասիրական միջանցքի վրա կախված վտանգը, այլև նկատելիորեն նվազեց նաև Կապանի, Գորիսի շրջանների հրթիռահրետակոծման ենթարկվելու վտանգը, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Կովսականի և Արաքսի ափի ազատագրման ու ռազմաճակատի գիծը կարճելու համար: Միաժամանակ վերահսկողություն հաստատվեց ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ճանապարհների վրա:

Հերթական անգամ բանակցությունները օգտագործելով ուժերի ու միջոցների վերախմբավորման կամ լրահամալրման համար՝ Ադրբեջանի ԶՈՒ 1993թ. հոկտեմբերի կեսերին վերսկսեցին հարձակումները Արցախի Հանրապետության սահմանների ու պաշտպանական բնագծերի վրա՝ հրահրելով հայկական ուժերի պատասխան հակահարձակողական գործողությունները: Հակառակորդի՝ Հորադիզում, Կուբաթլուում, Զանգելանում կենտրոնացված զորախմբի ջախջախման ռազմագործողությունը, որն սկսվել էր 1993թ. հոկտեմբերի 23-ին, իր եզրագծին հասավ նոյեմբերի 1-ին, երբ Արցախի Հանրապետության ԻՊՈՒ մարտիկներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Զանգելան շրջկենտրոնի և հենակետերի վերածված մոտակա բնակավայրերի նկատմամբ: 1-ին, 2-րդ, 6-րդ ՊԾ և կենտրոնական ենթակայության ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունները հաջողությամբ պսակվեցին մարտական գործողությունների ընդարձակ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Սահմանամերձ գոտու հարավարևելյան, հարավային և հարավարևմտյան հատվածներում հակառակորդի կրակակետերի պարտադրված ու անհրաժեշտ վնասազերծումը, փաստորեն, վերացրեց հարավից Արցախի Հանրապետության տարածք ներխուժելու, ինչպես նաև խաղաղ բնակավայրերի հրետակոծությունների վտանգը[163]:

1993թ. շարունակելով բանակաշինության բարդ գործընթացի ղեկավարումը՝ Ս. Սարգսյանը հաշվի էր առնում ռազմաճակատի պահանջները և փորձում էր հնարավորինս ոչ ստանդարտ լուծումներ գտնել որակական փոփոխություններ կրող մարտական գործողությունների համակողմանի ապահովման խնդիրներին: Եվ այդ լուծումները բավական հաջողված էին պետության սուղ հնարավորությունների պայմաններում:

[163] ԼՂՀ ՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամաններ, գործ №4, թ. 95-96:

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի և, ընդհանրապես, հայկական պետականության համար լուրջ փորձություն էր Արցախի Հանրապետության ռազմաճակատի ամբողջ երկայնքով 1993թ. դեկտեմբերին սկսված լայնածավալ հարձակումներին դիմակայելու դժվարին ժամանակաշրջանը, երբ Ադրբեջանի նորընտիր նախագահ Հ. Ալիևը, խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ հաստատված տասնօրյա երկկողմանի զինադադարը, փորձեց ցանկացած գնով արմատական բեկում մտցնել պատերազմում և դրանով ամրապնդել իր վերարտադրվող իշխանությունը:

1993-1994թթ. ձմեռային ռազմարշավում հակառակորդին հաջողվեց ռազմաճակատի որոշ հատվածներում ժամանակավոր հաջողություններ գրավել, սակայն Արցախի Հանրապետության պաշտպանության բանակը և ՀՀ-ից կամավոր օգնության հասած ստորաբաժանումները համառ ու կազմակերպված դիմադրությամբ չզիջեցին ստրատեգիական նախաձեռնությունը, ոչ միայն կանգնեցրին վարձկաններով համալրված Ադրբեջանի ԶՈՒ գերակշռող ուժերի ու միջոցների առաջխաղացումը, այլև հակահարձակողական գործողություններով հարկադրեցին ագրեսորին համաձայնել անժամկետ զինադադարի պայմաններին:

Հանրագումարի բերելով գարնանային ռազմարշավի երկու ամիսների արդյունքները՝ արձանագրենք, որ ՊԲ-ի ունեցած ռազմական հաջողությունները ոչ միայն վկայել են բանակաշինության ու մարտավարության հետագա զարգացման մասին, այլև ունեցել են այն նշանակությունը, որ արդեն մայիսին Ադրբեջանի քաղաքական ու ռազմական ղեկավարությունը ստիպված էր նստել բանակցությունների սեղանի շուրջ և համաձայնել հրադադարի պայմաններին:

Արցախի Հանրապետության սահմանակից ադրբեջանական վերջին ռազմահենադաշտի՝ Միր Բաշիրի վրա կախված վտանգը, մոտեցող ռազմաճակատից նահանջող Ադրբեջանի ԶՈՒ-ի կողմից իբր անվտանգության նկատառումներով տարահանվող հազարավոր ադրբեջանցիների հոսքը, բանակի բարոյահոգեբանական վիճակի կտրուկ անկումը և դասալքության ծաղկումը հակառակորդին կանգնեցրել էին թեկուզ կարճատև դադարի, այդ միջոցով ուշքի գալու ուղիների որոնման հրամայականի առաջ: Առանցքային նշանակության ռազմաճակատում տիրող անհուսալի իրադրության իրատեսական ընկալումը և հրադադարի՝ որպես ստեղծված կացությունից դուրս գալու հնարավորության մասին բազմաթիվ առաջարկությունների գայթակղությունը ևս նպաստել են հրադադարի պայմաններից հրաժարվելու՝ Ադրբեջանի Հանրապետության

ռազմաքաղաքական ղեկավարության համառության ընկճմանը[164]: Վերջապես հակառակորդ կողմը հարկադրված էր իր համաձայնությունը հայտնել ՌԴ ռազմական գերատեսչության ղեկավարի՝ հրադադարի վերաբերյալ առաջարկությանը: Սակայն, տհաճ նախադեպերի հաշվառմամբ ու վերջին տարիների դառը փորձից ելնելով՝ Արցախի Հանրապետության ղեկավարությունը վերապահությամբ ընդունեց ախոյան կողմի այդ «կերպարանափոխությունը», իրավամբ կասկածելով, որ հրադադարն Ադրբեջանի Հանրապետությունը վերստին կօգտագործի նոր լայնածավալ ագրեսիայի նախապատրաստվելու նպատակով, ինչը բացառելու համար անհրաժեշտ էին հրադադարի պահպանման կայուն երաշխիքներ: Բայց, քանի դեռ միջնորդները դրանք տալու իրական հնարավորություններ չունեին, ուստի անվտանգության միակ երաշխավորը շարունակում էին մնալ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակը և ՀՀ զինված ուժերը՝ ընդհանրապես:

Մայիսի 14-16-ին և հետագա օրերին շարունակվել են հայկական պաշտպանական դիրքերի գնդակոծություններն ու հրետակոծությունները, ինչպես նաև հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի ակտիվ տեղաշարժերը ռազմաճակատի տարբեր հատվածներում: Մարտական գործողություններին զուգահեռ, ակտիվացել է նաև խաղաղ կարգավորման գործընթացը: Ադրբեջանի կողմից բիշքեկյան համաձայնության խափանումից հետո, գործին խառնվել է ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովը, որի միջնորդությունը հետապնդել է զինված հակամարտության դադարեցման նպատակ, մնացած հարցերի լուծումը թողնելով քաղաքագետներին: Մայիսի 16-ին Մոսկվայում հանդիպելով Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի, ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանի, Արցախի Հանրապետության ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանի և Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարար Մուհամեդռաֆի Մամեդովի հետ՝ նա առաջարկել է մայիսի 17-ի 00 ժամից դադարեցնել կրակը[165]: Այն մեծ դժվարությամբ ընդունել է նաև ադրբեջանական կողմը:

1993թ. նորանշանակ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ի պատասխան լրագրողի հարցադրման՝ այսպես է բնութագրել հայկական զինուժի հաջողությունները. «…Եթե 150 հազարանոց Արցախը կարող է յոթ ու կես

---

[164] Տե՛ս նաև **Հարությունյան Մ.,** Պարտադրելով տևական հրադադար (մայիս. 1994թ.), «Մարտիկ», № 21, մայիս 1999թ., էջ 3:

[165] «Сегодня», 17. 05. 1994 г., «Մարտիկ», № 21, 1994թ., էջ 1:

միլիոնանոց պետության հանդեպ ագրեսորի դերում հանդես գալ, ապա նման որակումը, համենայն դեպս, մեզ չէ, որ պետք է մտահոգություն պատճառի: Անձամբ ես բարոյապես չեմ սրտնեղում»[166]:

Օբյեկտիվ պատճառներով ՀՀ զորամիավորումներն ու զորատեսակները, ինչպես նաև սպայական կազմը ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի կազմակերպակառուցվածքային հիմքի վրա: Նորաստեղծ հայկական բանակի սպառազինությունը և ռազմական տեխնիկան անգամ խորհրդային ժառանգություն էին: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում ձևավորված ռազմարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում կամ արդեն զորացրվել էին պահեստազոր: Պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանը, Վ. Մանուկյանը և Ս. Սարգսյանը լայն հնարավորություններ ստեղծեցին, որպեսզի նրանք իրենց ծառայությունները մատուցեին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ Գուրգեն Դալիբալթայանը, Նորատ Տեր-Գրիգորյանցը, Քրիստափոր Իվանյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը, Հրաչ Անդրեասյանը, Միքայել Հարությունյանը, Յուրի Խաչատուրովը, Արտյուշա Հարությունյանը, Ֆելիքս (Ռաֆայել) Գզողյանը և շատ ուրիշներ[167]: Հետագայում կազմակերպվեց նաև սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցը, ամրապնդվեց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում Վ. Սարգսյանի գործը հաջողությամբ շարունակեցին պաշտպանության նախարարներ Վազգեն Մանուկյանը, Սերժ Սարգսյանը և հետագա մյուս պաշտպանության նախարարները: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց մեր անկախ պետականության վերականգնման գործընթացում և դարձավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը

---

[166] **Թադևոսյան Ք.,** Հայկական սպայական դպրոցի կայացումը, «Հայ զինվոր», № 34, 3.09. - 9.09.2015թ.(թվային տարբերակը տես http://www.hayzinvor.am/33583.html)(ներբեռնումը՝ 18.06.2024թ.):

[167] Տե՛ս **Օհանյան Ս.,** Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագիծ) Ե.,«Լիմուշ», 2013թ., էջ 83:

դարձավ յուրաքանչյուր հայ երիտասարդի պատվի գործը: 1994թ. զինադադարից հետո ադրբեջանական իշխանությունների բազմիցս հնչեցրած ռազմատենչ հայտարարությունները, ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքներն ու ագրեսիվ նկրտումները ՀՀ զինված ուժերից պահանջում էին մշտապես ապահովել բարձր մարտական պատրաստվածություն, մարտունակություն և զգոնություն: Ուստի ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի կազմակերպական հմտություններն ու նախորդ տարիների հաջողված փորձն անմնացորդ նվիրվեցին ՀՀ ԶՈՒ բարձր մակարդակի մարտական պատրաստության պահպանմանը, բանակի զորային կառույցի կուռ համակարգի ստեղծմանը, նյութատեխնիկական և ֆինանսական անխափան մատակարարման համակարգի ներդրմանը, ԶՈՒ-ի գործունեության օրենսդրական ապահովմանը, միջազգային ներգրավման ու պաշտպանական-անվտանգային փոխլրացնող բաղադրիչների զարգացման հնարավորությունների ընդլայնմանը:

1994թ. հաջորդած տարիներն առանձնահատկ էին բանակաշինության համար: Տեղի էր ունենում այսպես կոչված դաշտային (մարտնչող) բանակից անցում զորանոցայինի, որտեղ առաջանցիկ էր ինտենսիվ մարտական պատրաստությունը՝ զուգորդված մշտական մարտական խնդիրներ կատարելով: Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի և նրա հաջորդների նպատակասլաց ղեկավարությամբ հսկայական աշխատանք կատարվեց ԶՈՒ-ի մարտական պատրաստության ասպարեզում: Ամենօրյա տքնաջան աշխատանքները զորքերի մարտունակության բարձրացման, հրամանատարական բոլոր օղակների պատրաստության, նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի ստեղծման, զորամասերի կազմավորման կամ վերակազմավորման և կարգապահության ամրապնդման ուղղությամբ տեսանելի արդյունքներ էին տալիս:

Զորամասերում կառուցվող հրաձգարաններում, տանկային ուղեգծերում, հրազենահրետանային կամ լազերային հրաձգարաններում, մարտավարական ուսուցման փորձադաշտերում զորատեսակների անձնակազմերը պարբերաբար կատարելագործում էին մարտավարամասնագիտական ունակությունները, ներդաշնակ գործելու հմտությունները: Զինված ուժերի առաջընթացը տեղի էր ունենում բնականոն հունով, բանակաշինության առաջնահերթություններն ու գերակայությունները որոշվում կամ ճիշտ ժամանակին փոփոխվում էին ռազմարվեստի զարգացման միտումների և առաջնագծում օպերատիվ-մարտավարական իրադրության թելադրանքով:

«Պաշտպանության նախարարի ցանկությունները պետք է իրական հիմք ունենան». այս համոզմունքով ՀՀ պաշտպանության նախարար Ս Սարգսյանը գերատեսչական պաշտոնաթերթին տված հարցազրույցում ներկայացրել է ազգային բանակի իր տեսլականը. «Ես կուզենայի տեսնել այնպիսին, ինչպիսին կկարողանանք այն դարձնել: Թվաքանակով քիչ, մարտունակությամբ և զինվածությամբ կատարյալ բանակ, որտեղ բոլոր օղակները գործում են համամասնորեն, որպես մեկ օրգանիզմ: Եվ ամենակարևորը՝ կարգապահ բանակ, որը կազմված կլինի հիմնականում պարտադիր ծառայության զինվորներից և մեծ պատրաստականություն ունեցող կադրային սպայական կազմից: Ուժեղ հակաօդային, հակատանկային պաշտպանություն՝ ավելի քիչ տեխնիկա, ավելի մեծ արդյունավետություն: Սա ցանկություն չէ, սա նպատակ է, որը ձգտում ենք իրագործել և կիրագործենք»[168]:

«Ինչպիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բանա՞կն է» հարցին ՀՀ պաշտպանության նախարարը պատասխանեց. «Նաև այո, բայց որպես ուղեցույց ունենալով մեր հանրապետության պայմանները: Օրինակ՝ հզոր օդուժ ունենալը շատ թանկ է, և հանրապետության ներկա տնտեսական պայմաններում դրան ձգտելը նպատակահարմար չէ, նույնքան թանկ է դրա սպասարկումը: Փոքր հրթիռով միշտ էլ կարելի է մեծ ինքնաթիռ խփել»[169]:

Անդրադառնալով զորակոչին՝ ՀՀ պաշտպանության նախարարը նկատել տվեց. «Աշնանային զորակոչը հիմնականում գնաց այն հունով, որով նախատեսել էինք: Պետք է շեշտեմ, որ Պետական զորակոչային հանձնաժողովի նախագահը պետնախարար Վազգեն Սարգսյանն էր: Նա իր վրա վերցրեց այդ զորահավաքի կազմակերպման ծանրությունը: Այս զորակոչը կազմակերպվեց այլտարածքային սկզբունքով: Շտկվեցին նախորդ զորակոչի ժամանակ թույլ տրված սխալները: Թարմություն մտցվեց բժշկական ծառայության մեջ, և վստահորեն կարող եմ ասել, որ բանակը համալրվեց ավելի առողջ երիտասարդներով: Թերություններ կան, մենք տեսնում ենք դրանք և ձգտում ենք վերացնել»[170]:

«ԼՂՀ պաշտպանության նախարարի պաշտոնում Ձեր դերը հստակ էր: Պատերազմ էր, Արցախն Արցախ էր, Ադրբեջանը՝ Ադրբեջան: Այդ հստակությունը չկա Հայաստանի Հանրապետությունում՝ ոչ այն է՝ պատերազմ է, ոչ այն է՝ խաղաղություն: Քաղաքական անորոշության այս ճոճքը գլխապտույտ չի՞

---

[168] **Իսրայելյան Վ.,** Խաղաղություն, բայց ոչ որպես նվեր, այլ նվաճում, «Հայ զինվոր», 30.12.1993թ.-07.01.1994 թ., № 14:
[169] Նույն տեղում:
[170] Նույն տեղում:

առաջացնում Ձեզ մոտ: Կարողանու՞մ եք կողմնորոշվել». թերթի խմբագրի այս հարցադրման պատասխանը հետաքրքիր ուղերձներ էր պարունակում. «Համենայն դեպս փորձում եմ կողմնորոշվել: Ճիշտ բնութագրեցիք. ճոճվելու, ընկնելու և բարձրանալու պայմաններ են այստեղ: Քաղաքական տեսանկյունից՝ չկա պատերազմ, բայց թնդանոթներն ասում են՝ կա, շրջափակումն ասում է՝ կա, հանրապետության տնտեսական վիճակն ասում է՝ կա, սահմանամերձ շրջաններում իրենց զգում են պատերազմի մեջ: Շատ ավելի հեշտ է, երբ պատերազմը հայտարարված է, գիտես, թե ով է թշնամին, գիտես քո անելիքը: Քաղաքական այս ճոճքի հեղինակը մենք չենք: Աշխարհը բաժանված է ազդեցության ոլորտների, աշխարհում կան հզոր պետություններ, որոնք իրենց շահերն ունեն, աշխարհում կան այլևայլ միջազգային կազմակերպություններ, որոնց չես կարող հաշվի չառնել: Յուրաքանչյուրն իր կողմն է ձգում. հնազանդվելու իրավունք չունես՝ քո ազգային շահերն այլ բան են ասում, նրանց կարծիքը՝ արհամարհելու իրավունք առավել ևս չունես՝ դարձյալ քո ազգային շահերն ես վտանգում: Դե եկ ու կողմնորոշվիր: Հանրապետության որոշ քաղաքական կազմակերպություններ մեր քաղաքական գործիչներից պահանջում են «բաց խաղ», այն դեպքում, երբ «խաղադաշտը մշուշոտ է»: Մի հակասական և տարօրինակ բան ասեմ՝ արցախյան ձգձգվող պատերազմում Ադրբեջանն ունի իր նպատակը, նրա մարտավարությունը հստակ է՝ գրավել Ստեփանակերտը և դրանով որոշել պատերազմի ելքը: Ռազմական առումով Արցախի նպատակը հստակ չէ՝ Արցախի բանակը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին այնքան կարող էր շարժվել Ադրբեջանի խորքը, որքան կամենար: Արցախը նպատակ չունի գրավել Բաքուն և դրանով ավարտել պատերազմը: Արցախցունը նպատակ չէ, այլ տարրական ցանկություն՝ ապրել սեփական տանը, շենացնել իր հայրենիքը և հոգալ իր ընտանիքի ապահովությունը: Այս հասարակ բանը աշխարհը գիտակցել ու գիտակցում է: Դրա համար էլ Ադրբեջանը ջանում է պատերազմի մեջ ներքաշել Հայաստանը: Պատերազմող Հայաստանի հանդեպ աշխարհի վերաբերմունքն արդեն այլ կարող է լինել»[171]:

Արդիականությունը, ցավոք, չի կորցրել 30 տարի առաջ էլ հրատապ հետևյալ հարց ու պատասխանը. «Պարո՛ն նախարար, ուզենք թե չուզենք, մեր ժողովրդի մի մասը պատերազմի մեջ է և գիտակցում է իր այդ վիճակը: Մյուս մասը, նույնիսկ

[171] Նույն տեղում:

հպանցիկ չի ուզում հասկանալ այդ փաստը: Անարդարություն է, երբ մի մասն է վերցնում այն բեռը, որ ամբողջ ժողովրդի շալակին պետք է լիներ»:

«Հարյուր տոկոսանոց ճշմարտություն է,- ի պատասխան՝ համաձայնել է Ս. Սարգսյանը,- այդ առումով կարող եմ գնահատականներ տալ: Եղել եմ Ղարաբաղում և կարող եմ համեմատել: Արցախում այդպիսի խնդիր ընդհանրապես չկա: Անհրաժե՞շտ է բանակին, ուրեմն՝ վերջ: Եթե բանակին անհրաժեշտ է իր շարքերում ունենալ, ասենք, խոշոր գործարանի տնօրենին, մեկ օր անց նա այնտեղ կլինի: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորը հայտնվեց հակաօդային պաշտպանության տեխնիկայի վահանակի առջև, յուրաքանչյուր մասնագետ իր տեղը գտավ բանակում: Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ ռուսական փորձառու բանակը կերազեր արցախյան բանակի մասնագետներից շատերին ունենալ: Շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին վերանորոգման տեղամասեր: Այսօր Т-72 տանկը Արցախում ծայրեծայր վերանորոգում են՝ նույն հեշտությամբ, ինչ հայաստանցի վարպետները իրենց «ժիգուլիները: Նույնը չես կարող ասել Հայաստանի մասին»:

«Ի՞նչն է պատճառը: Նույն հայը չէ՞ Արցախում թե այստեղ». ճշտող հարցին ՀՀ պաշտպանության նախարարը պատասխանել է. «Այո, նույն հայն է: Բնավ էլ մտադիր չեմ արցախցուն վերագրել հատկանիշներ, որ հայաստանցի հայերին հատուկ չէ: Այստեղ, Երևանում վխտում են արցախցիներ, որոնց իրենց հարազատների ճակատագիրը չի մտահոգում կամ էլ մտահոգում է հարևանցիորեն՝ արտահայտվելով ախուվախով, ճառերով, մեկ-երկու գրոշ այս ու այն բարեգործական հաստատությանը նվիրելով: Նրանց հայրենասիրությունը ավարտվում է այնտեղ, որտեղ վտանգ կա: Պայմանները, որոնց մեջ հայտնվեցին արցախցիները, նրանց սովորեցրին արագ կողմնորոշվել: Ապրելու ու պաշտպանվելու բնազդն ու գիտակցությունը արցախցու մոտ ավելի ցայտուն է: Նա ունեցավ այնպիսի ուսուցիչներ, ինչպիսիք ադրբեջանցիներն են: Նրանք մեզ սովորեցրին կռվել, ատել, դիվանագիտական խաղեր մոգոնել, կողմնորոշվել անելանելի վիճակներում: Կռվեցինք և տեսանք, որ թշնամին այնքան էլ սարսափազդու չէ, որքան պատկերացնում էինք: Երբ 1992 թվականին ռուսական զորքը պետք է թողներ Ղարաբաղը, ժուկով անունով մի ռուս սպա, որը պարետ էր, ափսոսանքով ասում էր. «Մեղք եք: Կարծում եմ՝ երկու-երեք ամսից Արցախում հայ չի մնա: Անիմաստ է դիմադրելը»: Կուզենայի տեսնել այդ ռուս սպային»[172]:

[172] Նույն տեղում:

«Այդպես մտածողներ Հայաստանում էլ կային, այն էլ՝ ոչ քիչ, այն էլ՝ հասարակական հայտնի գործիչներ». խմբագրի դիտարկման առթիվ Ս. Սարգսյանը ամփոփեց. «Շատերն էին ձեռքերը լվացել, բայց Արցախը դիմակայեց և ոչ միայն դիմակայեց»[173]:

«Չգիտեմ, աշխարհում կա՞ մեկ այլ անձ, որին վիճակվել է լինել երկու հանրապետությունների պաշտպանության նախարար: Ո՞ր պաշտոնում էիք Ձեզ ավելի վստահ զգում» հարցի պատասխանն անկեղծ էր. «Իհարկե՝ Ղարաբաղում: Այնտեղ ես իմ խնդիրները գիտակցում և անմիջապես լուծում էի: Այնտեղ միակ խնդիրը կռվելն էր: Դա պարտադրված անհրաժեշտություն էր: Հայաստանում խնդիրները շատ են և խճճված, ծավալները լայն են, ղեկավարները շա՛տ»[174]:

«Աշխարհի տերություններից շատերը Հայաստանն ու Արցախը դիտում են որպես մեկ պետություն: Իսկ մենք համառորեն ժխտում ենք». նկատառմանը Ս. Սարգսյանը չհամաձայնեց՝ փաստելով մի նրբին խնդրի մասին, որին հայ ժողովուրդը հետագայում բախվեց 2018թ. ՀՀ-ում իշխանությունը զավթած դրածոների սխալ (նպատակաուղղված) քաղաքականության հետևանքով: «Միայն մեր ցանկությամբ չէ, որ առաջնորդվում ենք,-ասել է Ս. Սարգսյանը,- տարօրինակ է, բայց Ադրբեջանն է, որ ջանասիրաբար «ուզում է միավորված տեսնել Արցախն ու Հայաստանը»: Նա միշտ ձգտում է ապացուցել, որ կռվում է Հայաստանի դեմ»[175]:

Խմբագրի «Երևի նրանց համար համեմատաբար պատվաբեր է Հայաստանից պարտվել, քան մի փոքրիկ երկրից». դիտարկմանը ՀՀ պաշտպանության նախարարը հավելեց. «Դա հարցի մի կողմն է: Այո, նաև ամոթի զգացումը: Եկ ու ամերիկացուն համոզիր, որ տնտեսական հզոր լծակներ ունեցող Ադրբեջանը, որը մարդուժով 80 անգամ գերազանցում է Արցախին, պարտվում է նրանից: Ադրբեջանը սովետական բանակից նվեր ստացավ 300 տանկ, մենք ունեինք ընդամենը 8-9 հատ: Ադրբեջանը ուներ Արցախը կուլ տալու ախորժակ ու նպատակ, մենք՝ մեր հողը պաշտպանելու կամք ու կորով: Բոլորին է պարզ, որ Արցախը իր թիկունքում զգում էր Հայաստանի շնչառությունը, որ Հայաստանը օգնում է Արցախին: Թուրքիան էլ է օգնում Ադրբեջանին, բայց մենք չենք պնդում, որ Թուրքիան ու Ադրբեջանը մի պետություն են»[176]:

Համամիտ լինելով, որ Հայաստանը պատերազմող կողմ ներկայացնելով, Ադրբեջանը միջազգային կազմակերպություններից ու ատյաններից Հայաստանի

[173] Նույն տեղում:
[174] Նույն տեղում:
[175] Նույն տեղում:
[176] Նույն տեղում:

համար պատիժ է մուրում, խոսակցությունը շարունակվեց ներքին խնդիրների շուրջ:

Խմբագրի՝ «Պարո՛ն նախարար, ուզում եմ խոսել մի հարցի մասին, որը ամբողջ հայ ժողովրդին է հուզում: Սոցիալական անարդարությունը օր օրի ավելի ուժգին է ցնցում մեր կյանքի բարոյական հիմքերը: Ծերտավորվում են հարուստների ու աղքատների, արտոնյալների և մոռացվածների հակասական խավեր: Չե՞ք վախենում, որ այդ շերտավորումները թափանցեն բանակ: Իսկ գուցե արդե՞ն թափանցել են: Հնարավո՞ր է բանակը զերծ պահել այդ աղետավոր երևույթներից» մտահոգությունը ՀՀ պաշտպանության նախարարը փորձել է ցրել հետևյալ պարզաբանումներով. «Բանակը հասարակության մի մասն է: Դրականը թե բացասականը, որ կա հասարակության մեջ, օրինաչափորեն արտացոլվում է նաև բանակում: Լիարժեք բարոյական կացութաձև բանակում կհաստատվի այն ժամանակ, երբ այն կարմատավորվի մեր կյանքում: Բայց տագնապելու հարկ չկա: Բանակը ունի իր օրենքները, և եթե սկսեն գործել դրանք, կարծում եմ՝ շատ ու շատ արատավոր երևույթներ կկանխվեն: Սովետական բանակի քանդման օրերին շատ հայ սպաներ, ենթասպաներ, որ ծառայում էին այնտեղ, օգտվելով պատեհ առիթից և չդիմանալով գայթակղությանը, զբաղվեցին թալանով ու առուծախով: Նրանցից ոմանք այսօր ազգային բանակում են և նույն ոգով շարունակում են: Վերջին ամիսներին մի քանի հրամանատարներ ձերբակալվել են»[177]:

Բանակային յուրաքանչյուր տարի նշանավորվում էր նոր սպառազինության հայթայթմամբ, տեխնիկական հնարավորությունների ընդլայնմամբ: Դրանից բացի, մեծածավալ աշխատանքներ էին տարվում ՀՀ ԶՈՒ-ի ղեկավարման և պաշտոնեական-ծառայողական ու միջանձնային հարաբերությունները կարգավորող իրավական հիմքերը ստեղծելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի պաշտոնավարման առաջին շրջանում ՊՆ բազմաթիվ ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց գործունեությունը կանոնակարգվել է, հստակեցվել են պաշտոնական պարտականությունները և ուժեղացվել է վերահսկողությունը: Այսպես, 1995թ. մարտի 11-ին Ս. Սարգսյանի հրամանով գործողության մեջ են դրվել ՀՀ ՊՆ գլխավոր սահմանային կոմիսարի և ՀՀ ՊՆ սահմանային ներկայացուցչության կանոնադրությունը[178], ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալի և

[177] Նույն տեղում:

[178] ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների նորմատիվ բնույթի հրամաններ (1992-2001թթ.), կազմ.՝ ՀՀ ՊՆ վարչական ապարատի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Փ. Մանուկյան, Ե., «Հենակետ» ՓԲԸ, 2002, էջ 6:

տեղակալների ֆունկցիոնալ պարտականությունները[179], ՀՀ ՊՆ համակարգում ֆինանսական վերահսկողության կանոնակարգը[180], ՀՀ ՊՆ վարչություններից ու ծառայություններից առաքվող գրությունների գրանցման կարգը[181] և այլն:

Կարևոր նշանակություն է ստացել ՀՀ ԶՈՒ անձնակազմի հասարակական-պետական պատրաստության և դաստիարակության կազմակերպումը, որի արդյունավետության բարձրացման նպատակով 1993թ. սեպտեմբերի 17-ին Ս. Սարգսյանը ստորագրել է համապատասխանաբար № 446[182] և № 447[183] հրամանները:

Պաշտպանության նախարարի հրամաններով «Եռաբլուր» հուշահամալիրում 1993թ. դեկտեմբերի 11-ին ստեղծվել է պահակակետ և զոհվածների հարազատներին տեղափոխելու համար հատկացվել ավտոբուս[184], գործողության մեջ է դրվել ՀՀ ՊՆ «Եռաբլուր» զինվորական պանթեոնի կանոնադրությունը[185], այնուհետև դրանում լրացումներ կատարելու մասին հրամանը[186], ինչպես նաև ՀՀ ԶՈՒ Սպաների տների, ակումբների և գրադարանների կանոնադրությունները[187], ՀՀ ԶՈՒ պետական պարգևներով պարգևատրման ներկայացնելու կարգի մասին կանոնադրությունը[188]:

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական հարցերը մշտապես գտնվել են ՀՀ պաշտպանության նախարարի ուշադրության կենտրոնում: Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի 1994թ. սեպտեմբերի 13-ի հրամանով[189] դրամական փոխհատուցում է տրվել սպաներին ու ենթասպաներին՝ համաձայն ՀՀ կառավարության 1994թ. մարտի 28-ի համար 133 որոշման հատկացվող անվճար սննդի փոխարեն[190]: Դրամական փոխհատուցմանն են վերաբերում նաև պաշտպանության նախարարի 1994թ. սեպտեմբերի 24-ի[191] և

---

[179] Նույն տեղում, էջ 7:
[180] Նույն տեղում, էջ 37:
[181] Նույն տեղում, 38:
[182] Նույն տեղում, 79-82:
[183] Նույն տեղում, էջ 83-85:
[184] Նույն տեղում, էջ 86:
[185] Նույն տեղում, էջ 88:
[186] Նույն տեղում, էջ 92-93:
[187] Նույն տեղում, էջ 87:
[188] Նույն տեղում, 93:
[189] Նույն տեղում, էջ 251-254:
[190] Այդ և զինծառայողների սոցիալական պաշտպանվածության այլ հարցերի պարզաբանումները Ս. Սարգսյանը տվել է իր հարցազրույցներից մեկում (Վ. Իսրայելյան, Երկու թեմա, «Հայ զինվոր», 03.09. 1994թ., № 22, էջ 2):
[191] ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների նորմատիվ բնույթի հրամաններ (1992-2001թթ.), էջ 255:

հոկտեմբերի 11-ի[192] հրամանները: 1994թ. մայիսի 24-ին Ս. Սարգսյանը ստորագրել է «Զինծառայողների հուղարկավորությունը և դրա ժամանակ զինվորական պատիվներ տալը կազմակերպելու մասին» հրամանը[193], որով կանոնակարգվել են հիշյալ արարողությունները:

Ռազմաբժշկական ծառայության ոլորտում հաստատվել կամ ստորագրվել են ՀՀ ԶՈՒ-ում թմրեցնող ու թունավոր դեղամիջոցների հետ վարվելու հրահանգը[194], ՀՀ ԶՈՒ սանիտարական հրահանգիչների նախապատրաստման մասին հրամանը[195]:

Կադրային հարցերին պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը նախանձախնդրորեն է վերաբերվել: Հատկապես կարևորել է բարձրագույն սպայական կազմի և սպաների որակավորման հարցը: 1995թ. հունվարի 5-ին պաշտպանության նախարարը հաստատել է ՀՀ ԶՈՒ սպաների ու գեներալների որակավորման մասին կանոնադրությունը[196]:

Ինչպես Արցախի Հանրապետությունում, այնպես էլ ՀՀ ՊՆ-ում պաշտոնավարության շրջանում Ս. Սարգսյանը կարևոր նշանակություն էր տալիս ռազմական-մասնագիտական զանգվածային լրատվության միջոցների ստեղծմանը, որպեսզի արձանագրվեն ինքնապաշտպանության ուժերի հաղթանակները և կայացման պատմությունը, փոխանակվեն առաջավոր փորձը, արծարծվեն տեսամեթոդական հարցեր, կրթեն բանակը, զարգացնեն ժամանակակից ռազմական գիտական միտքը: Նրա հրամանով 1993թ. մարտի 16-ին հիմնադրվել է ԻՊԿ «Մարտական թերթիկ» (5-րդ համարից՝ «Մարտիկ») պաշտոնաթերթը[197], որը «պարբերաբար տպագրում էր ռազմական գործողությունների արդյունքների վերաբերյալ ԻՊԿ նախագահի հրամանները, որոնցում ներկայացվում էին ձեռքբերումները և թերությունները, ինչպես նաև, լուսաբանվում էին մարտերի ընթացքը, տպագրում ակնարկներ հերոսների մասին:

---

[192] Նույն տեղում, էջ 256:
[193] Նույն տեղում, 157:
[194] Նույն տեղում, էջ 171:
[195] Նույն տեղում, էջ 172-173:
[196] Նույն տեղում, էջ 218:
[197] Տես ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 8, թ. 30 (Приказ Председателя Комитета Самообороны НКР «Об учереждении армейской газеты “Боевой листок”»):

98

П Р И К А З

ПРЕДСЕДАТЕЛЯ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

№ 15

"16" марта 1993 г. г.Степанакерт

Об учреждении армейской газеты
"БОЕВОЙ ЛИСТОК"

Во исполнении Постановления ГКО НКР,в целях популяризации передового опыта боевых действий,боевой и морально-психологической подготовки,воинского и нравственного воспитания личного состава Сил Самообороны,оперативного доведения правовых актов,приказов и информаций Комитета Самообороны

П Р И К А З Ы В А Ю :

1. Учредить армейскую газету "Боевой листок".
2. Учредитель газеты - Комитет Самообороны НКР.
3. Установить периодичность выхода газеты - один раз в неделю тиражом 500 экземпляров.
4. Утвердить издателем газеты Издательство "Маштоц" директор - В.Атаджанян.
5. Утвердить штат газеты :
   - Координатор - издатель - служащий Атаджанян В.,должностной оклад - 4000 руб.,
   - Военный корреспондент - два - старший лейтенант,должностной оклад - 6500 руб.,
   - Фотокорреспондент - служащий,должностной оклад - 5000руб.,
   - Делопроизводитель-машинистка - служащая,должностной оклад - 3500 руб.

   Итого в редакции газеты :

   офицеров - два человека
   служащих - три человека

   Всего пять человек.
6. Установить смету расходов на содержание газеты в размере 1217,3 тысячи рублей в год.
7. Начальнику финансовой службы КСО смету расходов перечислить на счет издательства "Маштоц" в Арцахбанк счет №36305

- 2 -

8. Начальнику ОМО КСО внести изменения в штаты КСО. Выписку из приказа представить в ГШ МО РА.
9. Подготовку официальных документов для публикации в газете поручить Помощнику Председателя КСО.
10. Приказ довести до всего личного состава в части его касающейся.

ПРЕДСЕДАТЕЛЬ КОМИТЕТА САМООБОРОНЫ НКР

=С.САРКИСЯН=

ՀԱՅՐԵՆԻՔ, ՀԱՎԱՏ, ՀԱՂԹԱՆԱԿ...

ՄԱՐՏԻԿ

N 20
1993

ԼՂՀ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄՏԵՏԻ ՕՐԳԱՆ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ 1993 Թ. ՀՈՒՆԻՍ ԱՄՍՎԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1993 թ. ապրիլի սկզբին Ինքնապաշտպանության ուժերի զորամասերը, ավարտելով հակառակորդի բելբաշյան զորախմբի շախջախման մարտական գործողությունները, պլանավորեցին եւ ուժերի ու միջոցների վերախմբավորում կատարելով, ձեռնամուխ եղան 1993 թվականի առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլի՝ Մարտակերտի գործողության պլանավորմանն ու նախապատրաստությանը:

Հուլիսի 12-ին 2-րդ, 3-րդ, 5-րդ ՊԲ զորամասերը, 4-րդ ՊԲ ուժերի մի մասը եւ կենտրոնական ուղղության զորամասերը նվաստացին Մարտակերտ քաղաքի եւ շրջանի ազատագրման խոշորամասշտաբ գործողությունը, որի ընթացքում գրավվեցին օպերատիվ ու տակտիկական տնտակետից շահավետ բարձունքներ ու բնագծեր: 5-րդ, 6-րդ եւ 3-րդ ՊԲ զորամասերը դուրս եկան Աղդամ-Մարտակերտ ճանապարհի բնագիծը, շոշափելի կորուստներ պատճառեցին հակառակորդին Մարզիլի, Խրամորթ, Փափրավենդ գյուղերի շրջանում, մարտական գործողությունների կուրաթլուի, Ջարրահիլի, Մարտակերտի շրջաններից այդտեղ ձգելով հակառակորդի ուժերի զգալի մասը, դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծելով գլխավոր խնդիրը ավարտելու՝ Մարտակերտի լեռնաշղթայում հակառակորդի ջախջախման, Մարտակերտ քաղաքին սպրդելու եւ գլխավոր ուժերը Խրամորթ-Բոյանմեղլի-Փափրավենդ-Մարտակերտ-Մատաղիս բնագիծը դուրս բերելու համար: Հուլիսի 26-ին 4-րդ ՊԲ զորամասերը մտան Մարտակերտ քաղաքը, որով ավարտվեց Մարտակերտի գործողությունը: Ռազմի մեկ տարի հետո Մարտակերտի վրա փողփողաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դրոշը: 3-րդ, 5-րդ, 6-րդ եւ 4-րդ ՊԲ զորամասերն անցան գերիշխող բարձունքների եւ հիմնական ճանապարհային ուղղությունների պաշտպանությանը:

Մեր զինվորները, սերժանտներն ու սպաները, չնայած հակառակորդի գերազանցությանը, համարձակորեն առաջ էին գնում, հմտորեն ու վճռականորեն չարդում թշնամուն, պատվով ու արժանապատվությամբ կատարում իրենց զինվորական ու հայրենասիրական պարտքը: Խիզախորեն մարտնչելով մարտում ընկավ լեգենդար Մոնթեն, իր հայրենասիրական պարտքը կատարելով զոհվեց բրիգադի շտաբի պետ, ժողովրդի մեջ հայտնի Յուրան՝ փոխգնդապետ Յու. Գ. Հովհաննիսյանը:

Իրենց պարտքը պատվով կատարելով, զոհվել են նաեւ մեր ուրիշ մարտական ընկերներ, այդ թվում 6-րդ ՊԲ 3-րդ գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Ա. Է. Ղազարյանը, 3-րդ ՊԲ սակրավորների վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Ա. Ս. Սեդրաքյանը, խիզախ ու քաջարի Կարոն եւ ուրիշներ: Նրանց հիշատակը հավերժ կմնա մեր երախտապարտ ժողովրդի սրտում:

Այդ մարտական գործողությունների ընթացքում մեր զորքերը հակառակորդի նախապատրաստված ու ամրացված շրջանի վրա հարձակում գործելու մարտական լավ փորձ են ձեռք բերել: Նախորդ մարտերում հաջողությամբ շրջած հակատային գրոհներին փոխարինել է շրջանցող

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

29. 07. 93. Բոլոր ռազմաճակատներում իրադրությունը հիմնարերականորեն հանգիստ էր: Մարտական գործողություններ չեն տարվել:

30. 07. 93. Անցած մեկ օրվա ընթացքում օպերատիվ իրավիճակը Հադրութի շրջանի տարածքում բնութագրվել է հակառակորդի կողմից սեմատիկ հրետանակոծություններով: Մնացած շրջաններում, իրադրությունը հանգիստ էր:

31. 07. 93. Հակառակորդը հարավից եւ «Գրադ» կայանքներից սիստեմատիկ կարգով հրետակոծել է Մարտակերտի եւ Մարտունու շրջանների պաշտպանության առաջավոր դիրքերը: Իրադրությունը լարված էր:

01. 08. 93. Ինտենսիվ հրետանակոծությունից հետո հակառակորդը գրոհ է ձեռնարկել Մարտունու շրջանի Ինքնապաշտպանության ուժերի դիրքերի վրա: Գրոհը հետ է մղվել:

02. 08. 93. Հադրութի, Մարտակերտի եւ Ասկերանի շրջաններում հակառակորդը հրետանային ակտիվություն է ենթարկել Ինքնապաշտպանության ուժերի դիրքերը:

03. 08. 93. Իրադրությունը ռազմաճակատներում հանգիստ է եղել:

Եթե հիմնադրման տարում «Մարտիկը» հիմնականում լուսաբանում էր ռազմական հաղթանակները, մեթոդական օգնություն ցուցաբերում, ապա հետագայում թերթն արձանագրում էր ՊԲ զարգացման անընդհատ գործընթացը, արծարծում բանակի հիմնախնդիրներն ու նպաստում դրանց լուծմանը: Մեծ տեղ էր հատկացվում բանակային առօրյայի, մարտական պատրաստության ու մարտական հերթապահության լուսաբանմանը»[198]:

1994թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հրամանով, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի առաջարկությամբ, ստեղծվել է

[198] **Հարությունյան Մ.,** Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009), Ս., Դիզակ պլյուս, 2010թ., էջ 79-80:

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը[199], որի համար ուղենիշային դարձան բանակը արդիական զենքով սպառազինելու, անձնակազմին բարձր հայրենասիրական ոգով դաստիարակելու, մեր ազգային ռազմական ավանդույթներին, առաջավոր համաշխարհային փորձին, ռազմագիտական մտքին հաղորդակից դարձնելու հարցերը: Ռազմագիտական հանդեսը իր գործունեությամբ շոշափելի կերպով սկսեց նպաստել առաջավոր ռազմական գիտական մտքի ու փորձի տարածմանը, ՀՀ զինված ուժերի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, մասնակցել հայերենի ռազմագիտական տերմինաբանության մշակմանը[200]:

Ս. Սարգսյանի՝ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման առաջին շրջանի ամենածանրակշիռ գնահատականը տվել է ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որի օբյեկտիվությանը կասկածելու հիմքեր չկան, մանավանդ եթե նկատի ունենանք, որ երբեմնի ենթակայի վերաբերյալ առաջին նախագահն արտահայտվել է ընտրական ու հետընտրական գաղափարական-հայեցակարգային տարաձայնությունների ամենաեռուն շրջանում: «Մենք նրան (Սերժ Սարգսյանին.-Մ.Հ.) Հայաստան հրավիրեցինք,- ասել է Լ. Տեր-Պետրոսյանը,- վստահեցինք Հայաստանի բանակը, և եկեք անկեղծ լինենք, ազնիվ լինենք՝ լավ էլ նախարար է եղել»[201]:

ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման երկրորդ շրջանում (2000-2007թթ.) Ս. Սարգսյանի ավանդը ՀՀ ԶՈՒ-ի կայացման և հետագա զարգացման գործում

2000թ. մայիսի 20-ին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ս. Սարգսյանը նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարար[202]:

ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը երկրորդ անգամ ստանձնելու առթիվ Ս. Սարգսյանը անկեղծորեն ներկայացրել է իրականությունը. «2000

---

[199] ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների նորմատիվ բնույթի հրամաններ (1992-2001թթ.), էջ 89-91:

[200] https://razmavaraget.wordpress.com/haikakan-banak-armenian-army-defense-academic-journal-ndru-mod-ra/ (ներբեռնումը՝ 20.06.2024 թ.):

[201] **Տեր-Պետրոսյան Լ.,** Վերադարձ: Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, էջ 65:

[202] Տես Նոր նշանակումներ, «Հայաստանի Հանրապետություն», 23 մայիս 2000 թ., № 93, էջ 1 (հակիրճ կենսագրությունը՝ նույն տեղում, էջ 2):

թվականի գարնանը, երբ նախագահի աշխատակազմի ղեկավարն էի, և պիտի վարչապետի փոփոխություն լիներ, ապա նախագահն ասաց, որ պիտի գնամ պաշտպանության նախարարություն: Երբ Վազգենը գնում էր (1999թ. խորհրդարանական ընտրություններից հետո.-Մ.Հ.) վարչապետ…նա ինձ առաջարկեց գալ պաշտպանության նախարար: Կատեգորիկ հրաժարվեցի: Եվ ահա, երբ Վազգենն ինձ ասաց, որ պիտի գնաս պաշտպանության նախարար, ասացի. «Վազգեն ջան, ես չեմ կարող գնալ Պաշտպանության նախարարություն ու աշխատել որպես պաշտպանության նախարար»: Ասաց. «Ինչու՞, բանակը չե՞ս սիրում, թե չես ուզում, որ ես գնամ վարչապետ»: Ասացի, որ. «Դու շատ լավ գիտես, որ ես բանակը սիրում եմ, շատ լավ գիտես, որ ուզում եմ, որ գնաս վարչապետ, բայց ես չեմ կարող պաշտպանության նախարար լինել, որովհետև գալով պաշտպանության նախարարություն (դու գիտես իմ բնավորությունը)՝ ես միանձնյա պետք է ղեկավարեմ այդ նախարարությունը, և քո միջամտությունները ուղղակի պրոբլեմատիկ են լինելու, կոնֆլիկտային են լինելու, իսկ դու չես կարող չմիջամտել, որովհետև երկար ժամանակ եղել ես պաշտպանության նախարար, բոլորը քեզ գիտեն, բոլորը քեզ ենթարկվում են, և ավելորդ տեղը պետք է կոնֆլիկտ լինի»: Եվ երբ նախագահն ասաց, ճիշտն ասած էլի մեծ ցանկություն չունեի պաշտպանության նախարարություն գնալու, որովհետև գիտեի, թե ինչպիսին է պաշտպանության նախարարության վիճակը: Մանավանդ՝ հոկտեմբերի 27-ից հետո բացասական երևույթներ կային: Բայց նախագահի որոշումը որոշում է. գնացի պաշտպանության նախարար և արդեն երկու տարի է, որ աշխատում եմ»[203]:

Ս. Սարգսյանի նախաձեռնությամբ ՀՀ ԶՈՒ-ում տեղի են ունեցել այնպիսի բարեփոխումներ, որոնց ընթացքում շատ ստորաբաժանումներ օպտիմալացվել են, ստացել այլ կազմակերպակառուցվածքային տեսք, համալրվել նոր զենքերով ու զինտեխնիկայով, նախապատրաստվել այնպիսի խնդիրների կատարմանը, որոնք նախատեսված չէին ռազմական նախկին՝ խորհրդային չափանիշներով: Այդպիսի բարեփոխումների են ենթարկվել հատկապես տեխնիկական զորամասերը և ստորաբաժանումները: Քննարկումներ են ծավալվել Հայաստանի տարածքային պաշտպանության տարբերակների շուրջ:

ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման երկրորդ շրջանը Ս. Սարգսյանի համար ևս դյուրին չէր: Ադրբեջան-Արցախ հակամարտությունը

[203] Սարգսյան Սերժ, Ելույթներ, հարցազրույցներ(ծննդյան 50-ամյակի առթիվ), էջ 7-8:

ռազմական ճանապարհով լուծելու պաշտոնական Բաքվի անշեղ կուրսը, այդ երկրի արագ տեմպերով ռազմականացումը և սպառազինությունների մրցավազքը, Ալիևյան կլանի ռազմատենչ հայտարարությունները, Արցախի Հանրապետության և ՀՀ-ի դեմ ռազմական գործողությունները վերսկսելու չդադարող սպառնալիքները լուրջ մարտահրավերներ էին հայկական պետականությանը: Արցախի, Հայաստանի Հանրապետության տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը, տարածաշրջանային ծրագրերին նրանց մասնակցությանը խոչընդոտելն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից արդեն իսկ պատերազմական գործողություններ էին՝ նպատակաուղղված անմիջական ագրեսիայի համար հող նախապատրաստելուն: Թուրքիան Ադրբեջանին ծավալուն ռազմական ու դիվանագիտական օգնության բացահայտ ցուցաբերմամբ ՀՀ-ի դեմ այդ երկու կազմավորումների ագրեսիվ տանդեմի ձևավորման եզրափակիչ փուլն էր թևակոխում: Այդ ամենը ՀՀ զինված ուժերից պահանջում էր մարտական բարձր պատրաստականություն, մարտունակություն ու զգոնություն: Հայաստանի Հանրապետության համար պաշտպանական ոլորտում անվտանգության ապահովման գլխավոր միջոցը համակարգված պաշտպանական քաղաքականությունն էր, որի մշակումը և իրագործումը կատարեց պետության ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ երկրի նախագահի՝ Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի գլխավորությամբ: Պաշտպանական քաղաքականությունը իրագործվեց տարբեր ուղղություններով՝ ներքին ու արտաքին, ինչպես նաև տարբեր ոլորտներում՝ ռազմական, տնտեսական, ֆինանսական, իրավական, գիտակրթական, հոգեբանական և այլն: Ստեղծվեցին ժամանակակից բանակներին համապատասխան ստորաբաժանումներ ու ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ռազմաուսումնական մի շարք հաստատություններ: 2005թ. դեկտեմբերին հիմնադրվեց ՀՀ անվտանգության և պաշտպանության հարցերի ուսումնասիրման գիտակիրառական հաստատությունը՝ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ԱՌՀԻ): 2005 թվականից սկսած՝ համապետական բարեփոխումների համատեքստում սկսվեցին նաև ՀՀ զինված ուժերի բարեփոխումների նախապատրաստական աշխատանքները: Պաշտպանական բարեփոխումների իրականացման համար որդեգրվեցին հետևյալ հիմնական նպատակները՝ ա) զինված ուժերի արդիականացում և մարտունակության ամրապնդում՝ ժամանակակից չափանիշների ներդրմամբ, բ)

ՀՀ ռազմական անվտանգության ապահովում՝ իրական և հնարավոր ռազմական սպառնալիքների ճշգրիտ գնահատմամբ, գ) զինված ուժերի կողմից միջազգային անվտանգության ապահովման մասնաբաժնի ստանձնում՝ միջազգային անվտանգության տարբեր կառույցների հետ փոխգործակցելիության հնարավորությունների ընդլայնմամբ, դ) զինված ուժերի կայուն ու համակողմանի զարգացման ապահովում՝ ղեկավարման ու կառավարման ճկուն, թափանցիկ և արդյունավետ համակարգերի ներդրմամբ[204]: Զուգահեռաբար ՀՀ պաշտպանական գերատեսչությունը և ռազմաքաղաքական ղեկավարությունը սկսեցին բանակցություններ վարել ՀՀ ռազմական գործընկերների հետ՝ պաշտպանական բարեփոխումների համար անհրաժեշտ խորհրդատվություն և օժանդակություն ապահովելու համար: Այս ամենի արդյունքում 2005-2006 թվականներին հստակեցվեցին պաշտպանական բարեփոխումների իրականացման ձևերն ու ընթացակարգերը, ծրագրվեցին անհրաժեշտ ռեսուրսներ, ստեղծվեցին համապատասխան օղակներ: Սպառնալիքների վերլուծությունը, գնահատումը, դրանց դիմակայման միջոցները և ՀՀ անվտանգ ու կայուն զարգացման ուղիները նախանշվեցին 2007թ. փետրվարի 7-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» (Ռազմական դոկտրին) փաստաթղթում[205]: Դրա նախագիծը մշակեց Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովը, որի քարտուղարության դերը ստանձնեց ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն: «Ռազմավարության» մեջ անփոփվեց երկրի քաղաքական ղեկավարության տեսլականը Հայաստանի անվտանգ ու կայուն զարգացման վերաբերյալ: Այն նախանշեց նաև ՀՀ ազգային անվտանգության գերատեսչական ծրագրերի ռազմավարության իրագործումը, իսկ պաշտպանության ոլորտում՝ մշակվող ռազմական դոկտրինը: Նույն տարվա դեկտեմբերի 25-ին հաստատվեց ՀՀ ռազմական դոկտրինը[206]: Մշակվեց և 2008թ. նոյեմբերի 27-ին ընդունվեց «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքը, որը հստակորեն տարանջատեց պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր

---

[204] Տե՛ս **Օհանյան Ս.,** Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ, «Հայկական բանակ», 2008, № 2-3, էջ 7-13:

[205] Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, «Հայկական բանակ», 2007, հատուկ թողարկում, էջ 5-6

[206] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116 (ներբեռնումը՝ 17.06.2024թ.):

շտաբի գործառույթները[207]: Օրենքով ամրագրվեց, որ նախարարի ու տեղակալների պաշտոնները քաղաքական են, և զորքերի վերահսկողության հիմնական պատասխանատուն ԳԾ-ն է, որ բանակի մատակարարման հարցերը լուծվում են ԳԾ-ի պատվերով և նախարարի տեղակալ-դեպարտամենտի պետի ապարատի կողմից իրականացվող տենդերային թափանցիկ գնումներով: 2009 թվականից սկսվեց և ավարտին հասցվեց ՊՆ-ում քաղաքացիական հատուկ ծառայության ստեղծումը: Պաշտպանության ռազմավարական վերանայման ընթացքում մշակվեցին նաև հայեցակարգային ու ծրագրային մի շարք փաստաթղթեր, իրականացվեց օպերատիվ և վարչական ընթացակարգերի, անձնակազմի կառավարման մեխանիզմի գնահատման կարգը: Ռազմաքաղաքական գործունեությունը նպաստեց ՀՀ միջազգային ռազմական համագործակցության ակտիվացմանը՝ ինչպես միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին Հայաստանի անդամակցության, այնպես էլ երկկողմ հարաբերությունների ձևաչափով: ՀՀ ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչում տեղի ունեցավ սկզբունքային փոփոխություն՝ պայմանավորված արտաքին քաղաքականության մեջ փոխլրացման սկզբունքի որդեգրմամբ, ԱՊՀ-ի և ՌԴ-ի հետ ռազմաքաղաքական համագործակցության ամրապնդմամբ: Այս տեսանկյունից մեծ նշանակություն ունեցավ 2002թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության ակտիվ ռազմական համագործակցության ծավալումը ՀԱՊԿ-ի (Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության) շրջանակներում[208]: Այն համարվում էր ոչ միայն հանրապետության անվտանգության կարևոր բաղադրատարրը, այլև արտոնյալ պայմաններ ընձեռեց ռազմատեխնիկական մատակարարումների ծավալմանը և ամենամյա համատեղ զորավարժությունների միջոցով բանակի մարտունակության բարձրացմանը: 2009թ. հունիսին Մոսկվայում ստորագրվեց «ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական

---

[207] https://safesoldiers.am/wp-content/uploads/2018/01/HH_orenqy_pashtpanutyan_masin.pdf (ներբեռնումը՝ 17.06.2024թ.):

[208]Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ) հիմնվել է 2002թ. մայիսի 14-ին: Նույն թվականի հոկտեմբերի 7-ին ստորագրվել է ՀԱՊԿ Կանոնադրությունը: 2004թ. դեկտեմբերի 2-ից Կազմակերպությունն ունի ՄԱԿ ԳԱ դիտորդի կարգավիճակ: Հայաստանը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հիմնադիր անդամ է: Անդամակցությունը ՀԱՊԿ-ին Հայաստանի անվտանգության ապահովման բաղադրիչներից մեկն է (https://www.mfa.am/hy/international-organisations/1) (ներբեռնումը՝ 17.06.2024թ.):

ուժերի» մասին համաձայնագիրը[209], որը ամբողջացրեց օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման և ՀՀ-ի համար հավաքական անվտանգության ապահովման գործուն մեթոդների մշակման աշխատանքները: Նոր գործընկերների հետ հարաբերությունների ու գործակցության համար Հայաստանի Հանրապետությունը ներգրավվում էր նոր ձևաչափերի ու ծրագրերի մեջ, ինչպես 1997 թվականին անդամակցությունն էր Եվրաատլանտյան գործընկերության խորհրդին (ԵԱԳԽ), որի շրջանակներում ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը պարբերաբար մասնակցում էր անվտանգության հարցերի շուրջ «Հյուսիսատլանտյան դաշինք» կազմակերպության (ՆԱՏՕ-ի) ռազմաքաղաքական ղեկավարության խորհրդակցություններին: Այդ հարաբերությունների որակական նոր մակարդակ էր 2006թ. ՀՀ-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների» ծրագրով (ԱԳԳԾ) սկսված գործակցության անհատական ձևաչափը, ինչը «օժանդակում է Հայաստանին իր պաշտպանական և անվտանգության համակարգերը բարեփոխելու, ՆԱՏՕ-ի հետ ռազմական փոխգործակցության ունակությունը բարձրացնելու, անվտանգության ոլորտի լայնածավալ բարեփոխումներ իրականացնելու հարցերում: Անհատական ձևաչափում գործակցությունը դրսևորվում է նաև ՆԱՏՕ-ում հավաքական գործողություններին, ի մասնավորի՝ խաղաղապահ առաքելություններին մասնակցությամբ, որը ՀՀ-ն իրականացնում է ուժերի ներածին չափով»[210]:

2002 թվականից սկսած՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) պլանավորման և վերանայման գործընթացին ՀՀ-ի մասնակցությամբ պայմաններ ենստեղծվել՝ բարելավելու սեփական զինված ուժերի ունակությունները, և, որպես դրա վերջնարդյունք, այդ տարվա ապրիլի 22-ին տեղի ունեցավ «28+Հայաստան+գործընկերներ» ձևաչափով ՆԱՏՕ-ի քաղաքական և գործընկերության կոմիտեի նիստը, որտեղ քննարկվեց և հաստատվեց Հայաստան-ՆԱՏՕ Պլանավորման և վերանայման գործընթացի փաստաթուղթը[211]:

---

[209] Հմմտ.՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումը 2009 թվականի հունիսի 14-ին մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=55692) (ներբեռնումը՝ 17.06.2024թ.):

[210] **Ղևոնդյան Ա.,** ՀՀ-ՆԱՏՕ գործակցության դերն ու նշանակությունը ՀՀ ռազմաքաղաքական անվտանգության ապահովման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», 2018, № 3, էջ 43:

[211] Նույն տեղում:

2003թ. ՀՀ-ն հյուրընկալեց «Համատեղ լավագույն ջանք - 2003», իսկ 2008թ.՝ «Համատեղ աղեղ և համատեղ նիզակակիր» զորավարժությունները: 2005թ. հաստատվեց Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ծրագիրը, որը նախատեսված էր հետագա 10 տարիների համար, նպաստում էր միջազգային փորձի հաշվառմամբ իրականացվող բարեփոխումների միջոցով հանրապետության պաշտպանական ոլորտի, մասնավորապես բանակի համապարփակ արդիականացման ընթացքին: ՀՀ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ իր դրսևորումը ստացավ Կոսովոյում, Աֆղանստանում և Իրաքում իրականացված խաղաղապահ գործողություններում: ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ստորաբաժանման և մասնագետների մասնակցությամբ Հայաստանը դարձավ միջազգային անվտանգության ակտիվ մասնակից, որը զգալիորեն բարձրացրեց Հայաստանի ռազմաքաղաքական հեղինակությունը միջազգային ասպարեզում[212]: Ռազմաքաղաքական հարթությունում Հայաստանի Հանրապետության ավելի բազմավեկտոր և հավասարակշռված միջազգային հարաբերությունները, բացի հայաստանյան միջազգային պարտավորությունների իրականացումից, կոչված էին ծառայելու ՀՀ պաշտպանական բարեփոխումների խթանմանը: Զինված ուժերի մարտունակության բարձրացման համար կարևորագույն գործընթաց է նաև համագործակցությունը այլ երկրների զինված ուժերի հետ, փորձի փոխանակումը, մասնակցությունը տարբեր զորավարժություններին: 2009թ. ընթացքում շարունակվեց համագործակցությունը ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Կարելի է հատկապես առանձնացնել մասնակցությունը ՀԱՊԿ-ի շրջանակներում ՌԴ Չելյաբինսկի մարզի Չեբարկուլ փորձադաշտում անցկացված «Փոխգործակցություն-2010» զորավարժությանը, որտեղ մարտական հրաձգության ընթացքում ցուցաբերած լավագույն արդյունքների համար Հայաստանը ներկայացնող մոտոհրաձգային վաշտն արժանացավ զորավարժության ղեկավարության գավաթին[213]:

ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարում:

---

[212] **Հովհաննիսյան Ն.,** Հայաստանի Հանրապետությունը կայացած արդիական պետություն է և միջազգային հանրության լիիրավ անդամ, «Հայկական բանակ», 2016, № 3, էջ 22-25:

[213] http://www.odkb.gov.ru/u-co-operation/a.htm (дата обр. 17.06.2024 г.), հմմտ.՝ Ս. Օհանյանի ելույթը բանակի տարեդարձին նվիրված միջոցառման ժամանակ, https://hetq.am/hy/article/49909 (ներբեռնումը՝ 17.06.2024թ.):

Նոր որակ ու թափ ստացավ Հայաստան-Գերմանիա ռազմաքաղաքական երկխոսությունը, որին նպաստում էր այն հանգամանքը, որ Աֆղանստանում ՀՀ ԶՈՒ խաղաղապահ ստորաբաժանումը գործում էր գերմանական հրամանատարության ներքո: Զարգացավ համագործակցությունը Բելառուսի, Ղազախստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Միացյալ Թագավորության, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի հետ: 2010թ. ՀՀ-ի հետ երկկողմ ռազմական համագործակցության ծրագրեր իրականացնող պետությունների շարքում ավելացան Հունգարիան, Սլովակիան, Ֆրանսիան և Չեխիան:

2007 թվականից սկսած՝ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում 2009 թ. հաջողությամբ գործարկվեց ՀՀ ՊՆ և ԶՈՒ ԳՇ նոր կառուցվածքը. ՀՀ ՊՆ-ում ստեղծվեցին պաշտպանական քաղաքականության վարչություն, նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչություն, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում՝ ռազմավարական պլանավորման վարչություն, ինչպես նաև ակտիվացավ ՀՀ ԶՈՒ պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի ներդրման գործընթացը, շարունակվեց ՀՀ խաղաղապահ բրիգադի համալրումը:

ՀՀ ԶՈՒ-ում և ՊԲ-ում մահվան ելքով ու մարմնական վնասվածքներով զուգորդված դեպքերով դատաբժշկական փորձաքննությունների կատարումը կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ զինվորական դատախազի համատեղ հրամանը սահմանում էր այդ գործողությունների նոր կարգը՝ ուժը կորցրած ճանաչելով 1998 թ. մայիսի 11-ի նմանատիպ համատեղ հրամանը[214]:

ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման երկու (1993-1995թթ.) և (2000-2007թթ.) շրջաններում ՀՀ զինված ուժերի կայացման ու անընդհատ զարգացման գործում Ս. Սարգսյանի ավանդի մասին են վկայում նաև դրա անմիջական արդյունքի՝ ՀՀ ԶՈՒ-ի ընթացիկ վիճակի գնահատականները արտասահմանցի ռազմական մասնագետների ու փորձագետների կողմից:

«Արևմուտքը «գլուխ է ջարդում» Հելսինկիի անձեռնմխելիության վրա,- ասել է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ Կոմս Շեննոնը,- Մենք կարող ենք ուսումնասիրել այն ժամանակ գոյություն ունեցող Ղարաբաղի անձեռնմխելիության հարցը մինչև Հելսինկի ընկած ժամանակահատվածում: Հնարավոր է՝ այդ հարցով պետք է որ զբաղվեն իրավաբանները: Ամեն դեպքում,

[214] ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների նորմատիվ բնույթի հրամաններ (1992-2001թթ.), էջ 211:

վերջնական արդյունքը Ադրբեջանի ներխուժումն էր Ղարաբաղ, որը օգտագործում էր Խորհրդային չորրորդ բանակի թողած սպառազինությունը, որը զորացրվել էր Բաքվում՝ թողնելով ողջ զինանոցը: Արդյունքում, Ադրբեջանն իր հզորությամբ տեսականորեն գերազանցում էր Ղարաբաղին. մեծ բնակչություն, նրա զորքերը ղեկավարվում էին թուրքական բանակի համազգեստով սպաների կողմից և մոջահեդներ, որոնցից ես թարգմանչի օգնությամբ հարցազրույց եմ վերցրել, և որոնք ամսական 500 դոլար գումարով կռվում էին Ադրբեջանի կողմում: Ղարաբաղի փոքրաթիվ բնակչությունը, այնուամենայնիվ, կարողացել է դիմադրություն ցույց տալ, հետ շպրտել Ադրբեջանի գերազանցող ուժերին և իր երկրի շուրջ հուսալի արգելք ստեղծել, որպեսզի պաշտպանվի հրետակոծություններից»[215]:

«Լեռնային Ղարաբաղի բանակն ամենամարտունակն է տարածաշրջանում,- 2004թ. մայիսին գրել է «Կենտրոնական Ասիա և Կովկաս» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (Ծվեդիա) տնօրեն Մուրադ Էսենովը,- մինչդեռ Ադրբեջանի զինված ուժերն առ այսօր ողբալի վիճակում են և չեն համարձակվի նոր պատերազմ սկսել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի դեմ: Վերջին տասը տարիներին ադրբեջանական բանակի մարտունակության բարձրացման ասպարեզում արմատական փոփոխություններ տեղի չեն ունեցել, մինչդեռ, հակառակ դրան ղարաբաղյան բանակն առանձնանում է իր մարտունակությամբ ու պատրաստվածությամբ» [216]:

«Անկեղծ ասած՝ իմ առաջին տպավորությունը ղարաբաղյան բանակի մասին շատ մեծ է, և դա ունի իր հիմնավոր պատճառը,- գրել է կանադացի ռազմական պատմաբան, նախկին դեսանտային ու ծովային կոմանդոս, ռազմավարական հետախուզության բնագավառում կարիերա ունեցած Պատրիկ Ուիլսոն Գորը,- իմ պարագայում, որպես ռազմական գործին քիչ թե շատ տեղյակ մարդու, դժվար չէր այստեղ նկատել այն հիմնական տարրերը, որոնք բանակին անհրաժեշտ են մարտունակ կոչվելու համար: Տեսնելով շարքային ու սպայական կազմի կեցվածքը, նրանց փոխհարաբերությունները մեկը մյուսի հետ, առկա սպառազինության և տեխնիկայի շահագործման ու սպասարկման վիճակը և էլի

---

[215] House of Lords Hansard, “House of Lords Sitting of Wednesday 17th March 1999”, Fifth Series, Volume 598, Debate on Nagorno-Karabakh Columns 797-820(Column 804), http://www.publications.parliament.uk/pa/ld199899/ldhansrd/vo990317/text/90317-08.htm#90317-08_head0 (ներբեռնումը՝ 23,06,2024 թ.): Հմմտ.՝ ***Иоаннис Харалампидис,*** Спонсированные на убийство: наемники и террористические сети в Азербайджане, Москва, Издательство “МИА”, 2013, с. 7.

[216] https://www.panarmenian.net/eng/news/10552/ (ներբեռնումը՝ 23.06.2024 թ.):

մի շարք կարևոր հանգամանքներ, զգացի, որ այստեղ գոյություն ունի կանոնավոր և կարգապահ բանակ, որն անհրաժեշտության դեպքում ընդունակ կլինի կատարելու իր առջև դրված ցանկացած մարտական խնդիր: Հատկապես ուշադրության արժանի է հակամարտող զորքերի շփման գծում ղարաբաղցիների ստեղծած պաշտպանական համակարգի առանձնահատուկ կառուցվածքը: Այդ ամենին թռուցիկ հայացք գցելով, ոչ միայն ես, այլ երևի թե ցանկացած կողմնակի մարդ կարող է կատարել մեկ կարևոր հետևություն՝ ղարաբաղցիները առավել շատ մտահոգված են պաշտպանողական խնդիրներով, քան՝ հարձակողական: Իսկ դա, թե՛ ռազմավարական, թե՛ մարտավարական տեսանկյուններից վերցրած ավելի շատ խոսում է նրանց որդեգրած ճիշտ դիրքորոշման մասին»[217]:

«Հայկական զինված ուժերն ունեն լավ համբավ և ջերմ հարաբերություններ ռուսների հետ,- 2011թ. գրել է Փաթթերսոնի դիվանագիտության և միջազգային առևտրի դպրոցի դոցենտ, ռազմական փորձագետ, ազգային անվտանգության հարցերի մասնագետ Ռոբերտ Ֆարլին (ԱՄՆ),- Ադրբեջանի ռազմական ծախսերը նշանակալիորեն գերազանցում են Հայաստանի ծախսերին, սակայն հայկական զինված ուժերն ունեն լավ համբավ և բավականին ջերմ հարաբերություններ ռուսական զինվորականության հետ... Մասնագետների մեծամասնությունը, որոնց հետ ես զրուցել եմ այդ թեմայի շուրջ, զգույշ են վերաբերվում Ադրբեջանի հնարավորություններին...»[218]:

«Իրականում Ադրբեջանի ռազմական բյուջեն անհամեմատ մեծ է: Սակայն Բաքվին դեռևս երկար ժամանակ է հարկավոր նման ներդրումներ կատարելու ռազմական ոլորտում, որպեսզի բանակի հզորությունը հասնի այն մակարդակին, որը հնարավորություն կտա տվյալ հարցը լուծել պատերազմի միջոցով,- 2010թ. դեկտեմբերին ասել է Ադրբեջանում (2000-2003) և Թուրքիայում (2005-2008) ԱՄՆ նախկին դեսպան, ԱՄՆ Ատլանտյան խորհրդի Եվրասիական կենտրոնի տնօրեն Ռոսս Ուիլսոնը,- Ղարաբաղյան հարցի ռազմական լուծումը ծայրահեղ դժվար կլինի: Այն ոչ միայն թանկ կնստի Ադրբեջանի վրա, այլև բացասաբար կանդրադառնա իր ապագայի և Արևմուտքի հետ փոխհարաբերությունների վրա...

---

[217] Պետականություն և բանակ (արցախյան թեման մամուլի էջերում), Ս., «Դիզակ պլյուս», 2019, էջ 89-90, հմմտ.՝ ***Gore, Patrick Wilson,*** Tis some poor fellow's skull: post-Soviet warfare in the southern Caucasus, New York: iUniverse, 2008, p. 113.

[218] https://vpk.name/news/48987_armyanskaya_armiya_glazami_zarubezhnyh_ekspertov.html (ներբեռնումը՝ 23.06.2024թ.):

Հայերը լեռնային պայմաններում ունեն հզոր դիրքեր և շատ դժվար կլինի նրանցից հետ վերցնել ինչ-որ հողակտոր...»[219]:

«Հայաստանի զինված ուժերի զարգացման տասնամյա արդյունքներին անդրադառնալիս հարկ է խոստովանել, որ հայերին հաջողվեց կարճ ժամանակահատվածում ստեղծել տարածաշրջանի ամենաուժեղ ու մարտունակ բանակներից մեկը՝ զինված ուժերի շինարարության ասպարեզում բազմաթիվ առումներով առաջ անցնելով հետխորհրդային բազմաթիվ հանրապետություններից,- 2002թ. գրել է ՌԴ ՊՆ «Կրասնայա զվեզդա», պաշտոնաթերթի աշխատակից Ալեքսանդր Տիխոնովը,- այժմ էլ Հայաստանում նայում են դեպի ապագան: Դրան են նպատակաուղղված գիտահետազոտական ու փորձնակոնստրուկտորական մի շարք աշխատանքներ. օրինակ՝ կատարվում են ռազմավարության, մարտավարության ու օպերատիվ արվեստի զարգացման, ինչպես նաև սպառազինության հին համակարգերի արդիականացման համար առավել կատարելագործված հանգույցների արտադրության աշխատանքներ»[220]:

«Եթե ադրբեջանական բանակը կողմնորոշվել է դեպի քանակական,- 2011թ. կարծում էր քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը,- ապա հայկական բանակը՝ դեպի որակական չափորոշիչներ, որպիսիք են ՀՕՊ համակարգի, Լեռնային Ղարաբաղում պաշտպանական համակարգերի զարգացումը»[221]:

«Հայկական ու ղարաբաղյան բանակների պատրաստությունն ու մարտական ոգին անհամեմատ բարձր են ադրբեջանականից,- 2011թ. գտնում էր ռազմական փորձագետ Ալեքսանդր Վյատկինը,- իսկ վերջինիս ունեցած քանակական գերակշռությունը ոչ մի կերպ չի փոխարկվում որակականի: Ավիացիայի ասպարեզում ունեցած գերակշռությունը չեզոքացվում է հայկական կողմի ունեցած ռուսական արտադրության արդիական ՀՕՊ համակարգով, իսկ տանկերի ու հրետանային համակարգերի գերակշռությունը մարտական գործողությունների թատերաբեմի յուրահատուկ պայմանների հետևանքով բացահայտորեն անբավարար է ճեղքելու համար ամրաշինական կառույցներով ու հակատանկային՝ արգելքներով հագեցած ղարաբաղյան պաշտպանական բնագծերը»[222]:

---

[219] https://www.amerikayidzayn.com/a/wilson-111141574/699901.html (ներբեռնումը՝ 23.06.2024թ.):

[220] ***Тихонов А.,*** Сильное звено Армении, «Красная Звезда», (Центральный орган Министерства обороны Российской Федерации), 20 февраля 2002 г. (http://old.redstar.ru/2002/02/20_02/3_02.html)

[221] https://nv.am/vysokaya-vyuchka-i-horoshaya-reputatsiya/ (ներբեռնումը՝ 23.06.2024թ.):

[222] https://topwar.ru/3236-armyanskaya-armiya-glazami-zarubezhnyx-yekspertov.html (ներբեռնումը՝ 23.06.2024թ.):

Այսպիսով, Ս. Սարգսյանի ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարության երկրորդ շրջանը նույնպես հագեցած էր բարեփոխումներով, ռազմական շինարարությամբ, մարտական պատրաստությամբ, ՁՈՒ կարողությունների զարգացմամբ, որոնց արդյունքները փաստվել են նաև արտասահմանյան փորձագետների ու մասնագետների գնահատականներով:

ՀՀ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԻ՝ ՀՀ ՁՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԱՎԱՆԴԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տակավին պաշտպանության նախարարի պաշտոնավարության ժամանակ սկսված ռազմաարդյունաբերական ոլորտի բարեփոխումների գործընթացը նոր թափ առավ Ս. Սարգսյանի նախագահության շրջանում: Մշակվեցին ՀՀ ռազմական արդյունաբերության հայեցակարգի և ռազմարդյունաբերական զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրեր: 2010 թվականից ՀՀ ՁՈՒ պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի զարգացման գործընթացը մտավ հայեցակարգային բնույթի որոշումների կատարման փուլ, գործնականում սկսեց իրականացվել «ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2010-2015թթ. ծրագիրը»: Հիմնական խնդիրները մարտական ներուժի, մարտական ու զորահավաքային պատրաստականության պահպանումն էր այն մակարդակում, որը երաշխավորված ձևով ապահովում էր ՀՀ ինքիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության, պետական սահմանի հուսալի պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ժողովրդի խաղաղ, ստեղծագործ աշխատանքը: Զգալի աշխատանքներ կատարվեցին պաշտպանական շրջանների, զորամասերի և ստորաբաժանումների դիրքերի ինժեներական ամրացման ասպարեզում: Զորային կառույցի բարեփոխման նպատակով տեղի ունեցան որոշակի կառուցվածքային փոփոխություններ, վերակազմավորվեցին մի շարք զորամասեր ու ստորաբաժանումներ, ինչի արդյունքում բարձրացավ դրանց մարտունակության աստիճանը, մեծացան կրակային խոցման հնարավորությունները: Լուրջ ուշադրություն դարձվեց մարտական պատրաստականության խնդիրներին՝ մարտավարաշարային տարբեր զորավարժություններին ու զորախաղերին: Պաշտպանության բանակի 2011 թվականի հակահարձակողական

զորավարժությանը անձամբ մասնակցեց ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Ս. Սարգսյանը[223]: Զորավարժությունն անցավ պատշաճ մակարդակով և տարբերվում էր ինչպես իր ծավալով, այնպես էլ ղեկավարման համակարգի կատարելագործմամբ, մարտավարական խնդիրների կատարման որակով, ինժեներական աշխատանքների պատշաճ իրականացմամբ ու նաև կրակային պատրաստության, կրակային խոցման մեծ չափերով. դրանք օգնում էին զինվորին իրեն առավել ապահով զգալու իսկական մարտադաշտում, հոգեբանորեն վարժվելու «մարտ» հասկացության պայմաններին: Բանակն ամեն տարի կատարելագործվում էր, դառնում ավելի մարտունակ, ավելի կազմակերպված, կարգապահ: Հատուկ ուշադրություն էր դարձվում հակաօդային պաշտպանությանը, ավիացիայի, հրետանու, հետախուզության, կապի, ռադիոէլեկտրոնային զորամասերի և ստորաբաժանումների կատարելագործմանը: Բանակի արագաշարժությունը ապահովելու համար այն համալրվել է զինված պայքարի առաջատար բոլոր միջոցներով: Զորամիավորումների և զորամասերի մարտական պատրաստության խնդիրների հաջող կատարման համար վերամշակվեցին և գործողության մեջ դրվեցին մարտական պատրաստության նոր, արդիական ծրագրեր, ինչպես նաև մարտական կանոնադրություններ, հրահանգներ, սպաների և ենթասպաների հրամանատարական պատրաստության ծրագրեր, հրաձգային և մարտական մեքենաների վարման դասընթացներ: 2009թ. անցկացվեցին դաշտային երթեր, շտաբային զորավարժություններ ու մարտավարական մարզումներ, որոնք զինված ուժերի պատմության մեջ ծավալով առաջինն էին: Աննախադեպ էր նաև զորամիավորումների մարտական պատրաստության բաժինների և զորամասերի հրամանատարների ստուգողական հավաքը: 2010թ. համարվեց «Գիտելիքների տարի»: Այդ տարում մեծ ուշադրություն դարձվեց զինծառայողի անհատական պատրաստությանը՝ կարևորելով մասնագիտական որակների կատարելագործումը՝ մարտական վարպետության աստիճանը, ունակություններն ու հմտությունները, ֆիզիկական և հոգևոր պատրաստվածության մակարդակը: Չափազանց կարևոր է, որ Ս. Սարգսյանի նախագահության տարիներին, հատկապես ուսումնական գործընթացում, զորավարժությունների ժամանակ ձեռք բերված գիտելիքները օգտագործվում էին սահմանների պաշտպանությունը, մարտական խնդիրների կատարումը կատարելագործելու նպատակով: Սրա վկայությունը 2010 և 2011

[223] Տե՛ս https://www.serzhsargsyan.com/hy/article/serzh-sargsyan-working-visit-to-nkr (ներբեռնումը՝ 18.06.2024թ.):

թվականներին տեղի ունեցած մի շարք դեպքերն են, երբ սահմանը խախտած դիվերսանտները անմիջապես վնասազերծվեցին հայ զինծառայողների կողմից: Օրինակ՝ 2010թ. հուլիսի 13-ին Քարվաճառում տեղակայված զորամասի պահպանության գոտում պետական սահմանը խախտած հակառակորդի զինված խումբը հայկական ուժերի կողմից ստացավ արժանի հակահարված և ստիպված եղավ նահանջել: Նույն թվականի սեպտեմբերի 4-ին ՊԲ N 49971 զորամասի պահպանության գոտի ներխուժած հակառակորդը մեր զինծառայողների աչալրջության և քաջության շնորհիվ ստացավ արժանի հակահարված: Այդ նույն ժամանակ մեր զինվորը, ձեռնամարտում հաղթելով հակառակորդի հատուկ ստորաբաժանման դիվերսանտին, ձերբակալեց նրան: Նույն տարում N 70179 և N 51191 զորամասերի հայ զինվորները, վտանգելով իրենց կյանքը, փրկեցին համածառայակիցների կյանքը, վնասազերծեցին ադրբեջանցի դիվերսանտներին: 2011թ. հոկտեմբերին ՀՀ նախագահն այցելեց Արցախի Հանրապետությունում մարտական հերթապահության ժամանակ ադրբեջանական դիվերսանտներին վնասազերծած Արտակ Ղաբուզյանին և նրա հերոսության համար իբրև նվեր ընտանիքին հատկացրեց երեքսենյականոց բնակարան[224]:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակում չափազանց կարևորվում էր հայկական բանակի սպառազինության մակարդակը: 2000-2012թթ. տեխնիկական ապահովման ջանքերն ուղղվեցին սպառազինության և ռազմական տեխնիկայի հուսալի ու անխափան շահագործմանը, տեխնիկական համակարգի կատարելագործմանը, հրթիռների, զենքի, զինամթերքի, պահեստամասերի և ռազմատեխնիկական ունեցվածքի պաշարների կուտակմանը: Պետական պատվերի ձևով հայկական ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններում սկսվեց պաշտպանական նշանակության արտադրատեսակների մշակման, արտադրական տեխնոլոգիաների ստեղծման և արտադրության նպատակային ֆինանսավորման գործընթացը: Ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպություններն իրականացրին պետական պաշտոնական պատվերների կատարման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ՀՀ զինված ուժերը մատակարարել սեփական արտադրության զինատեսակներով և նյութատեխնիկական պաշարներով, նորոգել, արդիականացնել շահագործվող սպառազինությունը և ռազմական տեխնիկան, ստեղծել նոր փորձանմուշներ: Մասնավորապես, մեծ են հաջողությունները

[224] https://www.serzhsargsyan.com/hy/article/serzh-sargsyan-working-visit-to-nkr (ներբեռնումը՝ 18.06.2024թ.):

օպտիկա-էլեկտրոնային և ռադիոտեխնիկական հետազոտման ու խոցման համալիր նմուշների պատրաստման գործում: 2010-2012թթ. շարունակվեց հայոց բանակը տեխնիկայով համալրելու գործընթացը: ՀՀ ԶՈՒ-ն համալրվեց հակաօդային պաշտպանության համակարգերով, կրակային խոցման նորագույն միջոցներով, հաջողվեց ստեղծել զինամթերքի լուրջ պաշարներ: Շարունակվեց սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացումը հայրենական արտադրության միջոցներով: Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու մարտական կիրառման ուսուցման և հմտությունների ձեռքբերման նպատակով մշակվել ու արտադրվել են տարբեր վարժասարքեր, ստեղծվել է ուսումնական հայրենական նյութատեխնիկական բազա, մշակված և արտադրության մեջ ներդրված սպառազինության և ռազմական տեխնիկայի որոշ տեսակներ ցուցադրվել են արտերկրյա ցուցահանդեսներում: Որոշ համակարգեր և համալիրներ հիմք են հանդիսացել արտերկրի հետ կոոպերացիոն կապերի ստեղծման և ռազմատեխնիկական համագործակցության խորացման համար: 2011թ. նոր թափով ընթացան հայրենական արտադրության արտադրատեսակների մշակումն ու վարժասարքերի նորոգումը: Առաջին անգամ ՀՀ արտադրատեսակները հաջողությամբ ներկայացվեցին արտերկրում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում և Հունաստանում կազմակերպված «Ժուկովսկու մեքենաշինական տեխնոլոգիաներ» և Սալոնիկի «Defences-2010» միջազգային ցուցահանդեսներում: Տարին նշանավորվեց նաև Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Բելառուսի, Խորվաթիայի հետ ռազմատեխնիկական կապերի ամրապնդմամբ[225]: 2011թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսի ժամանակՀանրապետության հրապարակում առաջին անգամ ցուցադրվեցին 9472 «Էլբա» օպերատիվ մարտավարական և 9479-1 «Տոչկա» հրթիռային համալիրները, ինչպես նաև Ս-300 ԶՀՀ-ները: Բացի այդ, որպես նորություն, ցուցադրվեցին հայկական արտադրության «Կռունկ»-25 անօդաչու թռչող ապարատները (ԱԹԱ-ներն ու տեխնիկական այլ նմուշներ) և այլն: Այս զորահանդեսին առանձին շարասյունով մասնակցեցին հատուկ նախանշանակման ստորաբաժանումները, սահմանապահները, ներքին զորքերը, ոստիկանությունը, Ռուսաստանի Դաշնության զորքերը և այլն:

[225] Հմմտ.՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված «Աշխատանքային տետրեր», 2007թ., № 4, էջ 40–41 և հաջորդիվ:

Բանակ-հասարակություն կապի ու ժողովրդական համախմբվածության առումով խիստ խորհրդանշական էր հոգևորականների, ազատամարտիկների առանձին շարասյուների անցումը Հանրապետության հրապարակով: Անչափ կարևոր էր, որ ժողովուրդը զգար բանակի ուժը, իսկապես համոզված լիներ, որ ինքը պաշտպանված է հուսալիորեն: Այս տեսանկյունից նույնպես սեպտեմբերի 21-ի զորահանդեսը ծառայեց իր նպատակին:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների շրջանակում բավական մեծ աշխատանք կատարվեց բանակ-հասարակություն կապի զարգացման ուղղությամբ: 2009թ. այդ նպատակով ստեղծվեց հասարակական խորհուրդ, որը ակտիվ աշխատանք տարավ գիտության և կրթության ոլորտի մասնագետների կողմից՝ «Պատմություն և մշակույթ» խորագրով հայկական զորամասերում դասախոսություններ կարդալու, զինվորների ռազմահայրենասիրական, դաստիարակության բարձրացման համար: Նույն տարում ՀՀ պաշտպանության և ԿԳ նախարարների մայիս ամսվա համատեղ որոշմամբ վերանայվեց նախկինում ՀՀ հանրակրթական դպրոցները ՀՀ զինված ուժերին կցագրելու վերաբերյալ հրամանը, և հանրապետության 450 կրթօջախներ կցագրվեցին զինված ուժերի զորամասերին: Կահավորվեցին ռազմագիտական լսարաններ, մեծ աշխատանք կատարվեց նաև բանակ-բուհեր կապի ամրապնդման ուղղությամբ, հանրապետության առաջատար բուհերը կցագրվեցին ՊՆ ղեկավար անձանց: Այդ համագործակցությունը կարևոր էր մանավանդ ռազմական ոլորտում հանրապետության գիտական ներուժի օգտագործման տեսանկյունից:

2011թ. ձմեռային ուսումնական շրջանը ՀՀ ԶՈՒ-ում հայտարարվեց «Կարգապահության ամրապնդման կիսամյակ»: Զգալիորեն նվազեց կարգապահական խախտումների հետևանքով պատահարների թիվը: 2010-2012թթ. ՀՀ զինվորական դատախազությունը քննչական ծառայության հետ և հասարակության աջակցությամբ շարունակեց հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և հանցագործություն կատարած յուրաքանչյուր անձին համարժեք պատասխանատվության ենթարկելու գործընթացը: Դա էլ իր հերթին նպաստեց կարգապահության բարձրացմանն ու հանցավորության նվազմանը: Բանակում կարգապահությանը նպաստեցին նաև ՊՆ զանգվածային լրատվության միջոցներում պարբերական անդրադարձերը, դատական նիստերի լուսաբանումը և այլն: Ձեռքբերումներով հանդերձ՝ կարգապահական կոպիտ խախտումների հետևանքով տեղի ունեցան արտակարգ պատահարներ, ցավոք,

նաև մահվան ելքերով, որոնք հասարակական մեծ հնչեղություն ստացան: Կարգապահական խախտումների բացառմանն ուղղված աշխատանքում իրականացվեցին համալիր միջոցառումներ: 2009-2012թթ. զինվորական կարգապահության կտրուկ բարձրացմանն ու արտակարգ դեպքերի ու պատահարների կանխարգելմանն ուղղված ցուցումները ողջ անձնակազմին հասցնելու համար ՀՀ ԶՈՒ-ում մեծածավալ աշխատանքներ կատարվեցին: Մահվան ելքով պատահարները հանգեցրին նրան, որ որոշում ընդունվեց 2012թ. առաջին կիսամյակում կարգապահությունը խթանող միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Բազմիցս ընդգծվել է, որ միջադեպերի կրկնության պատճառ են դառնում նաև զենքի օգտագործման կանոնների խախտումները և միջանձնային հարաբերությունները, որոնք պարունակում են նաև զինվորի ինքնահաստատման խնդիրը: Պատահական չէ, որ 3,5 տարվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով կանոնադրական խախտումների ու ծառայողական կոպիտ սխալների համար զբաղեցրած պաշտոններից հեռացվել են զորամասերի 30 հրամանատարներ, որոնք փոխարինվել են ավելի բարձրակարգ կադրերով: Ծառայությունից հեռացվել են վարչության պետերի աստիճանից բարձր 10 հոգի, իսկ ևս 10 հոգի ստացել են խիստ նկատողություն: Ձեռնարկված վճռական միջոցառումներով հանդերձ՝ բանակային ծառայության հիմնական թերությունները շարունակել են մնալ հովանավորչությունն ու բանակային ծառայությունից խուսափելու դեպքերը:

ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդության ստեղծումից հետո ամենաանհրաժեշտ քայլերից մեկը ծառայության գործունեության կանոնադրության և ծրագրերի ստեղծումն էր: Սակայն ոչ պատմական վավերագրերը, ոչ էլ արտասահմանյան երկրների փորձը չեն բավարարել ժամանակակից պայմաններին, ուստի երկու տարվա աշխատանքներից հետո կազմվել է «Հոգևոր ծառայության կանոնադրություն», որով հստակեցվել ու կանոնակարգվել են բանակում հոգևորականի գործունեության դաշտը, կառուցվածքը, խնդիրներն ու նպատակները: 2000թ. սեպտեմբերի 14-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը և ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը

ստորագրել և հաստատել են այդ Կանոնադրությունը[226], որը դարձել է ԱՊՀ երկրներում իր տեսակի մեջ առաջին պաշտոնական փաստաթուղթը[227]:

Բավական աշխատանքներ տարվեցին նաև թիկունքում: Այստեղ հիմնական խնդիրներն էին բանակին վառելիքաքսուքային նյութերով և պարենով ապահովելը՝ մարտական գործողություններ վարելու համար, ինչպես նաև ճգնաժամային իրադրություններում նյութատեխնիկական միջոցների պաշարներ ստեղծելը, գնագոյացման ընդհանուր քաղաքականություն ձևավորելը: 2000-2011թթ. նշանավորվեց ՀՀ զինված ուժերի սպայական կազմի երիտասարդացման և հմուտ կադրերի պատրաստման գործընթացով: ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը ընդլայնելով գործունեության ոլորտը՝ ներառեց սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնը: Ա. Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն ինստիտուտը սկսեց վերապատրաստել նախկինում միջնակարգ զինվորական կրթություն ստացած սպայական կազմը և զուգահեռ պատրաստել երկու նոր մասնագիտություններով սպաներ՝ հակաօդային պաշտպանության և կապի գծով: Վերոնշյալ տարիներին հայ կուրսանտները ուսումնառության են մեկնել ոչ միայն Ռուսաստանի, Հունաստանի, ԱՄՆ-ի, Չինաստանի, այլ նաև Իտալիայի ու Գերմանիայի ռազմական ուսումնական հաստատություններ:

2000-2012 թթ. զգալի աշխատանք է կատարվել ինչպես զինծառայողների, այնպես էլ հաշմանդամ դարձած, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալ-կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 1152 հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին բնակարաններ ձեռք բերելու համար տրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն: Սկսած 2004թ. հունվարի 1-ից՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ հաշմանդամ դարձած շարքային կազմի զինծառայողների ընտանիքների անդամների՝ սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակները, ըստ տարիների, համապատասխանաբար

---

[226] **Ժամկոչյան եպիսկոպոս Ա., Սարգսյան Լ.,** Հայոց առաքելական եկեղեցին և նրա սպասավորները աշխարհազորի պայքարում, «Հայկական բանակ», № 4, 2016, էջ 48:

[227] Ավելի ուշ հոգևորականի ներկայությունը բանակում վավերացվել է նաև 2007թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով:

ավելացել են 20 %-ով: Բացի հաշմանդամներից՝ տարեցտարի բարելավվում են զինծառայողների ծառայության, կենցաղի և հանգստի պայմանները: Լուծումներ են տրվել զինծառայողների սոցիալական և հատկապես բնակարանային խնդիրներին: ՀՀ պաշտպանության նախարարությունը կառուցել և վերակառուցել է մոտ 5 բնակելի շենքեր, որի արդյունքում մոտ 210 զինծառայողներ ապահովվել են ծառայողական բնակարաններով, որոնցից Երևան քաղաքում՝ մոտ 90 զինծառայող, իսկ մարզերում՝ մոտ 120 զինծառայող[228]: ՀՀ զինված ուժերի համալրումը շարունակում է իրականացվել խառը սկզբունքով՝ ժամկետային և ընդլայնվող պրոֆեսիոնալ ծառայությունների արդյունավետ զուգակցմամբ:

ՀՀ զինված ուժերի կարևորագույն խնդիրն էր ՀՀ և Արցախի Հանրապետության սահմանների հուսալի պաշտպանությունը, ինչի համար մեծածավալ աշխատանքներ են իրականացվել՝ մարտական հերթապահության, ինժեներական սարքավորումների կատարելագործումից մինչև հակառակորդի ոտնձգությունների կանխարգելում կամ հակահարված հասցնել: Դրան ՀՀ զինված ուժերը հետևողականորեն պատրաստվում էին և պատրաստության աստիճանը ցուցաբերում ինչպես զորավարժություններում, միջազգային մրցախաղերում, այնպես էլ սահմանների նկատմամբ ոտնձգություններ կատարող հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերին (ԴՀԽ) համարժեք պատասխան գործողություններում, ինչը Ադրբեջանի բռնատիրական վարչակարգի սպառնալիքները կանխարգելելու կամ չեզոքացնելու փորձված միջոցն էր:

ՀՀ պաշտպանական ոլորտի բարեփոխումները նոր թափ ստացան 2016թ. հոկտեմբերից, երբ ՀՀ պաշտպանության նախարար նշանակվեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը: Երկրի նախագահը, ներկայացնելով նոր նախարարին, շեշտեց Զինված ուժերի արդիականացման, բանակ-պետություն կապի ամրապնդման և քաղաքացիական վերահսկողության ամրապնդման անհրաժեշտությունը[229]: Նորանշանակ նախարարն առաջ քաշեց «Ազգ-բանակ» հայեցակարգը և դրանից բխող մի շարք ծրագրեր: ՀՀ պաշտպանության նախարարի տեսլականում արձանագրված է, որ «ազգ-բանակն ավելին է, քան ազգային բանակը, քանզի ազգային բանակը ծառայում է ազգին,

[228] Տարեան զեկույց 2011թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին, էջ 91 (http://www.parliament.am/draft_docs4/1364_2011_tarekan_zekuyc.pdf): (Ներբեռնումը՝ 26.06.2024թ.):
[229] Նախագահը ներկայացրել է պաշտպանության նորանշանակ նախարարին և ՁՈՒ գլխավոր շտաբի պետին, «Հայ զինվոր», 5-11 հոկտեմբերի 2016թ., № 39, էջ 1-2:

իսկ ազգ-բանակը հենց ինքը՝ ազգն է»[230]: Ըստ «Ազգ-բանակ» հայեցակարգի՝ ազգ-բանակը այն հասարակությունն է, որը գործում է որպես մեկ միասնություն: Դա չի նշանակում հասարակության կամ պետության ռազմականացում, ճիշտ հակառակը, բանակի ժողովրդավարացում, լիարժեք ինտեգրում հասարակության, տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներ: Դա նշանակում է բանակի ստեղծածն ու ձևավորածը ծառայեցնել ողջ հասարակությանն ու պետությանը, իսկ քաղաքացիական կյանքի բոլոր ձեռքբերումներով ամրապնդել երկրի զինված ուժերը: Ազգ-բանակը այն վստահությունն է, որ հասարակությունն ունի դեպի իր զինված ուժերն ու իր սպայական անձնակազմը[231]: Ակնհայտ է, որ ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի հիմնադրույթների ձևով ներկայացրած «Ազգ-բանակ» հայեցակարգը միանգամայն պահանջված էր ու հույժ կարևորելի դրա կիրառումը ստեղծված պայմաններում, երբ թշնամաբար տրամադրված հարևան երկրներից Ադրբեջանը հանդես էր գալիս պատերազմի սպառնալիքներով և բացահայտ պատրաստվում էր ռազմական ագրեսիայի: Այդ հայեցակարգը, ըստ երևույթին, հայ իրականության մեջ ուներ խոր պատմական ու սովորութաավանդութային արմատներ, հայոց բազմադարյան ռազմարվեստը պահպանել է հաջողված փորձառության բազմաթիվ օրինակներ: 2016թ. գարնանային ռազմարշավում հայոց կանոնավոր բանակներին արդյունավետորեն սատարեց կամավորական շարժումը, խնդիրների կատարմանը ներգրավվեց նորօրյա աշխարհազորը: Հմուտ և ներդաշնակեցված գործեցին պետական բոլոր մարմինները, ինչը 2015թ. սեպտեմբերի 3-6-ը ՀՀ նախագահի գլխավորությամբ հաջողությամբ իրականացրած «Շանթ - 2015»՝ առաջին ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունների անմիջական արդյունքն էր: Զորավարժությունը, որի շտաբի ղեկավարն էր այդ ժամանակ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, առաջին անգամ Հայաստանի Հանրապետության պատմության մեջ գործադրվեց անհայտ ներածականներով իրավիճակային խաղարկում, երբ կառավարության անդամները, ՀՀ պետական և

---

[230] ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը կոլեգիայի նիստի ընթացքում, «Հայ զինվոր» (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ), 2-8 նոյեմբերի 2016 թ., № 43, էջ 2, ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016), «Հայկական բանակ», № 4, 2016, էջ 7:

[231] ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը կոլեգիայի նիստի ընթացքում, «Հայ զինվոր», 2-8 նոյեմբերի 2016 թ., № 43, էջ 2, ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016), «Հայկական բանակ», № 4, 2016, էջ 8:

տարածքային կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և զինված ուժերի ստորաբաժանումները ստանում էին իրավիճակը փոփոխող ներածականներ և խաղարկում էին իրենց գործողությունները՝ որոշումների նախապատրաստումից մինչև դրանց գործարկումը: Զորավարժության ընթացքում մշակվեց և քննարկվեց արտաքին քաղաքական փաստաթղթերի և նորմատիվ-իրավական ակտերի մի ամբողջություն: 2016թ. գարնանային ռազմարշավի ժամանակ զորավարժության ընթացքում ձևավորված հմտությունները հստակորեն կիրառվեցին իրական պատերազմական պայմաններում:

«Ազգ-բանակ» հայեցակարգի կիրառումը տեղին էր և արդիական: Հայեցակարգը ժամանակի մարտահրավերներին համապատասխան առաջարկում էր բանակը հանրայնացնելու, զուգահեռաբար ազգի գաղափարական և արժեքային համակարգը մարտունակ դարձնելու ծրագիր: «Ազգ-բանակ» հայեցակարգը հիմք դարձավ նաև պաշտպանական քաղաքականության ուղիների խորքային վերանայման համար: Պաշտպանական ոլորտում ներդրվող բարեփոխումները, 2016թ. հոկտեմբերից սկսած, ընթանում էին հինգ գերակա ուղղություններով՝ ա) Զինվորական մասնագիտության արժևորմամբ, բ) մարտական պատրաստության և պատրաստականության աստիճանի բարձրացմամբ, գ) սպառազինության և առաջնագծի կահավորման հարցերով ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմամբ, դ) ռազմաքաղաքական դիվանագիտության ուժեղացմամբ և արդարության և հանրային վստահության ամրապնդմամբ[232]:

Մեկ տարվա ընթացքում վերոնշյալ ուղղություններով բարեփոխումների արդյունքում որոշակի ձեռքբերումները և դրական տեղաշարժերը հուսադրող էին: Ամբողջությամբ վերանայվեց երկրի պաշտպանության և զինվորական ծառայությունը կարգավորող օրենսդրական դաշտը: Տարբեր ժամանակներում ընդունված և խմբագրված բազմաթիվ օրենքներ ի մի բերվեցին ոլորտը կարգավորող երկու հիմնական՝ «Պաշտպանության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքները: Դրանք ոլորտային օրենսդրությունը համապատասխանեցրեցին ՀՀ Սահմանադրության մեջ 2015-ին կատարված փոփոխություններին, ներդրեցին որոշումների նախապատրաստման և կայացման նոր ընթացակարգեր, վերանայեցին

[232] Տե՛ս Վիգեն Սարգսյանն ամփոփեց պաշտոնավարման առաջին տարին, «Հայ զինվոր», 4-10 հոկտեմբերի 2017թ., № 39, էջ 2:

ծառայության տարկետման խնդիրները, հնարավորություն ստեղծեցին ներդնել ծառայության առավել նպատակային, սոցիալական վերելակ հանդիսացող ժամկետային ծառայության հիբրիդային ծրագրեր, դրեցին զորահավաքային պատրաստության արմատական վերանայման հիմքը:

Օրենսդրական բարեփոխումներին զուգահեռ, հսկայածավալ աշխատանք տարվեց առաջնագծի արդիականացման ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝ սկսած 2017 թ. հունվարից, հաջողությամբ կասեցվեցին հակառակորդի ներթափանցման բոլոր փորձերը, իսկ նման մի քանի փորձ ավարտվեցին հակառակորդի մեծաթիվ կորուստներով:

Նոր զարկ տրվեց ռազմարդյունաբերական համալիրի ուժեղացմանը: Բազմաթիվ մասնավոր ընկերություններ ներգրավվեցին անօդաչու թռչող սարքերի, կապի արդիական միջոցների, ռադարների և այլ սարքավորումների ստեղծման և արտադրության աշխատանքներում: Հայաստանը սկսեց ընդունել լայն միջազգային մասնակցությամբ ռազմարդյունաբերական ոլորտի ամենամյա ցուցահանդեսներ:

Մի շարք պայմանագրեր կնքվեցին զինված ուժերը անհրաժեշտ սպառազինությամբ համալրելու ուղղությամբ: Հետևողականորեն ապահովվեց արդեն իսկ կնքված պայմանագրերի ժամանակին կատարումը:

Բազմաթիվ ծրագրեր իրականացվեցին ռազմական բժշկության և, ռազմական կրթության բնագավառներում, սպառազինության և ապրանքանյութական միջոցների մատակարարման կանոնակարգման, ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանն ուղղված ջանքերի, բանակի ֆինանսավորման համակարգի արդիականացման, կանխիկ շրջանառության նվազեցման և բացառման, հաշվետվողականության բարձրացման, ներքին աուդիտի ծառայության կայացման ուղղությամբ:

Ներդրվեցին այլընտրանքային ժամկետային «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը: Բանակ-հասարակություն կապն ամրապնդելու համար գործարկվեց «1-28» թեժ գիծը, որն օրական հարյուրավոր զանգերի էր պատասխանում, ներդրվեց «Դիտակետ» սոցիոլոգիական-վերլուծական ծրագիրը, որը լսելի էր դարձնում յուրաքանչյուր զորացրված ժամկետային զինծառայողի ձայնը: Այդ ծրագրերը, ինչպես նշել է նախագահ Սերժ Սարգսյանը, նպատակ ունեն ամրապնդելու բանակ-հասարակություն կապը, մատնանշելու և ախտորոշելու

հասարակության մեջ առկա խնդիրները հենց ծառայության ժամանակ, այլ ոչ թե ծառայությունն ավարտելուց հետո:

Սպաների բնակարանային ապահովման հարցը լուծվելու էր՝ ներդնելով սպայական անձնակազմի՝ բնակարանային ապահովման նոր՝ առավել արդյունավետ համակարգ, որով նախատեսվում էր յուրաքանչյուր տարի բնակարանով ապահովել ավելի քան 500 սպայական ընտանիք: 2017 թ. ընթացքում լուծվեց բոլոր զոհված զինծառայողների անօթևան ընտանիքների և 1-ին կարգի զինհաշմանդամ դարձածների բնակարանային բարելավման հարցը:

Պաշտպանության հանձնաժողովը ներկայացրել է բժշկական զննման նոր կարգ, որով վերացվում են տեղական զորակոչային հանձնաժողովները: «Պատիվ ունեմ» ծրագրով տարկետում է տրվում հավատարմագրված բուհերի արական սեռի ուսանողներին: Նրանք ծառայության ընթացքում իրենց հիմնական կրթությունը կստանան ռազմական ուսումնական հաստատություններում: Սովորելով բուհում՝ ծրագրում ընդգրկվածները երկու տարի, յուրաքանչյուր շաբաթ օր ռազմական համալսարանում կհաճախեին զինվորական պատրաստության դասընթացի: Դիպլոմից բացի՝ ուսանողը կստանար լեյտենանտի կոչում ու ամսական առնվազն 260.000 դրամ աշխատավարձով պայմանագիր կնքելով ՀՀ ՊՆ-ի հետ՝ ծառայության կանցներ սահմանագծում: Ծառայությունն ավարտելուց հետո մագիստրատուրա ընդունվելու դեպքում կփոխհատուցվեր նաև նրա մագիստրոսական կրթության վճարը:

«Ես եմ» ծրագրով նորակոչիկները ՊՆ-ի հետ կնքում են մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում եռամյա ծառայության պայմանագիր: Ծառայության ընթացքում զինծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում (35000 դրամ), իսկ ծառայության ավարտից հետո՝ միանվագ պատվավճար՝ 5 միլիոն դրամի չափով, որը կարող է օգտագործվել երեք՝ գյուղատնտեսական գործունեության, ուսման ծախսերի հատուցման, բնակարանի ձեռքբերման (նաև հիփոթեքային եղանակով) նպատակային ծրագրերում: Յուրաքանչյուր ամիս զինծառայողը մեկ շաբաթ արձակուրդ է ստանում:

2017թ. հունվարի 1-ից իր գործունեությունը սկսեց ՀՀ պաշտպանության նախարարության նախագահությամբ կազմակերպած «Զոհված և հաշմանդամություն ունեցող զինծառայողների հիմնադրամը»՝ 1000plus.am կայքը, որով բազմաթիվ հայրենակիցներ, համոզվելով հիմնադրամի կենսական անհրաժեշտության և թափանցիկության հարցում, ամենախոցելի խումբը

հանդիսացող՝ զոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերեցին[233]: Հիմնադրամի ստեղծմամբ լուծվեց զոհված և հաշմանդամություն ստացած զինծառայողների սոցիալական խնդիրների մի զգալի մասը՝ ապահովելով կայուն ֆինանսական աջակցություն իրենց կյանքն ու առողջությունը հայրենիքին նվիրած հայրենակիցների և նրանց հարազատների համար:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների օրակարգում էր լավագույն կադրերին զինվորական մասնագիտություններում ներգրավելու կարևորագույն խնդիրը: 2017թ. ապրիլին կայացած «Ազգ-բանակ» խորհրդաժողով-ցուցահանդեսին մասնակցեց 35.000 երիտասարդ: Այդ համաժողովից կյանք առած մի շարք ծրագրերից էր Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանը Հայաստանի լավագույն ավագ դպրոց դարձնելու նախաձեռնությունը: Շուրջ 8 ամսվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կարողացավ նախապատրաստել կրթահամալիրը անհրաժեշտ պայմաններով և հյուրընկալել 200 մոնթեականների՝ առաջին անգամ ունենալով մրցակցային ընդունելություն՝ յոթ դիմորդ յուրաքանչյուր տեղի համար: Վարժարանում գործարկվեց «Թումո» ՏՏ ուսումնական կենտրոնը[234]:

Մեկնարկեց Վ. Սարգսյանի անվան ռազմական և Մ. Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն համալսարանների արդիականացման ծրագիրը, մշակվեց «Թումո-բանակ» ծրագիրը, որով նախատեսվում էր ՏՏ ոլորտի պարտադիր կրթություն ապահովել բոլոր ժամկետային զինծառայողների համար:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում բացվեց զինհաշմանդամների համար տարածաշրջանում ամենաարդիական վերականգնողական կենտրոնը՝ «Զինվորի տունը»[235]: Այն դառնալու էր զինհաշմանդամների բուժման, սոցիալական պաշտպանության և վերաինտեգրման միասնական կենտրոն:

---

[233] **Թադևոսյան Ք.,** Միասնականության ևս մի հարթակ, «Հայ զինվոր», 27 դեկտեմբերի 2017թ. – 2 հունվարի 2018թ., № 51, էջ 6-7 (թվային տարբերակը տես https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Hay%20zinvor/2017/51.pdf)(ներբեռնումը՝ 19.06.2024թ.):

[234] Տե՛ս Վիգեն Սարգսյանն ամփոփեց պաշտոնավարման առաջին տարին, «Հայ զինվոր», 4-10 հոկտեմբերի, 2017թ., № 39, էջ 2:

[235] «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնը հիմնադրվել է 2018 թվականին՝ «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինհաշամնդամներին» բարեգործական հասարակական կազմակերպության (վերանվանվել է «Զինվորի տուն» բարեգործական ՀԿ) կողմից՝ ՊՆ և ԵՊԲՀ հետ գործակցությամբ, ՀՀ երրորդ նախագահի տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի աջակցությամբ: Բացմանը ներկա են գտնվել ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը և մի շարք բարերարներ:

2017 թվականը նշանավորվեց առաջնագծի՝ ժամանակակից միջոցներով հագեցմամբ և անվտանգության ապահովման պայմանների բարելավմամբ, զինված ուժերը արդի սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրմամբ, ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական ծրագրի հայցմամբ: 2017թ. մարտական ծառայությունում ներդրվել են ամբողջությամբ Հայաստանում մշակված և արտադրված միջոցներ, որոնք չափազանց կարևոր են մարտական հերթապահության արդյունավետ իրականացման համար: Այդ տեսակի մշակումներով ՀՀ ռազմական արդյունաբերությունը աստիճանաբար դառնում էր ՀՀ տնտեսության հիմնական շարժիչ ուժերից մեկը, որի արդյունավետ աշխատանքի արդյունքում միջազգային շուկաներում Հայաստանը զենք-զինամթերք ներկրող երկրից կվերածվեր արտահանողի: 2018թ. բյուջեի նախագծով նախատեսվում էր պաշտպանական ոլորտի ծախսերն ավելացնել 27 մլրդ դրամով, որի զգալի մասը ուղղվելու էր հիմնականում զենք-զինամթերքի և սպառազինության ձեռքբերմանը: 2017թ. վերջին ավարտվեց 200 մլն ԱՄՆ դոլարի վարկի պայմանագրով Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի զինված ուժերին սպառազինության մատակարարումը: Հայոց բանակը փայլուն դրսևորեց իրեն՝ հյուրընկալելով ՀԱՊԿ խոշորագույն զորավարժությունը՝ մասնակցելով երկկողմ և բազմակողմ վարժանքների դաշնակից ու գործընկեր երկրներում: Հայ զինվորը շարունակում էր բարձր պահել մեր երկրի դրոշը Կոսովոյում և Աֆղանստանում, Լիբանանում և Մալիում՝ մասնակցելով միջազգային խաղաղապահ առաքելություններին: 2017թ. ՀՀ պաշտպանական ոլորտի առանձնահատկություններից էր ռազմական գիտական հարաբերությունների զարգացումը: ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը պաշտոնական այցերով եղել է Ռուսաստանի Դաշնությունում, Իրանում, Վրաստանում, Հունաստանում, Կիպրոսում և Չինաստանում[236]: Հանդիպումներում քննարկվել են ռազմաքաղաքական երկխոսության և փոխգործակցության ծրագրեր, ստորագրվել են պաշտպանական ոլորտի համաձայնագրեր: 2016-2017թթ. իրականացված պաշտպանական ոլորտի բարեփոխումներն իրենց նպաստն են բերում երկրի անվտանգության ամրապնդման ու խաղաղության պահպանմանը:

[236] Տե՛ս Վիգեն Սարգսյանն ամփոփեց պաշտոնավարման առաջին տարին, «Հայ զինվոր», 4-10 հոկտեմբերի, 2017թ., № 39, էջ 2:

ՀՀ ԶՈՒ-ի կտրուկ արդիականացումը ժամանակի պահանջ էր, ինչը թելադրված էր ընթացիկ և ապագայի մարտահրավերներով: ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման նպատակով ՀՀ նախագահի ղեկավարությամբ ՀՀ պաշտպանության նախարարության հետևողական ջանքերով մշակվեց բանակի արդիականացման նոր՝ յոթնամյա (2018-2024 թթ.) ծրագիր:

2018թ. հունվարի 31-ին ՀՀ նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի հրավիրած Ազգային անվտանգության խորհրդի նիստում քննարկվել է ՀՀ զինված ուժերի 2018-2024 թթ. արդիականացման ծրագրի նախագիծը[237]: ՀՀ ԶՈՒ արդիականացման ծրագրի նախագծի մշակման հանձնարարականը նախագահը տվել էր 2017 թվականի հոկտեմբերի 24-ին: 2018-ի տարեսկզբին Հանրապետության նախագահի ներկայությամբ ծրագրի նախագիծը մանրամասն քննարկվել է նաև պաշտպանության նախարարությունում[238]:

Պարզաբանելով, որ 2018-2024 թվականների զարգացման ծրագիր կազմելու՝ պաշտպանության նախարարին տրված հանձնարարականը պայմանավորված էր տարածաշրջանում ձևավորվող նոր մարտահրավերներին արդյունավետորեն արձագանքելու նպատակով երկարաժամկետ զարգացման ծրագիր ունենալու անհրաժեշտությամբ, նախագահ Ս. Սարգսյանը, մասնավորապես, ասել է. «Տեսանք՝ հանրության մեջ հարցեր էին առաջանում, ոմանք ասում էին՝ իսկ ինչո՞ւ մինչև հիմա պաշտպանության նախարարությունը կամ զինված ուժերը չունեին զարգացման ծրագրեր, երկարաժամկետ ծրագրեր: Իհարկե, ունեին, միշտ էլ եղել են ծրագրեր, բայց նախորդ և այս ծրագրի տարբերությունն այն է, որ նախորդ ծրագրերը շատ դեպքերում կարճաժամկետ էին, իսկ այն ծրագրերը, որոնք կոչվում էին երկարաժամկետ, ավելի շատ նման էին ցանկությունների, տեսլականի, գաղափարների: Այս ծրագիրը տարբերվում է մնացած բոլոր ծրագրերից, որոնք կարելի էր կոչել երկարաժամկետ, նրանով, որ սա թիրախավորված ծրագիր է. կա որոշակիություն՝ չափելիություն, կան ժամկետներ, կան հաշվարկված որակական և ֆինանսական ցուցանիշներ: Պաշտպանության նախարարը և գլխավոր շտաբի պետը, իհարկե, մինչ այս ինձ զեկուցել են ծրագրի մասին, այնուհետև ես հնարավորություն եմ ունեցել

---

237 https://www.president.am/hy/press-release/item/2018/01/31/President-Serzh-Sargsyan-convened-National-Security-Council-meeting/(ներբեռնումը՝ 19.06.2024 թ.):

238 Նախագահին զեկուցվել է ԶՈՒ արդիականացման յոթնամյա ծրագրի նախագիծը, «Հայ զինվոր», 17-23 հունվարի, 2018 թ., № 2, էջ 2:

պաշտպանության նախարարության ղեկավար կազմի հետ քննարկելու այս ծրագիրը: Այսօր, իմ կարծիքով, առկա է ծրագիր, որը լավ մշակված է, թիրախներ կան, կան ցուցանիշներ, և որ ամենակարևորն է՝ կան նաև ֆինանսական հաշվարկներ: Ասածս չի նշանակում, որ հիմա մենք չենք կարող այս ծրագրի մեջ փոփոխություններ մտցնել. իհարկե, կարող ենք, դրա համար էլ ներկայացված է անվտանգության խորհրդի հաստատմանը, այնուհետև արդեն ընթացք կտանք»,-ասել է Հանրապետության նախագահը:

Անվտանգության խորհուրդը լսելով 2018-2024 թվականների զարգացման ծրագրի մասին պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի զեկուցումը և քննարկման արդյունքում հավանություն տալով ներկայացված մոտեցումներին՝ հանձնարարել է կառավարությանը՝ սահմանված կարգով ընթացքավորել դրանք ու ներկայացնել նախագահի հաստատմանը: Քննարկումներից և լրամշակումներից հետո ծրագիրը հաստատվեց 2018թ. փետրվարին:

ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանի ելույթը ՀՀ ԶՈՒ ղեկավար կազմի օպերատիվ հավաքի ժամանակ պատկերացում է տալիս նրա ղեկավարությամբ ԶՈՒ-ի զարգացման ու հաջողությունների, ինչպես նաև աշխարհաքաղաքական զարգացումների համապատկերում առաջնահերթ խնդիրների մասին, որոնց լուծումը, անշուշտ, կապահովեր ՀՀ-ի և Արցախի Հանրապետության պաշտպանունակության և անվտանգության լիարժեք մակարդակ, եթե երկու հայկական հանրապետությունները չստանային թիկունքին հասցված դավադիր հարված այսպես կոչված «թավշյա հեղափոխության» շղարշով:

ՀՀ երրորդ նախագահի գործելաոճին հատուկ էին օպերատիվ հավաքներում, ավանդական հանդիպումներում երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը գեներալների, սպաների, քաղաքացիական հատուկ ծառայողների առջև դրվող խնդիրների պարզաբանումը, ինչպես նաև միասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումը, համատեղ աշխատանքի արդյունավետության ստուգումը:

Նրա իսկ խոսքերով. «Տարիներ շարունակ մեր զինված ուժերի առանցքում դրել ենք անհատի գիտելիքն ու ունակությունները բազմապատկելու խնդիրը: Մեր նախընտրությունը մշտապես եղել է ոչ միայն քանակական, այլև որակական առավելությունը: Այս հավաքները եղել են որակական առավելության հասնելու

ուղիների շահագրգիռ քննարկումների դրսևորումներից մեկը»[239], ապագա ծրագրերի շուրջ միասնական պատկերացումներ, տեսակետներ և մոտեցումներ ձևավորելու նպատակով մտքերի կփոխանակման միջոց:

ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը առաջնահերթ խնդիր է համարել պաշտպանության քաղաքականության համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթներով պայմանավորված բարեփոխումներին, մասնավորապես՝ փոփոխության էր ենթարկվում Հայաստանի զինված ուժերի կառավարման ուղղահայացը՝ ստանալով վարչապետ-անվտանգության խորհուրդ-կառավարություն-պաշտպանության նախարար-գլխավոր շտաբի պետ տեսքը: Զինված ուժերի քաղաքացիական կառավարումը և վերահսկումը ևս պետք է հարստացվեն նոր բովանդակությամբ:

Դա ամենևին չէր նշանակում, որ Հայաստանի Հանրապետության նախագահը չի ունենալու դերակատարություն պետության կարևոր ինստիտուտներից մեկի՝ Զինված ուժերի կյանքում: Վարչապետի առաջարկությամբ նա նշանակելու է Հայաստանի զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձին՝ գլխավոր շտաբի պետին, այլ պաշտոնատար անձանց, ինչպես նաև շնորհելու է բարձրագույն զինվորական կոչումները:

Արձանագրելով, որ «արդեն իսկ զգալի աշխատանքներ են իրականացվել պաշտպանության ոլորտի օրենսդրությունը վերանայելու ուղղությամբ», ՀՀ երրորդ նախագահը փաստել է այդ աշխատանքների շարունակական բնույթ կրելու մասին: Առաջադրված խնդիրների լուծման հաջողությունը պայմանավորվում էր պաշտպանության բնագավառի պաշտոնյաների ճկունությամբ՝ ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության իրենց գործընկերների հետ համագործակցելու առումով: Նոր պայմաններում ենթաօրենսդրական ակտերի մշակման և համապատասխանեցման գործում կարևոր պահանջ է դառնում ոչ միայն լավ օրենքներ ու ենթաօրենսդրական ակտեր գրելը, այլև դրանք լավագույնս իրականացնելը՝ բացառելով այդ երկուսի միջև որևէ խզում կամ, առավել ևս, թերացում:

Պետական և ռազմական կառավարման մարմինների զորահավաքային պատրաստության մակարդակի գնահատման, ինչպես նաև պետական տարբեր

---

[239] ՀՀ զինված ուժերի ղեկավար կազմի ամենամյա օպերատիվ հավաք. նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԶՈՒ ղեկավար կազմի օպերատիվ հավաքի ժամանակ, «Հայ զինվոր», 21 - 27 մարտի 2018թ., № 11, էջ 2:

հաստատությունների փոխգործակցության և ներդաշնակության բարձրացման նպատակով, նշված փոփոխությունների և Զինված ուժերի կառուցվածքային բարեփոխումների համատեքստում, 2018թ. աշնանը նախատեսված «Ծանթ» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունը ներառելու էր ամենատարբեր ոլորտներին վերաբերող ներածականներ՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր նախարարության՝ փորձարկելու սեփական որոշումների կայացման մեխանիզմները և կատարելագործելու դրանք:

ՀՀ երրորդ նախագահը հիմնավոր պատճառներ է նշել բանակը Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման կարևորագույն գործոն համարելու համար: «Բաքվից անընդհատ հեղեղվող սպառնալիքների պարագայում Զինված ուժերը մեր հենարանն ու կռվանն են,- համոզված էր Ս. Սարգսյանը,- 2016 թվականի ապրիլյան գործողությունները հակառակորդի կողմից ուժերի հարաբերակցությունը ստուգելու խոշոր փորձ էր: Նրանք, իհարկե, այդ փորձը տանուլ տվեցին»[240]:

ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարի ռազմավարությունը հետևյալն էր. «պահպանել դիրքավորման կոնֆիգուրացիան: Ավելին, մենք պետք է հետևողական աշխատենք և մշտապես պատրաստ լինենք հակադարձելու ուժերի հաշվեկշիռը խախտելու հակառակորդի բոլոր՝ խոշոր և մանր փորձերին: Մենք բազմիցս ցույց ենք տվել հակառակորդին և պետք եղած դեպքում կրկին ցույց կտանք ռազմական ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու անհեռանկարայնությունը: Եվ ամեն անգամ որքան գրագետ, որքան ցավալի պատասխան կարողանանք նրանց տալ, այնքանով մենք այդ մտայնությունը նրանց գիտակցության մեջ կամրապնդենք: Մեր հետևողական աշխատանքի հիմնական նպատակն է լինելու հակառակորդի մեջ հենց այդ գիտակցության ամրապնդումը»[241]:

Դրան հասնելու ճանապարհին ամենակարևոր պրակտիկ քայլերից մեկը, ըստ ՀՀ երրորդ նախագահի, Զինված ուժերի արդիականացման յոթնամյա ծրագրի բարեհաջող իրականացումն է. «Առաջին հերթին, մենք բանակը դարձրել ենք առավելագույնս թափանցիկ և հասկանալի մեր հանրության համար: Դա բնավ չի թուլացրել մեր Զինված ուժերը, այլ ընդհակառակը՝ ամրապնդել է բանակ-հասարակություն կապը: Ավելին, բանակի վրա ծախսվող ռեսուրսները գնալով դառնում են ավելի հասանելի և օգտավետ մեր հասարակության լայն

[240] Նույն տեղում:
[241] Նույն տեղում:

շերտերի համար: Դա նաև արտահայտվում է կոնկրետ ծրագրերի միջոցով, որոնց անուններն արդեն, իհարկե, քաջ հայտնի են բոլորին:

Արդեն իսկ պատրաստ է գալիք յոթ տարիների բարեփոխումների ճանապարհային քարտեզը: Ցանկացած պլանավորում և վերահսկողություն պաշտպանության նախարարությունում և գլխավոր շտաբում իրականացվում է ըստ յոթնամյա ծրագրի՝ լինի դա բյուջետային պլանավորում, պաշարների, մարդկային ռեսուրսների հաշվառում, թե այլ բան»[242]:

Կառավարման համակարգի արդիականացումը, կենտրոնական ապարատի կառուցվածքային փոփոխությունները ՀՀ երրորդ նախագահը համարում էր ոչ թե կրճատումները, այլ գործառույթների հստակեցումը, ինչպես նաև խնդիրների առավել արդյունավետ լուծումը, Զինված ուժերում ավտոմատ կառավարման համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների ավելի լայն ներդրումը՝ որպես աշխատանքի պարտադիր պայման:

Փաստելով, որ պաշտպանության նախարարությունը խոշորագույն սպառող և մեծածավալ գնումներ իրականացնող մարմին է, ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը պահանջում էր գնումների գործընթացում հասնել առավելագույն թափանցիկության, ազատ և արդար մրցակցության: Ապրանքների ու ծառայությունների որակի բարձրացման միջոց էր համարվում ճիշտ տեխնիկական բնութագրեր կազմելու պատասխանատու ստորաբաժանումների ունակությունների զարգացումը: Մյուս եղանակները գնումներ իրականացնելիս միջնորդ կազմակերպությունների ծառայություններից հնարավորինս խուսափելն էր, ինչպես նաև մրցույթների կազմակերպիչների և մասնակիցների տարբեր տեսակի անօրինական գործողությունները, այսպես ասած՝ հնարամտությունները բացառելը:

Սահմանելով, որ «ամեն մի դրամի կորուստ կամ չարաշահում ուղիղ հարված է ոչ միայն բանակի հեղինակությանը, այլև մարտունակությանը», ՀՀ երրորդ նախագահը կոռուպցիայի դեմ հետևողական և անհանդուրժողական պայքարն այսուհետ հռչակում էր յուրաքանչյուր պետի ծառայության անբաժանելի մասը: «Այս գործընթացը երբևէ հնարավոր կլինի հարյուր տոկոսով վերահսկել, եթե յուրաքանչյուր զինծառայող հոգու խորքում ունենա մի յուրատեսակ «տաբու»՝ բանակի և պետության միջոցների յուրացումն աններելի է, դավաճանությանը հավասար հանցագործություն,- հատկանշում էր ՀՀ ԶՈՒ

[242] Նույն տեղում, էջ 2-3:

գերագույն գլխավոր հրամանատարը,- ուզում եմ, որպեսզի մեկ անգամ ևս բոլորի համար շատ հստակ լինի՝ մեր զինվորների, կրտսեր սպայակազմի կողմից անվստահությունը ղեկավար կազմի և ընդհանրապես մեր բանակի և պետության հանդեպ առաջին հերթին դրսևորվում է հենց կոռուպցիոն երևույթներով: Սա բոլորիս համար պետք է շատ հասկանալի լինի: Բայց հասկանալի լինելը շատ քիչ է, բոլորս պետք է պայքարենք այս երևույթի դեմ: Սա դարձել է չարիք՝ չարիք պետության համար, չարիք բանակի համար»[243]:

Նշելով, որ սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերումն ընթանում է ըստ պետական ծրագրի, ՀՀ երրորդ նախագահը այս հարցում ՀՀ-ի հիմնական դաշնակիցը և գործընկերը համարում էր Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես աշխարհում սպառազինության խոշորագույն մատակարարներից մեկը, և որի հետ ՀՀ-ն ունի հստակ պայմանավորվածություններ: «Դրանք մեզ հնարավորություն են տալիս ամենամրցակցային պայմաններով ձեռք բերելու արդիական սպառազինություն,-փաստում էր Ս. Սարգսյանը,- այլ հնարավորություններ մենք, իհարկե, նույնպես օգտագործելու ենք՝ հաշվի առնելով տարբեր երկրների հետ համագործակցության մեր հեռանկարները»[244]:

Սպառազինությունների մրցավազքում ՀՀ երրորդ նախագահը վարում էր ոչ թե քանակին քանակով հակադարձելու քաղաքականություն, այլ շեշտը դնում էր սպառազինության արդյունավետության վրա: Նրա հավաստիացմամբ՝ «ձեռքի տակ ունենք և մշտապես ունենալու ենք անհրաժեշտ միջոցներ անհրաժեշտ պահին հակառակորդին զսպելու համար: Երբ մենք խոսում ենք զսպման մասին, բնական է, որ դա չի նշանակում հարձակումը կասեցնել, դա ավելին է նշանակում՝ ամեն պահի հասցնել այնպիսի հակահարձակողական հարվածներ, որպեսզի նրանք այլևս ցանկություն չունենան խախտելու դեռևս 1994-1995թթ. ստորագրած պայմանագրերի պարտավորություններն ու դրույթները»[245]:

ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը կարևորում էր սպառազինության և ռազմական տեխնիկայի նկատմամբ յուրաքանչյուր զինծառայողի գիտակցական վերաբերմունքը բարձրացնելը. «Նա իր զենքը կամ ռազմական տեխնիկան պետք է կարողանա գործածել ոչ միայն հմտությամբ և

---

243 https://www.serzhsargsyan.com/hy/article/serzh-sargsyan-speech-delivered-at-army-leaderships-operative-rally (ներբեռնումը՝ 23.06.2024թ.):

244 ՀՀ զինված ուժերի ղեկավար կազմի ամենամյա օպերատիվ հավաք. նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԶՈՒ ղեկավար կազմի օպերատիվ հավաքի ժամանակ, «Հայ զինվոր», 21 - 27 մարտի 2018թ., № 11, էջ 3:

245 Նույն տեղում:

պարտադիր կանոնների պահպանմամբ, այլև հոգածությամբ և խնամքով: Յուրաքանչյուր զինվորական պետք է քաջ գիտակցի, որ մարտական խնդիրը կատարելիս՝ զենքն ամենահավատարիմ զինակիցն է»[246]:

Հայաստանի կառավարությունն իր գործունեության առաջնահերթություններից համարելով հայրենական ռազմարդյունաբերությունը՝ ծրագրեր է մշակել դրա արտադրությունը մրցունակ դարձնելու համար: Այդ նպատակով ստեղծվելու էին արտահանման համար որակական և գնային առումներով մատչելի նմուշներ արտադրելու նախադրյալներ: Գերնպատակը ռազմական արդյունաբերությունը ոչ միայն մեր Զինված ուժերի կարևորագույն մատակարարներից, այլև երկրի տնտեսության կարևոր շարժիչ ուժերից մեկը դարձնելն էր: ՀՀ երրորդ նախագահը կարևորում էր նորը կառուցելու և ունեցած ներուժը իրացնելու ոգևորությամբ տոգորված երիտասարդ գիտնականների ներգրավումը, ռազմարդյունաբերության ոլորտում «գիտական վաշտ» ձևավորելու գաղափարի իրականացումը, նաև ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցությունը, համատեղ նախագծեր ու միասնական արտադրություն ստեղծելու ուղղությամբ աշխատանքները:

Ռազմադիվանագիտական կապերը խորացնելու և դաշնակցային պարտավորություններին հավատարիմ մնալու, խաղաղապահ առաքելությանը մասնակցելու միջոցներով հետևողականորեն բարձրացվում էր հայոց բանակի ու պետության միջազգային հեղինակությունը: Դրա շնորհիվ ՀՀ-ն ոչ միայն ընդարձակում էր ռազմական ոլորտում միջազգային համագործակցության հորիզոնները, այլև ձեռք էր բերում նոր բարեկամներ և գործընկերներ:

Օգտագործվում էին ռազմական կրթության ոլորտում ստեղծված լայն հնարավորությունները: ՀՀ երիտասարդ քաղաքացիները հնարավորություն ունեն կրթություն ստանալու ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի, Չինաստանի, Միացյալ Նահանգների, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի և այլ երկրների ռազմաուսումնական հաստատություններում: Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանն ապահովում է առաջնակարգ պայմաններ և բարձրակարգ դասախոսական կազմ: Նոր սերնդի

---

246 https://www.serzhsargsyan.com/hy/article/serzh-sargsyan-speech-delivered-at-army-leaderships-operative-rally (ներբեռնումը՝ 23.06.2024թ.): Այս մտքի խորքային բովանդակությունն ավելի ակնհայտ է դառնում 2020-2023թթ. ամենաթողության պայմաններում ՀՀ ԶՈՒ սպառազինության և մարտական տեխնիկայի և, ընդհանրապես, բանակային ամբողջ գույքի նկատմամբ դատապարտելի վերաբերմունքի հետաքննության և մեղավորներին քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու գործընթացի իրական արդյունքների հանրային պահանջը:

ռազմահայրենասիրական դաստիարակությունը համարվել է ապագա ունենալու կարևոր երաշխիք:

Զինված ուժերում առկա սոցիալական խնդիրները ոչ միայն հասարակության, այլև կառավարության ուշադրության կենտրոնում են: Ռազմաքաղաքական ղեկավարության պարտքն էր համակարգային մոտեցում ցուցաբերել զինհաշմանդամներին և զոհվածների ընտանիքներին: Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը գործում էր առավելագույնս թափանցիկ և անվտանգության ոլորտում պետական, մասնավոր և հասարակական հատվածների համագործակցության լավ օրինակ էր: ՀՀ երրորդ նախագահը կարծում էր, որ ժամանակի հետ կաճեն նաև կամավոր վճարումները: Նա բարձր էր գնահատում ինչպես այդ հիմնադրամի ստեղծման գաղափարը, այնպես էլ հիմնադրամի աշխատանքները, որոնք ինչ-որ չափով մեղմել են եղած խնդիրը: Ստեղծվում էին նախադրյալներ տարիների ընթացքում հիմնադրամին այնպիսի հնարավորություններով օժտելը, որոնք հնարավորություն կտային ավելի խորացնելու մեկնարկած աշխատանքները:

Իրականացվում էին բնակարանային ապահովության հատուկ ծրագրեր սպաների բնակարանային պայմանների բարելավման համար: Ըստ ծրագրի՝ սպան գրանցումից հետո արդեն երրորդ տարում բնակարան կստանար: Դրա համար նախատեսվում էր տրամադրել հիպոթեքային վարկ, և 20 տարիների ընթացքում սպան մարելու է միայն մայր գումարը, այն էլ՝ որոշակի զեղչով:

Հաղթանակած և բարձր համբավ ունեցող բանակին վայել էր միայն բարձր կարգապահությունը: Բանակն իսկապես ՀՀ ժողովրդի ամենօրյա ուշադրության կենտրոնում էր, ուստի բոլորի կատարած ահռելի աշխատանքի վրա ստվեր գցող որոշ ամոթալի դեպքերն արժանանում էին զգայուն հասարակական արձագանքի: Մարտական պատրաստության գործընթացը և պարապմունքների հստակ ժամանակացույցը կարգապահության ամրապնդման, բռնարարքների բացառման, արտակարգ դեպքերի նվազեցման ամենաարդյունավետ ճանապարհն էին: Ակնհայտ է, որ մեր կորուստների հիմնական մասը տեղի էր ունենում մարտական հերթապահության կանոնների խախտման պարագայում, ինչը, իհարկե, անթույլատրելի էր: «Որքան էլ բարելավենք ցուցանիշները, այս ուղղությամբ մեր աշխատանքների գերազանց արդյունքը միայն ու միայն «զրո» ցուցանիշը պետք է լինի,- հատկանշել է ՀՀ ՁՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը,- այսինքն՝ ոչ մի

զոհ բանակում: Միայն այդ ժամանակ կարելի կլինի խոսել լիարժեք զոհ լինելու մասին»[247]:

Նա պահանջում էր ինքնակատարելագործումը և մեթոդական պատրաստությունը դարձնել ամենօրյա ծառայության անբաժան բաղկացուցիչը, ընթերցանությամբ ձեռք բերել տեսական գիտելիքներ և կիրառել գործնականում:

ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատարը ժամանակակից հայ զինվորականի վարքականոնի դրույթներն է ձևակերպել. «Հայաստանի զինվորականը պետք է մշտապես կատարելագործվի և զարգանա: Ուսուցման և աշխատանքի ժամանակ ստացած գիտելիքները արագ կորչում են, եթե չեն ամրապնդվում ինքնապատրաստությամբ»: Բոլորից՝ թե՛ ղեկավարներից և թե՛ ենթականերից որևէ բան սովորելու համար ոչ մի առիթ բաց չթողնելը, ինքզինքը և կողքինների նկատմամբ խստապահանջ լինելը (որի հիմքում անձնական օրինակը պետք է լինի), սեփական սխալներն առաջինը տեսնելու, դրանք չկրկնելու համար անհրաժեշտ հետևություններ անելը զինվորականի պարտքն են:

Ուշագրավ է ելույթի եզրափակիչ մասը՝ ինչպես ընթացիկ վիճակը բնութագրելու, այնպես էլ 2018 թ. պատուհասած «հայաստանյան «գարնան» աղետալի հետևանքները հասկանալու համար: «Անցած տարիների ընթացքում ես մշտապես եղել եմ ձեր կողքին,- փաստում է ՀՀ երրորդ նախագահը,- մենք միասին շատ երկար ճանապարհ ենք անցել: Այդ ճանապարհի ընթացքում մենք ունեցել ենք բերկրանքի և ափսոսանքի պահեր: Մենք ունեցել ենք մեծ ձեռքբերումներ, ունեցել ենք կորուստներ, բայց եկել, հասել ենք մի հանգրվանի, երբ մեր պատասխանատվությունը մեր անցած ճանապարհի նկատմամբ կրկնապատկվում է: Եվ որպեսզի այս պատասխանատվությունը մենք կարողանանք պատվով կատարել, ես մշտապես, ավելի հաճախ լինելու եմ ձեր կողքին և ավելի մեծ օժանդակություն եմ ցուցաբերելու: Բայց հասկանալի է, որ առաջին պատասխանատուն դուք եք, և ցանկացած օգնություն ու օժանդակություն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ կոնկրետ մարդը, կոնկրետ պետական պաշտոնյան ձգտում ունի հասնելու եթե ոչ կատարելության, ապա դրան մոտ աստիճանի: Եվ ես համոզված եմ, որ այս դահլիճում նստած մարդկանց մեծ մասը հենց այդպիսին են և այդպես են մտածում: Անկեղծ եմ ասում, ես վստահում և հավատում եմ ձեզ: Մենք ուղղակի պարտավոր ենք ձեռնարկել քայլեր, որոնք

[247] ՀՀ զինված ուժերի ղեկավար կազմի ամենամյա օպերատիվ հավաք. նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԶՈՒ ղեկավար կազմի օպերատիվ հավաքի ժամանակ, «Հայ զինվոր», 21 - 27 մարտի 2018թ., № 11, էջ 3:

կբարձրացնեն մեր ժողովրդի անվտանգության աստիճանը: Սա՛ է մեր գերագույն խնդիրը»[248]:

Բոլոր ծրագրերը, նախատեսված քայլերը և առաջադրված խնդիրներն ու նպատակները խափանվեցին հաշված օրեր անց պատուհասած՝ անունով «թավշյա», բայց էությամբ ու հետևանքներով՝ ժողովրդի համար արյունալի, իսկ հայկական պետականության համար մահացու վտանգներ պարունակող «հեղափոխությամբ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, փաստական հիմքի և պատմության օրինաչափությունների հաշվառմամբ փորձեցինք ներկայացնել ՀՀ երրորդ նախագահ, ՀՀ ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Ս. Սարգսյանի ավանդը ՀՀ ԶՈՒ կայացման, բարեփոխումների միջոցով զարգացման գործում՝ հատկանշելով Արցախում ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի, ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնավարման շրջանները և Հայաստանի Հանրապետության նախագահության երկու ժամանակաշրջանները: Սակայն, ակներև է, որ ՀՀ-ի և Արցախի Հանրապետության պաշտպանունակության բարձրացման, պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործման ուղղությամբ նրա ջանքերը չեն դադարել ՀՀ պետական անվտանգության վարչության պետի, ապա ազգային անվտանգության նախարարի (1995-1996թթ.), ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարի (1996-1999թթ.), ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի (1999-2000թթ.), ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի (1999-2007թթ.), ՀՀ վարչապետի (2007-2008թթ.) պատասխանատու պաշտոններում:

Այստեղ տեղին է հատկանշել այն անաչառ կարծիքները, որ արտահայտել են Ս.Սարգսյանի աշխատանքային գործունեության ընթացքում նրա հետ գրեթե ամենօրյա շփում ունեցած՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որին Սերժ Սարգսյանի աշխատանքը գնահատելու համար կողմնապահության մեջ մեղադրելը թեթևամտություն կլիներ, ՀՀ բանակաշինության գործում իր անուրանալի ավանդն ունեցած ՀՀ առաջին պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը:

---

[248] Նույն տեղում:

Լևոն Տեր-Պետրոսյան. «(Սերժ Սարգսյանը)… շատ լավ նախարար է եղել բոլոր իր զբաղեցրած պաշտոններում՝ և՛ անվտանգության, և՛ բանակի, և՛ ոստիկանության մարմիններում: Այստեղ ոչ մի վերապահում ես չեմ կարող անել՝ այդ տարիներին կատարած նրա աշխատանքի համար»[249]:

Վազգեն Սարգսյան. «Սե՛րժ ջան, քո մասին պետք է միանշանակ ասել՝ դու եղել ես Ղարաբաղի բանակի, Հայաստանի բանակի արմատում կանգնած մարդ, որն իր ձեռքերով, իր ներդրումով, իր գիտելիքներով, իր համբերությամբ, համբերատարությամբ, վերջապես՝ իր տաղանդով շատ մեծ, շատ, չափազանց մեծ, անգնահատելի մեծ բան ես արել մեր բանակի ձևավորման համար: Եվ դու այն նախարարն ես, որը բանակը հասցրեց այն վիճակին, որից հետո արդեն նախարարի անձը կարևոր չի: Դու կարողացար ստեղծել այդ սիստեմը, կարողացար ավարտին հասցնել ցիկլը, դու կարողացար ստեղծել հրաշալի թիմ, և էս օղակում, էս մեխանիզմի մեջ բոլոր ատամնանիվներն իրենց տեղում շատ լավ աշխատում են, և դա քո ամենամեծ լուման ա: Ուզում եմ քեզանից խորը-խորը շնորհակալություն հայտնել՝ որպես ընկեր: Մենք իրար հետ տեսել ենք շատ դաժան պարտություններ, մենք իրար հետ տարել ենք նաև շատ մեծ հաղթություններ: Դու և՛ որպես նախարար, և՛ որպես ընկեր կյանքի բոլոր դրսևորումներում եղել ես ծայրահեղորեն ազնիվ, պարկեշտ, և էդ քո բնավորության ամենամեծ գծերն են, որը քեզ հավասարաչափ սիրելի են դարձնում և՛ քո ընկերներին, և՛ քո զինակիցներին, և՛ քո ենթականերին»[250]: Որոշակիորեն ՀՀ զինված ուժերում կազմակերպական և զուտ ռազմական անվիճարկելի մի շարք հաջողություններ, որոնք դարձել են Հայաստանի երրորդ հանրապետության, պետականաշինության պատմության կարևոր մասը, կապված են Սերժ Սարգսյանի անվան և նրա գործունեության հետ: Մասնավորապես, Սերժ Սարգսյան - ռազմական գործչի և հմուտ կազմակերպչի ավանդը անուրանալի է Արցախի Հանրապետության ինքնապաշտպանության ուժերի ստեղծման և տեղի ազգաբնակչության պաշտպանության ու անվտանգության ապահովման, մի շարք ռազմական օպերացիաների պլանավորման, համակողմանի ապահովման կազմակերպման ու քաղաքական պատասխանատվության ստանձնման, որպես ՀՀ պաշտպանության նախարար՝ 1993-1994թթ. ձմեռային ռազմարշավում Ադրբեջանի լայնածավալ հարձակողական գործողությունների, 1994թ. գարնանային ռազմարշավում հիմնականում ՊԲ հակահարձակումների, ինչպես

[249] **Տեր-Պետրոսյան Լ.,** Վերադարձ: Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, էջ 65:
[250] https://www.facebook.com/watch/?v=318865805500384 (ներբեռնումը՝ 26.06.2024 թ.):

նաև ռազմադիվանագիտական միջոցներով թշնամուն զինադադար պարտադրելու, ՀՀ պետականաշինության, հատկապես ուժային կառույցների կայացման ու զարգացման, ՀՀ զինված ուժերում բազմաթիվ բարեփոխումների, պաշտպանական-անվտանգային կարևոր փաստաթղթերի մշակմանև գործողության մեջ դնելու, ՀՀ ռազմական քաղաքականության բարելավման, ՀՀ ԶՈՒ շինարարության ռազմավարության ու մարտավարության կատարելագործման և բազմաթիվ այլ համապետական ու գերատեսչական ձեռնարկումներում:

Անկասկած, անհնարին է մի հոդվածի շրջանակներում սպառել ամբողջ նյութը, ինչպես նաև ներկայացնել ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի մեծածավալ ու վաստակաշատ գործունեությունը, անդրադառնալ նաև թերացումներին, բացթողումներին, որոնք անխուսափելի են ցանկացած աշխատանքում, այդուհանդերձ, անառարկելի է, որ վերջիններս չեն կարող նսեմացնել փաստարկված ակներև ձեռքբերումներն ու հաջողությունները:

Իսկ թե ինչպես մեծագույն դժվարություններով, զոհողություններով, հայ ժողովրդի բազմաթիվ նվիրյալ զավակների՝ բարձրագույն պաշտոնյաներից մինչև զինվորներ, ջանքերով քայլ առ քայլ ստեղծված, ամրապնդված, կայացած, պատերազմի բովում թրծված և փառավոր հաղթանակներ կերտած Հայկական բանակը 2018 թվականից հետո քայլ առ քայլ թուլացվեց, միտումնավոր վարկաբեկվեց և որպես այդ ամենի անխուսափելի հետևանք՝ պարտվեց նույն այն թշնամուն, որին ավելի դժվարին պայմաններում հաղթել էր, պահանջված է ներկայացնել հետագա հետազոտությունների արդյունքում՝ համակողմանի վերլուծությամբ և նույնքան անկողմնակալ ու փաստարկված պատմագիտական անդրադարձով:

Միեր Հարությունյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի մայոր
«Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար